

2551

#### Դ. Ա. Բ. Վ. Կ. Ա. ԱԳԻՏ-ԲՈՒԺՆԻ ԴՐԱՄԱՐԻԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆԻ

Պռվետացներ բայց լեռերներ, միացե՛ք

## Ա.ԿՈՄԵՅԵՎ

# ЕЛРД ГРУЗИ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԵՑԲՈՒԹՅՈՒՆ

„ԿՈՄՈՒՆԻՏԵՍ“-Ի ԳՐԱԴԱՐԱՆ № 5

Գործ. Ա. ԽՈՎՃԵՐՅԱՆ

300  
2669-444

$g(4)$

4 -

9147  
- 18

2011-071 : 24 JAN 2006

Հ. 4. 4. 4. 4. ԱԳԻՏ-ԲՈԺԵՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

300

2669-4U

Պայմանագիրը բոլոր յեւկրների, միացե՛մ.

## Լ. ԿՈՄԵՆԵՎ.

ԽՈՐՅՈՒԹԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵ  
Յ Ե Վ  
ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆՆԸ

Թարգմ. Ա. ԽՈՎՏԵԱ.ՐՅԱՆ



כתרת נ.ב.ר

1925

## ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՑՈՒՄԸ

Վերջերս կառավարական մի շարք մարմիններ, ինչպես և հատուկ խորհրդակցություններ ու հանձնաժողովներ, գյուղացիների մասնակցությամբ, զբաղված եյին մի շարք միջոցների մշակումով, վորոնց նպատակն եր նպաստել գյուղացիական տնտեսության բարձրացմանն ու ամրացմանը։ Այդ միջոցները վերաբերում են գյուղացիական լայն մասսային հետաքրքրող բոլոր հարցերին և հերթի յեն գնում ինչպես հողագործության, հողաշինարարության և վարկային սիստեմի, այնպես ել վարձակալության (արեգա), վարձու աշխատանքի, տնտեսագործական արդյունաբերության, աշկերտության և այլ հարցերը։

Բոլոր այս միջոցները կրում են միանգամայն գործնական բնույթ, բայց այդ բոլորի գումարն անկասկած Խորհրդային իշխանության վերջին ժամանակների կարևորագույն քաղաքական ակտերից մեկն ե։ Դա քաղաքական ակտ ե նախ և առաջ այն պատճառով, վոր քաղաքականությունը դասակարգերի միջև յեղած հարաբերություններն են, և այն միջոցները, վոր ձեռք ե առնում Խորհրդային իշխանությունը բանվոր դասակարգի և գյուղացիության փոխհարաբերությունները կանոնավորելու համար, անշուշտ կարևորագույն քաղաքական ակտ ե։ Յերկրորդ, այն պատճառով, վոր այն միջոցները, վոր յես պատիվ պիտի ունենամ առաջարկելու ձեզ ի հաստատություն, վերաբերվում են միլիոնավոր տնտեսությունների։

Կարելի յե ասել, վոր ամենայն հավանականությամբ մեր խորհրդային յերկրում չի գտնվի վոչ մի գյուղացիական տնտեսություն, վոր այս կամ այն չափով կրած չլինի այն միջոցների ազգեցությունը, վոր մենք առաջարկելու յենք ձեզ ի հաստատություն։ Յեզ վորովհետև դա վերաբերում ե միլիոնավոր գյուղացիական տնտեսությունների և միլիոնավոր գյուղացիական տնտեսություններ այդ միջոցների հիման վրա դատելու յեն Խորհրդային իշխանության քաղաքականության, ինչպես և այն մասին, թե Խորհրդային իշխանությունն ինչ ուղղությամբ և առաջնորդում բանվոր դասակարգին։ — Հատկապես այս պատ-

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Դրառ. № 132թ.

Պատ. № 4600

Տիր. 2600

4869 - 88



ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԱԿԱՆ  
MINISTRY  
M. Ա. ՄԱՆՈՒՔԻՆ

ճառով այս ակտը խորին քաղաքական նշանակություն ե ստանում:

Ներկայումս այդ միջոցները մենք մեր յերկրի գերազույն-իշխանության հաստատությանն ենք առաջարկում, վորպեսի այդ միջոցները հայտնի զառնան յուրաքանչյուր գյուղացու, վորպես մեր համագումարի ակտեր: Մենք պետք ե աշխատինք այն-պես անել, վոր Խորհրդային իշխանության ձեռք առած տնտեսական միջոցները հայտնի դառնան յուրաքանչյուր գյուղական հասարակության և արվեն այնպիսի ձեռվ, վոր յուրաքանչյուր գյուղացի և յուրաքանչյուր գեղջկուհի կարողանան հասկանալ և յուրացնել այդ միջոցներն, առանց վորեն դժվարության:

## ՀԱՐԿԻ ԾԱՆՐՈՒԹՅԱՆ ԹԵԹԵՎԱՑՑՈՒՄԸ

Յես թույլ եմ տալիս ինձ իմ զեկուցումն սկսել նրանով, ինչով սովորաբար ավարտվում են զեկուցումները, այսինքն ըսկսել գյուղացիական տնտեսության բարձրացման և ամրացման այն գործնական ձեռնարկումներից, վոր յես առաջարկելու յեմ ձեզ, վորպեսզի ձեր հավանությունը հայտնեք դրանց և ընդունեք: Մեր խորհուրդների համամիտութենական համագումարը պետք ե դիմի գյուղացիությանը հետևայալ վորոշումով.

«Միության ամբողջ ժողովրդական տնտեսության շահերը պահանջում են, արդյունաբերության զարգացումը շարունակելուն զուգընթաց, ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները ամենաշուտափույթ կերպով ամրացնելու և բարձրացնելու համար գյուղացիական տնտեսությունների վողջ մասսան՝ այդ տնտեսությունների յեկամուտը բարձրացնելու նպատակով: Գյուղացիությունը պետք ե հնարավորություն ստանա գնելու իր տնտեսության մեջ մեծ լրացուցիչ գումարներ, բարձրացնելու նրա տեխնիքական մակարդակը և ավելացնելու այն արտադրանքների քանակը, վորոնք շուկա յեն ուղարկվելու: Այս նպատակով համագումարն անհրաժեշտ է համարում՝ մեկ կողմից վերացնել մի շարք սահմանափակումներ, վորոնք դանդաղացնում են գյուղատնտեսության զարգացումը և մյուս կողմից՝ լրացնել գործող որենսդրությունը մի շարք ձեռնարկումներով, վորոնք գյուղացիների համար թեթեքացնելու յեն նրանց տնտեսության բարձրացումն ու ամրացումը:

Ազատ առևտությունը վրա աճող գյուղի բուրժուական (կուտակային) վերնախավի դեմ վորեն վարչական միջոց գործադրելու:

աննպատակահարմար համարելով, անհրաժեշտ համարելով աշխատավորական գյուղացիական տնտեսության պաշտպանելոն, այն չափով, ինչ չափով, վոր նա գյուղատնտեսություն վարելու բարեկաված յեղանակների հաղորդիչ ե (ՊՐՈՎՈԴԱԿ): — համագումարը միևնույն ժամանակ հայտարարում ե, վոր Խորհրդային իշխանության քաղաքականության այնպիսի ընթացք պետք ե տալ, վոր կարելի լինի իրական ոգնություն ցույց տալ գյուղացիության չքավոր և միջակ տարրերին, իրենց տնտեսության, իրենց նյութական բարեկեցության և իրենց քաղաքական ու կուլտուրական աճումը բարձրացնելու գործում: Գյուղացիության այդ խավիերի միավորումը կոռպերացիայի — և առաջին հերթին գյուղատնտեսական ու վարկային կոռպերացիայի միջոցով՝ միակ ուղիղ ճանապարհն ե բարձրացնելու նրանց տնտեսական զորությունը պայցքարելու հարուստների, վաշխառուների և միջնորդների շահագործման դեմ և գյուղացիությանը սոցիալիստական տնտեսության շինարարությանը գործին հաղորդակից անելու համար:

Ամենամոտիկ ժամանակաշրջանում Խորհրդային իշխանության առաջին և հիմնական խնդիրն ե լինելու ոգնել կոռպերացիայի միջոցով միավորված մասն գյուղացիությանը լրացնելու իր կենդանի և մեռյալ ինվենտարը այն չափով, ինչ չափով վոր անհրաժեշտ ե այդ աշխատավորական հողոգտագործման համար:

Դիմում մեր առաջ վերոհիշյալ խնդիրները և ձգտելով ապահովելու գողջ գյուղացիության ավելի մեծ ազատություն իր աշխատանքի գործադրման ու նրա արդյունքների ոգտագործման խնդրում, մենք առաջարկում ենք համագումարին.

1. «Հավանություն տալ կենտրոնական գողկումիորնի ընդունած գյուղատնտեսական հարկի նոր կանոնադրությանը, վորով՝ 100 միլիոն ուղղով պակասեցվում են գյուղացիների վճարումները (ՊԼԱՏԵՋԱ), անասունները վարելահողի հաշվարկելու (ՊՐԵՍՎԵ) ավելի ուղիղ միջոց և սահմանվում և հարկի վաղորոք հայտնի կայուն չափ ե տրվում գյուղացիությանը: Դրա հետ միասին, համագումարն անհրաժեշտ է համարում ել ավելի լավացնել միասնական գյուղատնտեսական հարկը, թեթեացնելով նրա ծանրությունը գյուղացիական տնտեսության համար և ավելի արդար կերպով բաշխելով այդ հարկն առանձին շրջանների ու առանձին տնտեսությունների միջև, համաձայն նրանց տնտեսական ուժի:

2. Հավանություն հայտնել միասնական գյուղատնտեսական հարկից 100 միլիոն ռուբլի վոլոստների անօրինությանը հանձնելու վորոշմանը, համաձայն վորի վոլոստները պետք է այդ միջոցները ծախսեն անմիջականորեն գյուղացիության տեղական կարիքների հետ կապված պահանջների վրա (տեղական ճանապարհներ, դպրոցներ հիվանդանոցներ՝ ևայլն):

3. Կտրականապես արգելել գյուղացիությանը վոեե ապորինի տեղական տուրքադրման յենթարկելը»:

Այս յերեք կտերը վերաբերվում են այն միջոցներին, վորմենք վերջերս ձեռք ենք առել, վորպեսզի թեթեացնենք գյուղացիության ուսերին ընկնող հարկի ծանրությունը։ Այստեղ մենք վոչ թե յելակետ ենք ընդունում ինչ վոր վերացական պատկերացումներ, այլ յենում ենք մեր բյուջեի բարելավման պահանջից, վորը (բյուջեն) թույլ ե տալիս մեզ թեթեացնելու գյուղացիության վրա ընկնող ուղղակի հարկերի ծանրությունը. բացի այդ, մենք նկատի ունենք նաև այն, վոր գյուղացիության կուտակած գումարներից անհրաժեշտ ե վորքան կարելի ե շատ դրամ թողնել նրա սեփական տնտեսության մեջ՝ հողի բարելավման վրա գործադրելու համար, վորպեսզի գյուղացիությունըն այդ միջոցների ոգնությամբ ավելացնի իր մթերքների քանակն ու վորակը։

## ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Ձեզ առաջարկելիք վորոշման նախագիծն այնուհետև անցնում է այն հիմնական գործոններին, վորոնք ուղղություն են տալիս գյուղացիական տնտեսությանը, և առաջին հերթին, հողաշինարարության հարցերին։

Հողաշինարարության հարցերը, հողերի ուղիղ բաշխման և հողատիրության ասպարեզից գոյություն ունեցող շփոթը վերացնելու հարցերը, — մի շփոթ, վոր խանգարում է տնտեսությունն ուղիղ վարելու գործին, — մեր յերկրի բազմաթիվ շրջաններում նարկայում գյուղացիության համար հիմնական հարցեր։

Զի կարելի չխոսանակել, վոր հողաշինարարական աշխատանքները մինչև վոր գեթ հիմնական զեերով չափարտեն, — գյուղացիական տնտեսության բարձրացումը, նրա կայունացումը, տնտեսատեր գյուղացու ձգտումը՝ վորքան կարելի յե մեծ աշխատանք և գումարներ տրամադրել իր տնտեսության բարելավմանը չեն կարող իրական և հաստատուն հիմքեր դանել։

Խորհրդային իշխանությունը, վոր արդյունաբերության ամրացման, իրականացրած գրամական ռեֆորմի և բյուջեյի աճման ու հաստատուն գառնալու շնորհիվ ներկայումս կարող ե ավելի մեծ չափերով ընդունած գյուղացիության կարիքներին, քան յերեք, յերկու և նույնիսկ մեկ տարի սրանից առաջ, — պետք է իր ուշադրության կենտրոնում դնի հողաշինարարության հարցերը։ Այս պատճառով մենք առաջարկում ենք համագումարին, վոր այդ մասին բաց ի բաց հայտարարի գյուղացիությանը հետևյալ ֆորմուլայով։

4. Նկատի ունենալով, վոր հողագործության ասպարիզում ուղիղ տնտեսարարության անցնելը առաջին հերթին կապված է հողաշինարարության կիրառման հետ, անհրաժեշտ է համարվում ավարտել հողաշինարարական աշխատանքների պլանի կիրառումը հիմնական շրջաններում տաս տարվա ժամանակամիջոցում. բ) գյուղացիության չքավոր մասի համար կատարվող հողաշինարարական աշխատանքների վարձատրությունը կատարել պետության հաշվին, դեռևս այս տարի այդ նպատակին հատկացնելով 3 միլիոն ռ. գ.) եժանացնել և ավելացնել հողաշինարարական աշխատանքների համար գյուղացիությանը աըրվող վոր վարկը»։

Գյուղացիների հողաշինարարության և նրանց հողով ու անտառով ապահովելու նույն հարցին են վերաբերում առաջարկվող վորոշման նաև յերկու հետեւյալ կտերը։

5. «Անհրաժեշտ ե սակավահող նահանգներում գյուղացիությանը հանձնել պետական ֆոնզի հողերի (դրանց թվում նաև պետական մարմիններին կապված տրվող հողերի մի մասը, յեթե այդ հողերն իրենց ուղղակի նպատակներով չեն ոգտագործվում կամ աննպատականարմաք կերպով են ոգտագործվում, բացի այդ, անհրաժեշտ համարելով խորհրդային տնտեսությունների պահպանումը և այդ տնտեսություններին ագրի-կուլտուրային ցուցադրական տնտեսությունների վերածելու նպատակված դրանց ամեն տեսակի ոգնություն ցույց տալը. — միջոցներ ձեռք առնել վերաբններու սակավահող շրջանների խորհրդային տնտեսությունների ցուցակը, նրանց թիվը կրծատելու և այդ միջոցով ստեղծվող հողերը գյուղացիներին ոգտագործության հանձնելու համար։

6. Անհրաժեշտ ե համարվում առ 1-ն ողոստոսի իրոք ավարտել տեղական նշանակություն ունեցող անտառների հանձ-

Նումը գյուղացիներին, պարտավորացնելով տեղական գործկոմներին, վոր կենտրոնի հնարավոր փինանսական ոգնությամբ այդ վորոշման կենսագործումն ապահովեն նյութական միջոցներով. այն շրջաններում, վորտեղ գյուղացիներին հատկացված տեղական նշանակություն ունեցող անտառները չեն բավարարել գյուղացիների փայտեղենի պահանջը, միջոցներ ձեռք առնել լրացուցիչ կերպով անտառ հատկացնելու համար, իսկ անտառաղուրկ շրջաններում գյուղացիությանը մատչելի գներով փայտեղեն հայթայթելու նպատակով, պետական պահեստներ ստեղծելու:

Յեթ, վերջապես, մի հարց, վոր ամփոփումն ե մեր կողմից այստեղ շրջափած հողաշինարարական քաղաքականության բոլոր հարցերի— դա հողոգտագործման ձեր հարցն ե: Մեր հողացին որենքների կողեկար, մեր հողային քաղաքականությունը հիմնված են այնպիսի սկզբունքի վրա, վորով ազգայնացրած պետական հողերում հողոգտագործման այս կամ այն ձերն աղատորեն ընտրելու իրավունք և վերապահվում գյուղացիությանը:

Մենք պետք ե ասենք, վոր այս սկզբունքին— հավատարիմ ենք մնում: Մենք, ի հարկե, շատ լավ ենք դիտակցում, թե ժողովրդական ընդհանուր տնտեսության և իրենց գյուղացիների տնտեսության համար վորքան շահավետ են հողոգտագործման այն ձերը, վորոնք հնարավորություն են տալիս գյուղատնտեսության մեջ դյուրությամբ մոցնելու մեթենայցման և ելեքտրագործման սկզբունքները:

Գյուղացիների կողմից առանձին աղարակային (խորօքնե) և հատվածական (Օրբյանե) տնտեսություններ կազմեն անշուշտ կը դանդաղեցներ գյուղատնտեսության կոլեկտիվացման և մեթենայցման պրոցեսը: Մինչդեռ գյուղացիությունը պետք ե իմանա, վոր իսկական յելքն այն ծանր գրությունից, վորի մեջ նա գտնվում ե, ամենից առաջ այն ե, վոր գյուղատնտեսության ընարավառում և անհրաժեշտ ե գործադրել քաղաքային խոշոր ինդուստրիալ տնտեսության մեջ գործադրվող կատարելագործված տեխնիկայի մեթոդներն, այսինքն տնտեսության եելեքտրագործումն ու մեթենայցումը:

## ԿՈԼԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Այս պատճառով մենք գյուղացիության մեջ պետք ե անդադրում կերպով պրոպագանդա մղենք հողոգտագործման այնպի-

սի ձեռքի, վորոնք թեթևացնում են մանր, կոտորակված, հետամեաց գյուղացիական տնտեսությունից գեպի խոշոր կոլեկտիվ տնտեսություն անցնելու գործը, իսկ այդ տնտեսությունն ոգտագործում ե տեխնիկայի բարձրագույն նվաճումները. բայց, այդպիս վարկելով հանդերձ, ներկայում մենք պետք ե այնպիսի քաղաքականություն վարենք, վոր հնարավորություն տանք գյուղացուն աղատորեն ընտրելու հողոգտագործման այս կամ այն ձեր, լիովին համոզված լինելով. վոր վոչ թե հրամանով, այլ որինակով, հողոգտագործման այնպիսի ձեռքի առավելությունների բացահայտ ցուցադրումով մենք կը համոզենք գյուղացիներին անցնելու հողոգտագործման այդ նոր ձեռքին, վորոնք թույլ ենք տալիս ոգտագործելու արտադրության ընդհանուր գործիքները, ելեկտրական ուժը և մեքենաները:

Այս բանը վորոշման նախագծի 7. բդ կետում հետեւյալ ձեռվ ե ձևակերպված.

«Խստիվ պահպանել հողոգտագործման ձեռքի աղատ ընտրության իրավունքը, համաձայն հողային կողեկար, վարչական արգելքներ չհարուցելով հատվածական և աղարակային տնտեսություններ ստեղծելու դեմ, միենույն ժամանակ ձեռք առնել միջոցներ, վորոնց նպատակը պետք ե լինի նպաստել հողոգտագործման այնպիսի ձեռքի ամման, վորոնք ավելի նպաստավոր են գյուղատնտեսության մեքենայցման զարգացման և նրա կոռպերացման համար (ոօշելու, ակտելու և որ.)»

Վերջապես մենք հարկավոր ենք համարում համագումարի անունից վերստին հայտարարել, վոր անհրաժեշտ և պահպանել հողերի բաժանման համար որենքով սահմանված ժամկետներն ու կարգը:

Մենք պետք ե հնարավորություն տանք գյուղացիությանը պարարացնելու և խնամելու հողն այն համոզումով, վոր նրա մշակած հողամասը հնարավորություն կը տա նրան ոգտվելու իր աշխատանքի պատվաներից և վոչ թե ժամանակից առաջ բաժանման յենթարկվի: Այդ պատճառով ձեզ առաջարկվող բանաձեռում տաված ե.

«Հողի մշակման և պարարացման ու նրա պահպերության բարձրացման վրա ծախսվող գումարների ավելացման նպատակով, անհրաժեշտ և վճռական պայքար մղել հողը հաճախ բաժանելու այն փորձերի դեմ, վորոնք հակասում են հողային կողեկարին»:

Նշելով այն ուղղությունը, վորով տարվում ե Խորհրդային իշխանության քաղաքականությունը գյուղացիության ձեռքում գտնվող հողերի և անտառների ընդհանուր տարածության ավելացման ու այդ ընդարձակված տարածության վրա հողաշխարարություն անելու ասպարիզում, մենք պետք ե մեր խոսքն ասենք նաև վարձակալության սկզբունքներով գյուղացիության մեջ հողերը մեկի ձեռքից մյուսի ձեռքից անցնելու մասին:

Մենք գիտենք — և կը սիսալվեյինք, յեթե աչք փակեինք այս  
բանի վրա. — զոր մեզ մոտ պակասում եին կենդանի և մեռյալ  
ինվենտարն, — այս որենքները կազմելիս մենք միշտ նկատի  
եյինք առնում 40 տոկոս ձիազուրկ գյուղացիություն, — ինչպես  
և հողի մշակման միջոցները, վորի պատճառով այս կամ այն  
գյուղացին իրեն պատկանող հողը հաճախ չեր կարողանում իր  
ուժերով մշակել. Այդ պատճառով, այդ անմշակ հողերը գյուղա-  
ցին այլ խմբակների կողմէց ոգտագործելու անլեզար և ապօրի-  
նի ձևեր ե ստեղծվում:

Մեր առաջ մի հարց ե կանգնած. փակենք մեր աչքերն  
այդ փաստերի առաջ, փորձենք կովկլ նրանց զեմ, թէ, ընդու-  
նելով, վոր գյուղացիական տնտեսության ներկա վիճակը թույլ  
չի տալիս մեզ նման վարձակալական գործարքների նկատմամբ  
արգելման քաղաքականություն վարել, անհրաժեշտ համարենք  
բացորոշ կերպով ընդունել այդպիսի գործարքներ թույլատրե-  
լու հնարավորությունը և վերացնենք այդ գործարքների անկեզալ  
բնույթը, վորը հաճախ նպաստում ե նրանց ստրկական բնույթ  
ստանալուն, և այսպիսով հնարավորություն ստանալ ճշտիվ կա-  
նոնավորելու այդ գործարքները և հետեւելու նրանց որինակա-  
նությանը:

Մենք կարծում ենք, վոր վողջ գյուղացիությունն ուզիլ կը համարի հենց այս յերկրորդ քաղաքականությունը, — մի քաղաքականություն, վորը բացեիրաց ընդունում և, վոր տվյալ մոմենտում իրենց հողը մշակել չկարողացող գյուղացիներն իրավունք ունեն այդ հողը վորոշ պայմաններով կապալով տալու իրենց հարեաններին, բանաձևի համապատասխան կետում առ ված և.

«Յանքսի հողը լավագույն կերպով ոգտագործելու և միջոցներ ու ինվինտար չունենալու պատճառով, իրենց հողը մշակել չկարողացող չքափորներին ոգնելու նպատակով, անհրաժեշտ և վերացնել արգելքները, վորագետի գյուղացիները կարողանան ափելի»

լայն չափերով ոգտագործել իրենց իրավունքը և հողը կապալով տալ մինչև յերկու սերմանման շրջանի (СОВОБОРОТ) ժամանակով սերմանափոխության բազմամյա սիստեմի դեպքում ու վոչ ավելի, քան 12 տարի ժամանակամիջոցով՝ սերմանափոխության յեռամյա և քառամյա սիստեմի դեպքում:

Պետք և վերացնել նաև այն արգելքները, վորոնք խանգարում են գյուղական հասարակությունների չոգտագործված հողային ֆոնդ անհատ հողոգտագործողներին կապալով տալու գործին, այդ վարձակարության յիկամուտը համապատասխան ձևով գյուղական կամ վոլոստային բյուջեին հատկացնելով:

Թույլատրել, վոր պետական ֆոնդային հողերի հողամասերը կապալով տրվեն անհատ հողոգտագործողներին 12 տարուց ավելի ժամանակամիջոցով, համապատասխան պայմանագրի հիման վրա:

Կտրականապես արգելել և վճռական պայքար մղել փոխանցական վարձակալության (սуб-արենդա), այսինքն վարձակալության իրավունքը յերրորդ անձի հանձնելու, բոլոր տեսակների դեմ, այդ բանն ազգայնացված հողի հանցավոր չարաշահություն համարելով»:

Սրա հետեանքով մեր առաջ կանգնում ենակ գյուղատնտեսության մեջ վարձու աշխատանքի գործադրության լրացուցիչ կերպով ընդարձակելու հարցը։ Մենք կարծում ենք, վոր Խորհրդային իշխանության մշակած և նորերս հրապարակած ապրիլի 18-ի ժամանակավոր կանոնները, վորոնցով ընդարձակվում են գյուղատնտեսության մեջ վարձու աշխատանքի գործադրման հնարավորությունները, պետք և համագումարի հավանությանն արժանանան, և այդ հավանությունը կարող է հետեայլ ձևու ընդունել. «Հավանություն հայտնել 1925 թ. ապրիլի 18-ի «Ժամանակարոր կանոններին» գյուղատնտեսության մեջ՝ ոժանդակ վարձու աշխատանքի վարձման և վարձու աշխատանքի գործադրման պայմանների մասին, վորոնք թեթեվացնում են բանվորական ուժի գործադրումը գյուղատնտեսության մեջ՝ գյուղի արդի տնտեսական պայմանների համաձայն տարածել այս որենքը նաև վարձու ուժի գործադրման վրա՝ կապալով վերցրված հողերում»։

Անմիջականորեն հողաշինարարության, հողոգտագործման ձեզերի և հողերում տնտեսություն վարելու պայմաններին վերաբերությամբ այս հարցերի լուծումից հետո, մեր գյուղացիական

տնտեսության համար հետևյալ կենտրոնական հարցը այն անհամաշափությունն է, վոր գոյություն ունի հեղափոխության հետևանքով գյուղացու ձեռքն անցած հողի քանակի և ներկայումս նրա ձեռքին գտնվող կենդանի ու մեռյալ ինվենտարի քանակի և վորակի միջև։ Այս հակասությունը մեր հեղափոխության մեջ մենք կորստարեր հակասություն անունն ենք տալիս, վորովհետև իրոք անկարելի յե պատկերացնել գյուղացու դրության հիմքերն ավելի մեծ չափերով վորոշ հակասություններ, քան այն հակասությունը, վոր նրա ունեցած հողը կարող է կերակրել իրեն—և կերակրել ավելի լավ, քան մինչ այսոր կերակրվել են ամենույն ժամանակ այդ հողի մշակման միջոցների պակասություն և զգում, վորը հետևանք և այն քայլայիշ ժամանակաշրջանի, վոր մենք ապրել ենք։

### ԻՆՎԵՆՏԱՐԻ ԼՐԱՑՈՒՄՆ ՈՒ ՆՈՐՈԳՈՒՄԸ

Խորհրդային իշխանության հիմնական խնդիրներից մեկն ել, վոր դուք, խորհրդային յերկրի տերերդ պետք ե դնեք, այն ե, վոր մեր բոլոր ուժերը պետք ե լարենք, վորպեսզի լրացնենք մեռյալ և կենդանի ինվենտարի պակասը, այդ հոգածությունն, ի հարկե պետք ե տարածվի ժամանակ միջակ և մասնավորապես, չքավոր տնտեսությունների վրա։

Մենք առաջարկում ենք համագումարին մեր ընդունելի բանաձևի մեջ իր կամքը ձևակերպել այսպես։

«Նկատի ունենալով, վոր գյուղատնտեսության հետագա աճումը գանդաղեցող հիմնական հակասությունն այն անհամաշափությունն է, վոր գոյություն ունի հեղափոխության հետևանքով գյուղացիության ձեռքն անցած հողի քանակի և այդ հողի մշակման համար անհրաժեշտ կենդանի ու մեռյալ ինվենտարի քանակի ու վորակի միջև, — անհրաժեշտ և կարուկ միջոցներ ձեռք առնել գյուղատնտեսության համար կործանիչ այդ անհամաշափությունը վերացնելու համար. դրա համար անբաժեշտ ե.

1) Պետության և կռոպերացված բնակչությանն ուժերով հինգ տարվա ժամանակամիջոցում վերականգնել անհրաժեշտ ձիակալմը (КОНСКИЙ состав) և զարգացնել ձիարությունը։

Մենք այժմ արգեն կարող ենք, առանց գատարկ զատողություններ անելու և առանց գատարկ խոստանմեր տալու, մեր առաջ մի կոնգրես խնդիր դնել—կոնկրետ, վորոշ ժամանակամիջոցում, 5 տարում, վերականգնել հողերի մշակության համար

անհրաժեշտ ձիակալմը և դնել՝ ձիարութության հետագա զարգացման հիմքը։

2) Լրացնել և նորոգել մեռյալ ինվենտարը, պետական գործարաններում համապատասխան արտադրություն զարագացնելով, ինչպես և տնայնագործության միջոցով այդպիսին պատրաստելով ու մատչելի գներով գյուղացիությանը մատակարարելով։

3) Ուժեղացնել գյուղացիական տնտեսության մեջ բարդ մեքենաներ, մասնավորապես արակտորներ մտցնելը։

Գյուղատնտեսության հետագա զարգացման խնդրում գյուղացիական ինվենտարի լրացման հսկայական, տվյալ մոմենտում կարելի յե ասել վճռական նշանակություն տալով, մենք պետք ե մեկ կողմից լարենք մեր արդյունաբերության բոլոր ուժերը, վորպեսզի ավելացնենք գյուղացիական տնտեսության անհրաժեշտ գործիքներ ու մեքենաներ արտադրելը, իրենց գնով մատչելի գարնենք այդպիսիները գյուղացիության համար և, մյուս կողմից, առանց սպասելու այն մոմենտին, յերբ մեր արդյունաբերության զարգացումը հնարավորություն կտա լիովին բավարարելու գյուղացիության այդ պահանջը, պետք ե անմիջապես սկսել արտասահմանից գյուղացիական տնտեսության համար անհրաժեշտ գործիքներ ու մեքենաներ դուրս գրելու և ստանալու գործը։

Մենք, այժմ իսկ իրականացնելով այդ բանը մեր առորյա աշխատանքի մեջ, մեր բանաձևի քաղվածորեն մեջ բերված մասի մեջ գրում ենք. «Գյուղացիության յերկրագործական մեքենաների ու գործիքների պահանջն լիովին բավարարելու նույն այդ նպատակներով, անհրաժեշտ և համարվում յերկրագործական մեքենաներ շինելու գործը Ս.Խ.Հ. Միության մեջ առավելագույն չափերով ընդարձակելուն զուգընթաց, կազմակերպել պակասող յերկրագործական գործիքների ու մեքենաների ներմուծումն արտասահմանից»։

Մեր տնտեսության բարձրացման համար մեքենաներից վոչ-պակաս կարենու են ազնվացրած սերմերը, վորոնց մասին բանաձևում ասված ե.

«Պտղաբերությունն ընդհանրապես բարձրացնելու և գյուղացիության արտերի քաղակալելու (засоренность) դեմ պայքարելու նպատակով, անհրաժեշտ և ձեռք առնել բոլոր միջոցները ուժեղացրած թափով ազնվացրած սերմեր արտադրելու և

բազմացնելու համար: Զսահմանափակվելով տվյալ նպատակին արդեն իսկ հատկացված միջոցներով (2.170.000 ռ.), անհրաժեշտ և համարվում, վոր այս բնագավառում իրենց ուժեղացրած աշխատանքը շարունակեն թե պետությունը և թե կոռպերացիան»:

### ԳՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Վերջապես գների քաղաքականության գործում Խորհրդային իշխանությունը կանգնած է այն տեսակետի վրա, վոր արդարացի գին պետք և նշանակել այն աշխատանքին, վոր թափել և գյուղացին վաճառքի հանվող արտադրանքների վրա:

Յեկ արդյունաբերական, և գյուղատնտեսական արտադրանքների գների կանոնավորման խնդիրը, Խորհրդային իշխանության տնտեսական քաղաքականության հիմնական խնդիրն է դարձել, և բանվորների ու գյուղացիների դաշինքը մարմնավորող կառավարության գործունեյության մեջ, գների քաղաքականության գավառում, մենք այնպիսի քաղաքականություն պետք ե վարենք, վորը, քաղաքները չքայքայելով և մեր արդյունաբերության համար հաստատուն պատվանդան ստեղծելով հանդերձ, միևնույն ժամանակ կը կարողանա արդարացիորեն վարձատել գյուղացիության աշխատանքը: Այս գավառում մենք արել ենք այնպիսի նվաճումներ, վորոնք անառարկելի յեն:

Յեթե մեկ տարի սրանից առաջ, յերբ մեր առաջ հանձինս բոլորիդ հայտնի «մկրատի» բացվեց մի անդունդ, վորի ժամանակ տարածայնություններն անխուսափելի եյին բանվորների և գյուղացիների միջև, հաստատուն, յեռանդուն և ուղիղ քաղաքականությամբ, մեկ կողմից ուղղված դեպի արդյունաբերական արտադրանքների և գների նվազեցումը և մյուս կողմից՝ դեպի գյուղատնտեսական մթերքների, գյուղացիական տնտեսության արտադրանքի գների բարձրացումը—մենք կարողացանք բոլորին փակել այդ «մկրատի» բերանները, պարզ ե, վոր այժմ ևս պետք ե շարունակենք այդ քաղաքականությունը: Դրանով չի բացաւ այս անգամանքը, վոր մենք, վորպես բանվորների իշխանություն, պետք ե պայքարենք սովը և հացը չարաշանելու մի փորձի դեմ:

Մենք բնակ չենք յերգվում, թե գյուղի ունեոր վերնախավի գեմ չենք զնա, յեթե նա, անբերիությունից ոգտվելով, փորձի չունեոր գյուղացիությանը, սովի մատնված գյուղացիու-

թյանն ու բանվորներին թելադրելու անկարելի և քայքայիչ գներ մեր բյուջեյի և քայքայիչ գներ բանվորների ու չունեոր գյուղացիների համար:

Մենք միայն պարտավորվում ենք հետագայում ևս վարել այդ քաղաքականությունը, վորի հետեւանքով այս տարի գյուղացիության հացի համար վճարվեց մի քանի հարյուր միլիոն ուրբաթ ավելի, քան այն գումարը, վոր ստացել եր գյուղացիությունն իր հացի համար անցյալ տարի: Այդ քաղաքականությունը ձևակերպված է հետեւյալ խոսքերով.

«Շարունակել գների նվազեցման քաղաքականությունը պիտական արդյունաբերության արտադրած այն ապրանքների նկատմամբ, վոր գյուղացիությունն ե սպառում և գործնականում հնարավորություն տալ ապահովել գյուղացիությանն իր արտադրանքներն այնպիսի գներով վաճառելու, վոր դրանք, ծածկելով նրա ծախսերը, տնտեսությունը զարգացնելու և ամրացնելու հնարավորություն տան նրան: Գների անխուսափելի և անհրաժեշտ կանոնավորումը պետության կողմից վոչ մի դեպքում իրենց տնտեսության արտադրանքը վաճառող—գյուղացիների համար քայքայիչ պարտադիր գներ սահմանելու վիճակի չպետք ե հասցնել: Մանավանդ անթույլատրելի յե հարկադրական միջոցների գործադրումն այն գեպօւմ, յերբ պետական մարմիններն առևտրական գործարքներ են անում վաճառող գյուղացիների հետ»:

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ

Հետեւյալ հարցը, վորով ամենամոտիկ կերպով շահագրգռված և գյուղացիությունը, արտահանության քաղաքականությունն եւ: Այդ մասին մենք հետեւյալն ենք ասում:

«Նկատի ունենալով, վոր գյուղացիական տնտեսության արդյունավետության բարձրացումը կախված է արտադրին շուկայում գյուղատնտեսության արտադրանքների վաճառքի կարելիությունից, համապատասխան պետական մարմինների ինդիք դարձնել գյուղացիական տնտեսության արդյունքների սպառումն արտասահմանյան շուկաներում ապահովելու գործը:

Խորհրդային իշխանության հաստատած արտաքին առևտրի մենաշնորհը, Մրության գյուղատնտեսական արտադրանքներին ամենաձեռնտու պայմաններ ապահովելու հնարավորություն և տալիս: Իսկ գյուղատնտեսության արտադրանքի վաճառքն ար-

տաքին շուկաներում, արտաքին առևտրի մենաշնորհի ոգնությամբ, պետք է այնպես կառուցված լինի, վոր քանի զնա, այնքան ավելի մեծ բաժին հանի գյուղացիությանն այդ արտադրանքի վաճառքից ստացած դատումից (վերցված), իսկ զա պետք է, վոր շահագրգություն առաջացնի գյուղացիության մեջ՝ ավելացնելու արտահանությունը և ուժեղացնելու գյուղատնտեսության համապատասխան ճյուղերի (հացահատիկների, վուշի, յուղի, խողենու, թռչնեղենի և այլն) զարգացնելը»:

Ցես կարծում եմ, վոր ներկայում մեր յերկրում չկան այնպիսի հետամնաց գյուղացիներ, վոր չհասկանաւն, թե իր դիվանագիտության և արտաքին առևտրի մենաշնորհի ոգնությամբ խորհրդային իշխանության կողմից իրականացվող կարեռագույն խնդիրներից մեկն ել մեր խորհրդային գյուղացիական տնտեսության արտադրանքների համար խաղաղ ճանապահով արտասահմանյան շուկաներ գրավելու ինդիրն եւ, Մենք չենք կարող պատշաճ յեռանդով զարգացնել մեր տնտեսությունը, գյուղացիությունը չի կարող իր անտեսության հետագա զարգացման համար անհրաժեշտ միջոցներ ստանալ, յեթե չստեղծենք այնպիսի պայմաններ, վոր մեր գյուղատնտեսության արտադրանքները վաճառվեն վոչ թե միայն մեր յերկրի ներսում, այլև վորոշ զիրք նվաճեն արտասահմանյան շուկայում:

Ի հարկե, այդ առևտուրն այնպես պետք է կազմակերպել, վոր գյուղացիությունն այդ արտահանության դատումից կարելույն չափ մեծ բաժին ստանա, Արտաքին առևտրի մենաշնորհը, վորի մասին փորձում են բաժբասել (համետված), գյուղացիների մաս գյուղացիության բոլոր թշնամիները, այն գործիքն ե, վորի ոգնությամբ արտասահմանում վաճառված գյուղատնտեսական արտադրանքների դատումի մեծագույն մասը կարող ե մտնել վոչ թե միջնորդ—կապիտալիստի գրպանը, այլ համապետական գանձարանը և ծախսվել նույն գյուղացիության դրության լավացման վրա:

Հետեւյալ կետն ասում ե, «նկատի ունենալով, վոր գյուղացիական տնտեսության արդյունավետությունը նշանակելի չափերով բարձրանում ե, յերբ վաճառքի յեն հանվում գյուղական արտադրության արգեն իսկ մշակած արտադրանքները.— անհրաժեշտ ե, վոր պետությունն ամեն կերպ նպաստի գյուղացիության հում նյութերը վերամշակող (յուղագործական, կար-

առֆիլագործական, վուշ մշակող, բեկոնային և այլն) գործարանների վերականգնման և ստեղծման գործին, նկատի ունենալով նաև այն, վոր գյուղացիական արտադրություններն այդպիսի վերամշակման յենթարկելուց հետո, արտասահման արտահանելը գյուղացիությանն անհամեմատ ավելի մեծ ոգուտ կը տա, քան հում նյութի արտահանումը»,

Այս կետը կարելի յե ավելի համառոտ ձեռվ շարադրել, յեթե ոտար բառ գործածենք: Պարզապես կարող ենք ասել, վոր մենք գյուղի «ինդուստրալիզացիայի» կողմանակից ենք: Բայց մենք հուսով ենք, վոր այս վորոշումը, յեթե նա ընդունվի համագումարի կողմից, պետք է մատչելի և հասկանալի լինի ամեն մի գյուղացու համար և, վոր այս փաստաթղթի հիման վրա գյուղացին պետք է դատի Խորհրդային իշխանության քաղաքականության ընդհանուր ուղղության մասին, վոր ուղղված է զեպի գյուղացիական տնտեսության պաշտպանությունը. այս պատճառով այդ խորամանկ, ոտար, դժվար գյուղի ինդուստրալիզացիա» բառի փոխարեն, մենք գործ ենք ածում հասարակ բառեր, ցույց տալով գյուղացիությանը, վոր ժամանակ ե, վորպեսզի նա զադարի հում նյութ մատակարարող լինելուց, վորն այսուհետեւ վերամշակվում և ուրիշների ձեռքերով, վորի ժամանակ այդ վերամշակման տված ամրող յեկամուտն ու բուլուս ոգուտները գնում են վոչ թե գյուղացու, այլ միջնորդի գրպանը, կամ արտասահման արտահանելու, արտասահմանի կապիտալիստների գրպանը: Մենք պետք է ավելի ու ավելի մոտենանք այնպիսի գրության, վոր հում նյութի, կոպիտ արտադրանքի արտահանությունը փոխարինենք մշակած և վերամշակած արտադրանքի արտահանությամբ, գյուղացիականությունը հնարավորությունն կտա ստանալ դատութիւնամարդութիւնը մեծ բաժին, քան նա այժմ և ստանալ:

ԴԱՅՔԱՐ ԱՆԲԵՐՐԻՄԻԹՅԱՆ ԴԵՄ  
Ա ՍՅԱՌՈՒՆԻՉ ՀԻԿ ԱՎՎԱՆ  
ՄԱՅ 1922 թ/ 11-1922  
Ա ՍՅԱՌՈՒՆԻՉ ՀԻԿ ԱՎՎԱՆ  
Ա ՍՅԱՌՈՒՆԻՉ ՀԻԿ ԱՎՎԱՆ

Յեթե հասել և այն ժամանակը, վերամտության մեջ պատճառով ազատագրի իրեն ոտարերկրյա կապիտալի շահագործումից, վորն ոգում եր ուս գյուղացու դարավոր մթությունից ու հետամնացությունից, ժամանակ ե, վոր նա աղատագրվի նաև հետամնացության ամենազաժան պատուհասից անբերիությունից: Այս պատճառով համագումարը պետք է առանձնապես անե-

տաձգելի համարի գյուղատնտեսության վերականգնման ու զարգացման պլանաշախի ձեռնարկումների կիրառումը յերաշտու շրջաններում»:

Վերոհիշյալ՝ ձեռնարկումների համար պետք է հատկացնել այսքան միջոցներ, վոր հնարավոր լինի 5—6 տարվա ընթացքում ավարտել անհրաժեշտ աշխատանքները, և այնպիսի ծրագրով, վորն իրոք կապահովի համապատասխան շրջանների գյուղացիությունն անբերրիության պատճառած աղետների կրկնվելուց. այդ գումարն ըստ նախնական պլանի հաշված և 77 միլիոն ռուբլի:

Այդ 77 միլիոն ռուբլին—մեր աղքատ պետության համար խոշոր գումար և Մենք աղքատ պետություն ենք, և թեև փոքր առ փոքր հարստանում ու զարգանում ենք, բայց համեմատությամբ այն պահանջների, վոր ունի 130 միլիոն աշխատավոր բնակչությունը, մենք աղքատ ենք և վոչ մի բողեք չպետք և մոռանանք մեր աղքատությունն ու քայլայվածությունը։ Մեր այդ աղքատ միջոցներից մենք նախնական ծրագրի համաձայն հատկացնում ենք 77 միլիոն ռուբլի, վորպեսզի գյուղացիությունն այնպիսի պայմանների մեջ դնենք, վոր անբերրիության ու սովորական այլևս ազատորեն չիջնի նրա մեջքին։

Այլևս անհանդուրժելի յե այն դրությունը, վոր տեղումների այս կամ այն քանակից, այսինքն մեղնից բոլորովին անկախ պատճառներից, կախված լինեն ամբողջ տնտեսական շրջանների բախտն ու կյանքը։ Այս անհանդուրժելի դրությունը կարելի յե վերացնել, յեթե գործադրենք գիտության նորագույն նվաճումները, յեթե բարձրացնենք տնտեսական կուտուրան, յեթե աշխատենք վոչ հնավանդ-պատեսական սովորությունների համեմատ, այլ նորագույն, գիտության կողմից հավանություն գտած, յեղանակներով, յեթե սիստեմատիկ կերպով պայլարենք այն պատճառների գեմ, վորոնք յերաշտ են առաջացնում։

## ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՆԱՅԻՆԳՐՈՒՄՆԵՐԻՆ ՉԵՎ ԱՐՀԵՍ- ՏԱՎՈՐՆԵՐԻՆ

Դյուզի հավելյալ բանվորական ուժը կարող է ստանալ գործադրության մեծ հնարավորություններ և գյուղացիությունն իրեն անհրաժեշտ ապրանքներ՝ լրացուցիչ քանակությամբ, յեթե համագումարն իր բանաձեռք հավանություն հայտնի այն բա-

նին, վոր անհրաժեշտ և «տնայնագործության և արհեստների ասպարիզում թեթևացնել զյուղացիության բանվորական ուժի գործադրության պայմանները»:

Այս նպատակով անհրաժեշտ է հավանություն տալ տնայնագործների և արհեստավորների արտոնություններին վերաբերվող ապրիլի 10-ի օրենքին, վորով թեթևացվում է նըանց տուրքադրումը և թույլ ե արվում ավելի մեծ չափերով, քան մինչ այժմ յ յեղել, գործադրել բանվորական ուժը տնայնագործական արդյունաբերության մեջ։ Բացի այդ, անհրաժեշտ է այսուհետեւ և ապահով մշակել անայնագործական և արհեստային արդյունաբերության զրությունը թեթևացնող միջոցներ, բնչակես և նրանց անհրաժեշտ նյութեղեն հայթայթելու միջոցով։

Անհրաժեշտ է մշակել աշկերտությունը խրախուսող միջոցներ այնպիսի գիտավորությամբ, վոր գյուղացիական յերիտասարդությունն ավելի մեծ չափերով, քան մինչ այժմ յ յեղել, կարողանա գործադրել իր ուժերն այդ ասպարիզում, բացի այդ, արհեստանոցներ, զպրոցներ և այլն կազմակերպելու միջոցով անհրաժեշտ է նպաստել գյուղացիական յերիտասարդության տեխնիկական պատրաստության գործին։

Պետք է վերացնել շուկաներում, նավակայաններում, յերկաթուղակայաններում և այլ վայրերում գյուղացիների կողմից կատարվող մանր առևտորի դեմ հանվող վարչական արգելվները։

Սակալանող շրջանների գյուղացիներին դեպի ազատ հողեր գաղթելու հնարավորություն տալու նպատակով, անհրաժեշտ է ուժեղացնել այդ հողերի պարարտացման, ինչպես և գաղթողներին անհրաժեշտ ինվինտար հայթայթելու աշխատանքներն, ավելացնելով այդ նպատակով արվող պետական հատկացումները։

## ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԿՈՈՐԵՐԱՑՈՒՄԸ

Այդ բանաձեռք մենք այնուհետեւ անցնում ենք այն կետին, վորը պետք է մատնանշի գյուղացիության այն ուղիները, վորոնք հանելու յեն նրան կոտորակված և հետամնաց ձեռվով իր տնտեսությունը վարելու դրությունից։

Մենք պետք է բացե ի բաց ասենք, վոր մեր յերկիրը գյուղացիական յերկիր ե, վորը վարում է իր տնտեսությունն ամենաքայլայիշ ձեռվ, վորովհետեւ մանր տնտե-

սությունը, մանավանդ այն չափով, ինչ չափով վոր նա կառչած ե մնում սերմնափոխության յետամյա սիստեմին — իսկ մեզ մոտ մեծ մասամբ այդ սիստեմն ե գործադրվում — անսահման կոտորակումն ե արտադրական ուժերի և արտադրության միջոցների, անսահման վատնումն մարդկային ուժերի:

Դա տնտեսություն վարելու ամենաանհարմար ձեն ե, վորը տալիս ե արտադրանքի ամենափոքր քանակություն և անուրինակ կերպով զցում ե նրա վորակը: Այս պատճառով մեր առաջ մենք պետք ե դնենք մի ուղղակի խնդիր — մեզ ժառանգություն թողնված տնտեսարարության այդ հետամնաց յեղանակից սիստեմատիկ կերպով, թեկուղ և աստիճանաբար, անցնել տնտեսարարության ավելի ժամանակակից, ավելի կուլտուրական, ավելի բարձր յեղանակի: այնպիսի յեղանակի, վորը կարող կը լինի միավորել կոտորակված անհատապատկան տնտեսությունները, վորը թույլ կը տա գյուղացիությանն ոգտագրծելու բոլոր տեխնիկական նվաճումները, վորը կը շաղկապի իրար քաղաքն ու գյուղը, վորը կը կարողանա վերացնել այն անդունդը, վոր գյություն ունի քաղաքի և գյուղի արդյունագործության միջև, վորը, վերջապես, մասսայական գյուղացիությանը հնարավորություն կը տա հարելու սոցիալիստական տնտեսության կառուցման գործին:

Այդ ձանապարհն անցնում է կոռավերացիայի վրայով. այս պատճառով համագումարը կոռավերացիայի վրա պետք ե դարձնի Խորհրդային իշխանության քոլոր մարմինների ուշագրությունը մեկ կողմից և վողջ բազմամիլիոն գյուղացիության ուշագրությունը — մյուս կողմից ու նրան այդ ձանապարհը ցույց տա:

Չեր ձայնը բարձրագույն հեղինակության ձայնն ե մեր յերկրում: Բազմամիլիոն գյուղացիությունը, իր կյանքը մաշեռվ հողի վրա, հողի վրա և նրա հետ միասին իր չքափոր կյանքը ապրելով, հարց ե տալիս ինքն իրեն. վրեն ե յելքի ձանապարհը: Յեվ դուք պետք ե մատնանշեք, հատկապես Խորհուրդների Համամիութենական Համագումարի անունից, վոր մանր կոտորակված գյուղացիության տնտեսությունից յենելու ձանապարհը, տեխնիկայի ու գիտության հետ նրա միանալու ձանապարհը, արտադրանքների քանակի և արժույթի բարձրացման ձանապարհը, գյուղացիության բարեկեցության բարձրացման ձանապարհը՝ մանր գյուղացիների, մանր հողագործների միավորվելու կոռավերատիվ միությունների միավորվելու կազմելն ե, վորոնք

այդ գյուղացիական տնտեսությանը թույլ կը տան լծվելու ընդհանուր սոցիալիստական շինարարության գործին, ոգտագործելու բոլոր այն նվաճումները, վոր անում ենք մենք մյուս ասպարեզներում և, այդպիսով, ամրացնելու բանվորների ու գյուղացիների այն դաշինքը, վորը Խորհրդային իշխանության պատվանդանն ե:

Այդ կետում հետեւյալն ե ասված:

«Ընդունելով, վոր արտադրող-գյուղացիների կամագոր կոռավերատիվ միավորումները գյուղացիական տնտեսության բարձրացման ամենազորեղ և ամենաուղիղ միջոցն են. ընդունելով նաև այն, վոր մանր գյուղացիական տնտեսությունը միայն այդպիսի կոռավերատիվ միավորման միջոցով կարող ե խուսափել կապիտալի կողմից ստրկացվելուց և ակտիվ կերպով մասնակցել սոցիալիստական շինարարությանը. համագումարը վերիցվար Խորհրդային իշխանության բոլոր մարմինների ուշագրությունն ե դարձնում գյուղացիական տնտեսության կոռավերատիվ միավորման գործին նպաստելու անհրաժեշտության վրա:

Համագումարը պահանջում է խստիվ պահպանել այն որենքները, վորոնք պահանջում են կոռավերացիայի իրոք կամագոր բնույթը, նրա մարմինների խակական ընտրականությունը, նրա կապիտալների անձեռնմխելիությունը և նրա անդամների ինքնագործունեյությունը:

Գյուղատնտեսական կոռավերացիան իր ամրող ուշագրությունը պետք ե կենտրոնացնի իր հիմնական խնդրի վրա — իրոք միավորի գյուղացիների բազմամիլիոն մասսաներին, մասնավանդ չքափորներին ու միջակներին՝ նրանց տնտեսությունն ամրացնելու նպատակով, բարձրացնի այդ անտեսության տեխնիկական մակարդակը, նպաստի, վոր նրանք կոտորակված հետամնաց արտադրությունից, վորից կապիտալիզմն ե ծնվում, աստիճանաբար անցնեն խոշոր կոլեկտիվ տնտեսության, վորը Խորհրդային իշխանության որով անխուսափելիորեն սոցիալիզմի հիմքն ե դառնալու:

Նպաստակ զնելով գյուղացիական տնտեսության համակողմանի (աշետորոշենք) միավորումը (սպառման, վերամշակման, հայթայթման և վարկավորման ասպարեզներում) և մասնավորապես նպաստելով գյուղատնտեսության՝ կոլեկտիվ տընտեսությունների ձևով կոլեկտիվացմանը, գյուղատնտեսական և վարկային կոռավերացիան, նկատի առնելով գյուղացիական

լայն մասսաների տնտեսության արդի դրությունը, պետք է հատուկ ուշադրություն դարձնի գյուղացիական միավորումների ամենամատչելի, հասկանալի և ուղղակի չքավորների ու միջակների զրությունը լավացնող ամենապարզ ձեռքի վրա (մեքենա հայթայթող, սերմնարուծական, սերմագտիչ, մելիորատիվ, աղնվացեղ ցուլեր գնող և այլ ընկերություններ),

### ԿՈՌԵՐԱՑԻԱՆ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Այսպիսով մենք այժմ մոտենում ենք այն խնդրին, վորել վրա հաստատամորեն մեր ուշադրությունն եր հրավիրում Վլադիմիր Իլիչը: Նա ասում եր. «Վորպես Խորհրդացին իշխանություն, վորպես բուրժուազիային տապալած պրոլետարիատ, մենք գտնվում ենք այնպիսի դրության մեջ, վոր չպետք ե զբաղենք ընդհանուր բնույթի ֆանթազիաներով՝ ապագայի մասին. մենք պետք ե սովորենք գործնական կերպով կառուցել սոցիալիզմը և կառուցել այնպես, վոր յուրաքանչյուր գյուղացիկարողանա մասնակցել այդ շենքի կառուցմանը, վորպեսզի ամեն մի գյուղացի իր առողյա աշխատանքով կարողանա ոգնել ապագա սոցիալիստական հասարակության շենքի հիմնական քարերը դնելու գործին»:

Գյուղացիական ընկերություններն, ինչ չափով վոր միավորում են գյուղացիության միջակ և չքավոր տարրերին, նույն չափով ել հնարավորությունն են տալիս նրանց բարձրացնելու իրենց տնտեսությունը, և այն ել վոչ թե կապիտալիստական զարգացման միջոցով (այսինքն այն միջոցով, յերբ մի տնտեսություն հարստանում ե ի հաշիվ մեկ ուրիշ տնտեսության, — սա կապիտալիստական զարգացման ճանապարհն ե), այլ բարձրացնելով միջակ և չքավոր տնտեսությունների վողջ մասսան՝ ընդհանուր աշխատակցության հիմունքներով, հենվելով այն բանի վրա, վոր պրոլետարիատը նվաճել և քաղաքական իշխանությունը, վոր հողն ու արտադրության միջոցները գտնվում են հաղթահակ տարած պրոլետարիատի ձեռքին, հենվելով այն զեկավարության վրա, վոր պրոլետարիատն ե ցույց տալիս գյուղացիությանը, գյուղացիությունն այս ճանապարհով առաջնորդելով, կոռպերացիայի միջոցով առաջ տանելով, առորյա, ամենորյա սև աշխատանքի միջոցով ամեն մի գյուղացու իրոք վրացելով և ամեն մի գյուղացու ցույց տալով այն առավելություն-

ները, վոր ունեն պրոլետարիատի դիկտատուրայի կարգերը՝ համեմատությամբ կապիտալիստական դիկտատուրայի կարգերի:

Ահավասիկ այս կերպ կառուցել սոցիալիզմը — սա այն խընդիրն ե, վորի վրա մատնանշել և Վլադիմիր Իլիչը, վորը պետք ե մեր գործնական հրահանգը դառնա՞ մեր գործնական, առորյա, ամենորյա աշխատանքի մեջ: (Փափակարություններ):

Այս պատճառով բանաձեռ մեջ կա հետեւյալ կետը.

«Վորպեսզի կոռպերացիան կարողանա իրավորձել իր հիմնական խնդիրները, Խորհրդային պետությունը գյուղացիության միջակ և չքավոր խավերի կոռպերատիվ միավորումներին այսուհետեւ ել պետք ե ոժանդակի և ցույց տա նյութական ոգնություն: Կոռպերացիայի վրա դրվող պետական խնդիրները պետք ե իրականացվեն վոչ թե վարչական կարգով, այլ պետության կողմից ցույց տրվող ֆինանսական — տնտեսական ոժանդակության հետ համաձայնեցնելու կարգով:»

Դրա հետ միասին, համագումարը, բոլոր տեսակի կոռպերատիվ միավորներից և նրանց զեկավարներից պահանջում ե իրոք տնտեսարող հիմքերի վրա դրված աշխատանք, խստագույն և ուղիղ հաշվետվություն, անխնա պայքստ չարարկումների դեմ և այն»:

### ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հետեւյալ միջոցը, առանց վորի անհնար և գյուղացիական տնտեսության զարգացումն ու բարձրացումը՝ գյուղացիական եժան վարկի կազմակերպելու հ: Դա դժվար ինդիք և մեր պետության համար: Յես արգեն ասեցի — և վորովհետեւ գա ձշմարտություն ե, ուստի կրկնելը հանցանք չի, — վոր մենք՝ աղքատ պետություն ենք, ու թեև մենք գիտենք, վոր մեր կապիտալիսերի համար չեկա ավելի արդյունավետ ծախսում, քան գյուղացուն վարկ տալիս ե, թեև մենք գիտենք, վոր գյուղացիական տնտեսության մեջ, այդ տնտեսությունը լավացնելու նպատակով դրված յուրաքանչյուր կոպեկ հարյուրապատկած ե վերադառնելու մեր գանձարկը և աշխատելու յե գյուղացիության ամբողջ բազմամիլիոն մասսայի ընդհանուր բարձրացման համար, ուրեմն ամրացնելու յե նաև բանվորների ու գյուղացիների դաշինքը, — բայց և այնպես, այդ բանը սքանչելի կերպով իմանալով հանդերձ, մենք դեռևս շատ ենք հեռու գյուղացիության վարկի պահանջը բարարելուց:

Մենք անում ենք այն ամեն, ինչ վոր հնարավոր են այց վորպեսզի այդ վարկը հնարավոր գառնար, մենք պետք ենախ և առաջ դրամական ուժորմ մացնելինք, պետք են վարկային սիստեմ ստեղծելինք, պետք են մեր արդյունաբերությանը հնարավորություն տայինք իր վերականգնման առաջին քայլերն անելու և միայն այդ նախնական պայմաններից հետո, մենք կարող ենք սկսել գյուղացիությանն անհրաժեշտ միջոցներ տալ վարկային պայմաններով։ Կրկնում եմ, այդ միջոցները դեռևս բավարար լինելուց շատ են հեռու։

Սակայն համագումարն այժմյանից կարող են նշել, վոր մեր փինանսական քաղաքականության կիրառման ժամանակ, Խորհրդային իշխանության մարմինները պարտավոր են գյուղացիական վարկի հարցերին վորքան կարելի յե շատ ուշադրություն նվիրել, բարձրացնել այդ վարկի չափը, եժանացնել այն և յերկարաժամանակյա վարձնել։

Մենք շատ լավ ենք հասկանում մեր վարկի առթիվ արվող զրախոսությունների եյությունը—զրախոսություններ, վորոնք անհիմն չեն, այդ վարկը թանկ ե—այս մեկ, —նա խիստ կարծ ժամանակյա յե—յերկուս։ Սա—ճիշտ դիտողություն ե։ Ճիշտ ե, վոր այն վարկը, վոր մենք տալիս յենք գյուղացիությանը, նախեռաջ թանկ ե և, յերկրորդ, բավականաչափ յերկար ժամանակյա չի։ Բայց վորպեսզի ստեղծենք եժանագին վարկ, վորպեսզի յերկար ժամանակյա վարկ ստեղծենք, մենք պետք են ավելի հարուստ լինենք, քան այժմ ենք։

Դուք գիտեք, վոր մեզ վոչ վոք վոչինչ չիտա մեր տնտեսության վերականգնման համար, իսկ յեթե նույնիսկ կամենան տալ, կտան վոչ թե նրա համար, վոր մենք ոգնենք մեր գյուղացիությանը, վորպեսզի նա բարձրացնի իր տնտեսությունը՝ ամենին, —այլ կտան այնպիսի պայմաններով, վոր դրանք ստրկական վիճակի մեջ կդնեն մեր թե գյուղացիական և թե գործարանային տնտեսությունը։ Այս պատճառով այս ասպարիզում մենք ստիպված ենք առաջ գնալ աստիճանաբար, նապատակ ունենալով և առանց հոգնության գնալով դեպի վարկի եժանացումն ու նրա ժամանակամիջոցի յերկարացումը։

Բայց մենք պետք են գյուղացիությանն ուղղակի ասենք—և յես հուսով եմ, վոր դուք, գյուղացիության ներկայացուցիչներդ, այդպես ել կանեք տեղերում, —վոր յեթե դեպի մեր վարկային ցանցը գյուղացիության խնայողություններ

չհոսեն վարից, —յեթե գյուղացիությունն ինքը չսովորի հասկանալ՝ վոր խնայած դրամն իր պետությանը, իր բանվորագյուղացիական խորհրդային պետության պահ տալը՝ լավագույն ձեն և այդ դրամի ոգտագործման և լավագույն ձեն ամբողջ գյուղացիության դրության բարելավման—եժանագին յերկար ժամանակյա վարկ ստեղծելը ծայր աստիճան գծվար կլինի մեզ համար։

Այս պատճառով մենք ասում ենք. ճիշտ ե, այն միջոցներով, վոր մենք ստանում ենք վորպես պետություն, այսինքն պետական գանձարանի միջոցներով, մենք կավելացնենք գյուղատնտեսական բանկի և մեր վարկային հաստատությունների հիմնական կապիտալները, բայց գիտցեք, ընկեր գյուղացիներ, վոր ձեր գրաններից հարկի ձեռվ դեպի մեր գանձարանը հոսող կապիտալներն այնքան մեծ չեն, վորպեսզի մենք կարողանանք տալ այն լայն և եժան վարկը, վորն անհրաժեշտ ե գյուղացիության բարձրացման համար։

Այդ բանի համար պահանջում ե իրեն գյուղացիության վարկային և տնտեսական ինքնազործությունը, պահանջում ե, վոր նա ուժեղացնի իր ակտիվ մասնակցությունը վարկային հաստատությունների զորեղանալուն։

Այդ ե պատճառը, վոր մենք այսպես ենք գրում։

«Նկատի ունենալով, վոր գյուղացիական տնտեսությունների վողջ մասսայի հետագա բարձրացումը հնարավոր կրառնա միայն լայն, եժանագին և գյուղատնտեսության պայմաններին համապատասխանող վարկ տալու դեպքում, դյուղացիների համար վարկ ստեղծելու գործում հիմնական խնդիր համարել տվյալ մոմենտում վարկի ժամանակամիջոցի յերկարացումն ու նրա եժանացումը։

Այս նպատակով անհրաժեշտ ե, մեկ կողմից, ավելացնել կենարոնական և հանրապետական գյուղատնտեսական բանկերի միջոցները. այդ պատճառով հիշյալ միջոցները պետք են ավելացնեն պետական միջոցներից մոտագա տարում վոչ պակաս, քան—100 միլիոն ռուբլով. իսկ մյուս կողմից—ամեն կերպ պետք են բնակչության խնայողությունները գրավել դեպի գյուղատնտեսական վարկային ստորին կոռպերատիվներն ու գյուղատնտեսական բանկերը. ընդ սմին պետք են այնպես անել, վոր իրենց խնայողություններն այս ձեռվ պահ տալն ավանդատունների համար մեծապես շահավետ լինի։

Հնդ սմին՝ գյուղատնտեսական վարկային հաստատությունների արամագրության տակ գտնվող միջոցները, գյուղացիական տնտեսությունը վարկավորելուց զատ, այլ նպատակների չեն կարող արամագրվել: Վարկային միջոցների հատկացումը պետք է սերտորեն կապել հողային մարմինների արտադրական ծրագրերի հետ և գլխավորապես նկատի առնել գյուղի միջակ ու շքավոր խավերի և նրանց միավորումների տնտեսական կարիքների բավարարումը:

### ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Ահավասիկ այն հիմնական միջոցները, վոր մասամբ արդեն ձեռք են առնված, մասամբ ել մոտ ժամանակներս պետք է ձեռք առնվեն, և վորոնց միջոցով Խորհրդային իշխանությունն ոժանդակելու յե գյուղացիության բոլոր խավերի որինական ձգտմանը՝ բարձրացնելու և ընդարձակելու իրենց տնտեսությունն ու ավելացնելու նրա յեկամուտը: Սակայն մենք պետք ե չամագումարի անունից ասենք գյուղացիությանն ու Խորհրդային իշխանության բոլոր մարմիններին, վոր գյուղացիական տնտեսության բարձրացման այդ հակայական աշխատանքն անիրազործելի կլինի առանց այն բանի, վորին վկացիմիք հլյիչն իր վերջին հոդվածներում կուլտուրական հեղափոխություն անունն ե տվել, այսինքն՝ առանց բնակչության ընդհանուր կուլտուրական մակարդակի բարձրացման, առանց կատաղի և վճռական պայքարի ընդդեմ անդրագիտության, ընդդեմ հին ստրկական սովորույթների, հասարակական աշխատանքի անընտելության և նախաձեռնության բացակայության, վորը մեզ ժառանգություն ե մնացել կապիտալի և թագավորի հին ժամանակների բռնությունից:

Այդ ախտը դեռևս կա մեր գյուղում, և Խորհրդային իշխանությունը պետք է հին կարգերի այդ ախտի դեմ պայքարելու գործիքի վերածվի: Այս իսկ պատճառով, մենք մեր բանաձեռնում առաջարկում ենք ձեզ ընդունել, վորպես գյուղացուն ուղղիք հայտարարություն, հետեւյալը.

«Բոլոր այդ ձեռնարկումներին, վորոնց նպատակն ե բարձրացնել և ամրապնդել գյուղացիական տնտեսությունը, ավելացնել նրա յեկամուտը և բարելավել գյուղացիության լայն մասսաների նյութական զբությունը—պետք ե հետեւն խիստ որինականության սահմանումն ու բնակչության ընդհանուր կուլ-

տուրական մակարդակի բարձրացման ուժեղացրած աշխատանքը:

Անգրագիտության վերացումը, ինքնագործունելության բարձրացումը, նախաձեռնության ուժեղացումը և աշխատանքի ժամանակ հասարակական սովորույթների ուժեղացումը, վորառաջին հերթին խորհրդային կոռպերատիվ կազմակերպությունների միջոցով են իրականացվում՝ գյուղացիական տնտեսության բարձրացման և ամրացման ընդհանուր աշխատանքի անհրաժեշտ տարրերն են»:

Մրանք են ընդհանուր գերով այն ձեռնարկումները, վորոնց նկատմամբ մենք առաջարկում ենք ձեզ հավանություն հայտնել համագումարի անունից և վորոնց հետ, ինչպես յետարգեն ասեցի, անհրաժեշտ ե ծանոթացնել յուրաքանչյուր գյուղացու:

Յես սահմանափակվեցի միայն այն կետերի պարզաբանությամբ, վորոնք պարզաբանության կարող ելին: Յես կարծում եմ, վոր բազմամիլիոն գյուղացիությունը, ծանոթանալով այդ միջոցների հետ, այլև կարիք չի զգա հատուկ կոմենտարիաների, վորպեսզի հասկանա, վոր բոլոր այդ միջոցները թելազրված են Խորհրդային իշխանության ձգտումից գործնականում ունալ կերպով ոգնել գուղացիությանը, վորպեսզի նա բարձրացնի իր նյութական բարեկեցությունն ու զարգացնի իր տնտեսությունը:

Այս պատճառով իմ տրամադրության տակ մնացած ժամանակը յես ուզում եմ հատկացնել միայն այդ ձեռնարկումների ընդհանուր բնույթի պարզաբանությանը:

### ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Յես կարծում եմ, վոր ձեզ համար միանգամայն պարզ ե, վոր այս բոլոր միջոցների հիմքը մեր այն հաստատուն համոզմունքն ե, թե հասել ե ժամանակը, յերբ Խորհրդային իշխանության բոլոր ուժերը պետք ե ուղղվեն մի կողմ—արձակելու արտադրական ուժերի կաշկանդումը գյուղում:

Յեթե խորամանկ գիտական խոսք «արձակելը» և «արտադրական ուժերի ծավալելը» գիտական լեզվից փոխադրենք յուրաքանչյուր գյուղացու համար հասկանալի լեզվի, պետք ե այսպես ասենք. Խորհրդային իշխանությունը ցանկանում ե, վոր գյուղում գյուղացիական տնտեսության մեջ, արտադրվող

մթերքների քանակը վորքան կարելի յե ավելանա, և վոր այդ մթերքների արժեքը, նրանց գինն ևս նույն չափով ավելանա: Ողնել զյուղացիական տնտեսությանը, վոր նա արտադրի կարելույն չափ շատ զյուղատնտեսական մթերքներ և արտադրի այնպիսի մթերքներ, վորոնք իրոք կարող կլինեն վարձատրել զյուղայու աշխատանքը, վորոնք կարող կլինելին տալ նրան յեկամուտ և հնարավորություն կուտակելու նոր միջոցներ՝ հողի մշակությանը հատկացնելու համար-ահավասիկ այն խնդիրը, վոր առաջարկում և իրեն Խորհրդային իշխանությունը գյուղացիության նկատմամբ:

Դրա համար անհրաժեշտ և վերացնել մի քանի սահմանափակումներ, վոր մնացել են մեր զյուղում, վորպես ուղղմական կոմունիզմի հին անցած շրջանի ժառանգույթ: Յեթե դուք հարցնեք ձեզ ու մեզ, թե զյուղում և այն որդաններում, վորոնք զյուղի շուրջն են աշխատում, կան իրոք այդ ուղղմական կոմունիզմի մնացորդներ և կմն արդյոք այնպիսի տարրեր, վորոնք ցույց են տալիս, թե տնտեսական նոր քաղաքականությունը դեռևս ամբողջապես զյուղ չի թափանցել, մենք պետք ե պատասխանենք. այն, այդ քանը կա և այդ տարրերն այժմ պետք և վերացվեն:

Մենք պետք ե զյուղացիությանը հնարավորություն տանք, վոր որինական ճանապարհով ավելի ազատ կերպով գործադրի իր աշխատանքը և ավելի մեծ ազատությամբ ոգտվի իր աշխատանքի արդյունքներից:

Դա անխուսափելիորեն կհասցնի այնպիսի դրության, վոր կուտակման պրոցեսուը զյուղացիության մեջ կուժեղանա:

Յեթե այդ ձեռնարկումները նկատի ունեն բարձրացնել արտադրական ուժերը զյուղում, պարզ ե, վոր մենք չենք կարող աչք փակել այն բանի վրա, վոր այդ իսկ միջոցներից, մանավանդ նրանցից մի քանիսից (ինչպես, որինակ՝ վարձակալությունից, վարձու աշխատանքի ավելի ազատ գործադրումից) կը ոգտվեն ամենից առաջ, առաջին հերթին և ամենալայն չափերով զյուղի հարուստ տարրերը: Ծիծաղելի կլիներ, յեթե մենք փորձեինք ժխտել այդ ծիծաղելի կլիներ, յեթե մենք, բանվորներս ու զյուղացիներս, վոր յերեք հեղափոխություն ենք արել, փորձեինք ինքնախարենքության քաղաքականություն վարել: Զեա ավելի հիմար քաղաքականություն, քան ինքնախարենքության քաղաքականությունը: Վորոշ քայլ անելիս, մենք պետք

ե ուղիղ նայենք իրականության աչքերին, աներկյուղ կերպով գնանք մեր ընտրած ճանապարհով: Միայն այն ժամանակ մենք կհաղթենք: Յեվ բաց աչքերով նայելով այդ ձեռնարկումների գումարին, մենք պետք և ասենք մեզ, վոր այդ ձեռնարկումներն անհրաժեշտ են: Նրանք ծավալում են զյուղի արտադրական ուժերը, նրանք անհրաժեշտ ազդակներ են, վոր զյուղացիական տնտեսությունը մզում են դեպի իր արտադրականության ավելացումը, դեպի իր արժեքի բարձրացումը, դեպի իր ընդարձակումը: Բայց այդ միջոցներից առաջին հերթին կարող են ոգտվել զյուղի հարուստ խմբավորումները:

Այս, մենք զյուղի արտադրական ուժերի լիակատար զարգացման կողմնակից ենք: Մենք կողմնակից ենք, վոր զյուղացիական անտեսության ապրանքայնացումն ավելի ու ավելի բարձրանա, վորպեսզի զյուղացին, հետզհետեւ ավելի ու ավելի արտադրելով և ավելի ու ավելի մեծ չափերով բավարարելով իր պահանջները, միևնույն ժամանակ կարողանա ավելի ու ավելի մեծ քանակությամբ մթերքներ հանել շուկա: Մենք կողմնակից ենք զյուղատնտեսության ինտենսիվիկացիայի, զյուղի ինդուստրալիզացիայի, մենք կողմնակից ենք այն բանին, վոր զյուղացին հնարավորություն ունենա կուտակելու նոր միջոցներ և այդ միջոցները հատկացնե ազնվացրած սերմերի, նոր մերենաներ գնելու, զյուղատնտեսական կուտարայի բարձրացմանը: Այս, մենք համարվում ենք կուլակ համարելուց այն զյուղացուն, վորն, ոգտվելով Խորհրդային իշխանությունից, ոգտվելով Խորհրդային վարկից, Խորհրդային կոոպերացիայից, լավացնում և իր տնտեսությունը, բարձրացնում նրա տեխնիկական մակարդակը և խորհրդային արգյունարերությունից վարկով ձեռք և բերում նոր մեքենաներ: Մենք խելագարներ կլինեյինք, յեթե իր տնտեսությունը բարձրացնելու համար Խորհրդային իշխանությունից ոգտվող, Խորհրդային իշխանության մարմիններից ոգտվող, Խորհրդային վարկից և Խորհրդային իշխանության միավորման ձևվերից ոգտվող զյուղացուն կուլակ համարեյինք:

Բայց մենք աչք չպետք և փակենք այն բանի վրա, վոր ապրանքապտույտի ազատության պայմաններում, մանր, անհատական մասնավոր տնտեսարարության պայմաններում, թե կուզ և ազգայնացրած հողի վրա, զյուղի բուրժուական տարրերն անխուսափելիորեն պիտի աճեն, կաշխատեն հետզհետեւ ավելի ու ավելի զորեղ, ավելի ու ավելի ամուր գիրքեր զբավել տնտեսու-

թյան մեջ և, այդ տնտեսական գիրքերի վրա հենվելով, կփորձեն առաջ գնալ նաև քաղաքական ասպարիզում:

Հապա ել ինչու քենք մենք մարքսիստական գրքույկներով սովորել, իսկ մեր վողջ յերկրի բանվորներն ու գյուղացիները մարքսիզմ սովորել նույնպես մի բավական լավ աղբյուրից—իրենց կատարած յերեք հեղափոխություններից—ոգտվելով,—ել ինչու եյինք մենք սովորում, յեթե չպետք ե հասկանայինք, վոր ազատ ապրանքապտույտը.—յերբ կան մանր ապրանքարտագրողներ, թեկուզ և աղքայնացրած հողի վրա, թեկուզ և այն գեղքում, յերբ աղքայնացված են ֆարրիկաները, գործարանները և այլն—կապի ալիզմի տարրեր և ստեղծում, Այս բանի վրա աչք չպետք ե փակել: Պետք ե բաց աչքերով նայել սրա վրա, և վորպեսզի կարողանանք գնալ այն ճանապարհով, վոր մենք ներկայում առաջարկում ենք, պետք ե վոր մենք կարողանանք պատասխանել այն չորս հիմնական հարցերին, վոր ներկայում դրվում են և հետքետե ավելի պահանջնութ ձեռվ են դրվելու Խորհրդային իշխանության յուրաքանչյուր պատասխանառութեկավարի, յուրաքանչյուր գիտակից աշխատավորի առաջ:

### ԳՅՈՒՂԻ ՆԿԱՏՄԱՐԻ ՄԵՐ ՎԱՐԵԼԻՔ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Ինչու յե անհրաժեշտ այդ քաղաքականությունը: Ահա-վասիկ առաջին հարցը: Յերկրորդ հարց. ինչ հարաբերության մեջ են գտնվում այս քաղաքականությունը և այն քա-ղաքականությունը, վոր մենք մինչ այսոր վարել ենք, Յերրորդ հարց. ինչ կապ կա այդ քաղաքականության և սոցիալիստական հասարակություն ստեղծելու ինդրի ու Խորհրդային իշխանության այն վճռականության միջն, վորով նա ձգտում ե կա-ռուցել սոցիալիստական տնտեսությունն ու ավարտել այդ կա-ռուցումը: Յեվ չորրորդ հարց. յեթե այդ որենքները, վոր անհրաժեշտ են և ուղիղ, վորոյ զազեռաներ են գյուղի վերնախավ բուրժուական տարրերի համար, հապա ել ինչն և կարող ապա-հովել մեղ կապիտալիստական հարաբերությունների վերականգ-նումից: Յեվ կա արդյոք այդպիսի յերաշխիք: Յեվ յեթե այդ-պիսի յերաշխիք կա, ինչ պետք ե անենք, վորպեսզի մանր-բուրժուական տարրերի բարձրացման վտանգի և նոր կապիտա-

լիստական հարաբերությունների զարգացման առաջն առնենք ու չթողնենք, վոր նա ուժեղանա:

Սոցիալիզմի հետ ճանապարհ ցույց տալ մենք յերբեք չենք խոստացել, և մեր մեծ ուսուցիչ Վլադիմիր Իլյիչը, հաճախ և կրկնել վոր սոցիալիզմի կառուցումն ամենավիճ գյուրին բան չե-Բավական չե, վոր մենք տապալեցինք բուրժուազիային, բավա-կան չե, վոր մենք պատերազմի դաշտում հաղթեցինք կալվածա-տերերին—անհրաժեշտ և ագրարային յերկրում սոցիալիզմ կա-ռուցել մի յերկրում, վորտեղ տասնյակ միլիոններով փոշիացած գյուղացիական տնտեսություններ կան. մի յերկրում, վորը կա-պիտալիստական ողակման մեջ և գոնվում, —իսկ այդ ողակում, ամեն տեսակի քողարկված, բացահայտ և թագնված ձեվերով աղդում և բուրժուական տարրերի աճման վրա.—մի յերկրում, վորը տասնյակ թելերով կապված ե համաշխարհային տնտեսության հետ: Կառուցել սոցիալիզմ այդտեղ և այն ել այնպես, վոր ամբողջ գյուղացիությունը մասնակցի այդ կառուցմանը, այն-պես, ինչպես Վլադիմիր Իլյիչն և տակ, այնպես, վոր այդ գոր-ծի զեկավարը, սրողետարիտատն՝ այդ տնտեսական աշխատանքը կատարելիս վոչ թե կտրվի գյուղացիությունից, այլ իր յուրա-քանչյուր քայլն այնպես անի, վոր գեպի այդ սոցիալիստական շինարարությունը ներգրավի գյուղացիության ավելի ու ավելի մեծ մասսաներ—այդ արգեն անհամեմատ ավելի բարդ գործ է: Իսկ այդ գործի բարդությունը պահանջում է, վոր մենք, գյու-ղատնականությունը գյուղում բարձրացնելու համար այս կամ այն միջոցները ձեռք առնելով, գիտակցենք, վոր այդ միջոցներից կարող են ոգտիլ վոչ թե միայն մեր դասակարգային դաշնա-կիցները, չքավոր գյուղացիությունն և միջակ գյուղացին, այլ և մեր դասակարգային հակառակորդները—գյուղի բուրժուական վերնախավը: Պետք ե այս բանին բաց աչքերով նայենք, պետք ե կշռենք մեր ուժերը, պետք ե հասկանանք, թե ինչ զիրքեր կարող են գրավել նրանք—և ապա հաստատուն քայլերով գնանք մեր զծած ճանապարհով:

Մենք գիտենք, վոր տատանումներ կային նաև նեպը մացնե-լու սկզբին: Բայց այժմ միթե մեկն ու մեկը կասկածում է, վոր տնտեսական նոր քաղաքականությունը, վորն սկզբում իրոք կարող եր ընդունվել, վորպիս մեր զիրքերը պարոն նեպանե-րի ձեռքը հանձնելու քաղաքականություն, այժմ, յերեք տարվա ընթացքում, ապացուցեց, վոր այդ մանյովրից ամենից առաջ

մեր տնտեսության սոցիալիստական տարրերը շահեցին:

Հենց այդ տնտեսական նոր քաղաքականության շնորհիվ մենք ստեղծեցինք այնպիսի պայմաններ, վոր 3 տարվա ընթացքում 2 անգամով ավելացրինք մեր արդյունաբերության զարգացումը, նվաճեցինք այնպես, ինչպես յերբեք չելինք նվաճել խոշոր մեքենական ինդուստրիայի դիրքերը, կարողացանք այդ խոշոր մեքենական ինդուստրիայի շուրջը համախմբել զեկավար դասակարգը, պրոլետարիատը, կարողացանք բարձրացնել պրոլետարիատի սոցիալական գորությունը և այդպիսով ամրողապես ու լիովին ամրացրինք այդ մանյովը, վորպես այնպիսին, վորն արտաքնապես կարծես թե զիջում եր բուրժուական տարրերին, բայց իրոք նկատի ուներ ամրացնել մեր տնտեսության սոցիալիստական տարրերը: Նույնն և նաև այստեղ: Յեթ յես կարծում եմ, վոր 3 տարուց պակաս կհարկավորվի, վորպեսզի համոզվենք, վոր այս ձեռնարկումները, վորոնց նպատակն ե բարձրացնել գյուղացիական տնտեսությունը, չնայած վոր գրանցից կոդավի նաև գյուղացիության վերնախավ բուրժուական մասը, այնուամենայմիվ ամրողապես կարդարացվեն և կամրապնդեն բանվորների ու գյուղացիների դաշնոքը:

Վորպեսզի այդ ճանապարհը պարզ և վորոշակի պատկերացնենք և այդ ճանապարհով անշեղ ու անսխալ գնանք, յես կփորձեմ խիստ համառոտակի պատասխանել իմ մատնանշած չորս հարցերին, 1). ինչո՞ւ յե անհրաժեշտ այդ քաղաքականությունը, 2). ինչ կազ կա նրա և նախկին քաղաքականության միջեվ, 3). ինչ կազ կա նրա և սոցիալիզմի կառուցման միջեւ, 4). ինչով ենք ապահոված բուրժուական հարաբերությունների վերականգնումից:

## ՄԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱՋԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱ- ՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Նախ և առաջ այդ քաղաքականությունն անհրաժեշտ և գյուղացիության իսկ շահերի տեսակետից:

Մենք, անկասկած, վորոշ գրավումներ ենք արել գյուղատնտեսության գավառում:

Բայց մենք շարունակուս ենք մնալ մի յերկիր, վորտեղ մուրացիկ գյուղացիությունը կանգնած ե տնտեսական և կուլտուրական զարգացման խիստ ցածր մակարդակի վրա: Այս փաստը

զանցառության տալ չենք կարող և նրանից հրաժարվել—նույնպես: Այս պետք ե յելակետ ընդունել:

Յեթե դուք դիմեք այն արտաքին յերեվույթներին, վորվերջերս գրավում են մեր ուշադրությունը, դուք կտեսնեք մի տարրինակ փաստ—մեր գյուղացիական շրջանների գերբնակված լինելու փաստը: Մի քանի վիճակագիրների հաշվից, —վորոնք, իհարկե կարող են սխալվել, բայց վորոնք մոտավորապես ճիշտ թվեր են տալիս,—պարզվում ե, վոր յեթե մեր յերկրի աճը (պրոցտ) ընդունենք  $1\frac{1}{2}$  տոկոս (իսկ դա պատերազմից հետո յերեմն 2 ու կես տոկոսի յեր հասնում) և այդ 1 և կես տոկոսը հաշվենք վոչ թե մեր յերկրի բնակչության 130 միլիոնից, այլ միայն 100 միլիոնից, կտեսնենք, վոր մեր բնակչության յուրաքանչուր տարվա աճը հավասար ե մեկ և կես միլիոն հոգու:

Յեթե մենք մեր արդյունաբերությունը զարգացնենք ամենաարագ թափով,—մեր քաղաքային արդյունաբերությունն այնուամենայնիվ չե կարող կլանել այդ նոր բնակչությունը: Յեթե ընկ. Զերժինսկին շարունակի ուրախացնել մեզ արդյունաբերության հետզհետե ավելի արագաթափ ընդարձակման լուրզվ, մենք տարեկան կը կլանենք 100-200-300 հազար նոր բանվորներ: Մենք այս տարի գեպի նոր հողերը փոխադրեցինք 150 հազար գյուղացի, բայց յեթե մենք գաղթականների թիվը նույնիսկ յերկուանգամբ ավելացնենք—հասցնենք 300 հազար հոգու—այնուամենայնիվ մենք տարեկան մոտավորապես մեկ միլիոն ավելցուկ (ԱՅՑԵՐԿԱՆ) բնակչություն կունենանք:

Ինչո՞ւ յե ստացվում այս ավելցուկ բնակչությունը: Այն պարզ պատճուռ, վոր հետամնաց գյուղացիական տնտեսությունը, վորն անխնտենսիվ, հնավանդ ձեվերով և տարգում, չե կարողանում կլանել գյուղացիության իսկ բանվորական ուժը, վորովհետեւ հողն այնպիսի գրության մեջ ե, վոր մեզ անբավար չափով և վատ և կերակրում: Խորհրդային իշխանությունն ու Միության գյուղացիությունը պետք ե նպատակ գնեն այնպես անել, վոր մեր հողն ավելի մեծ թվով մարդ կերակրի և կերակրի ավելի լավ, քան մինչեւ այսոր կերակրել ե:

Բայց այդ ինչպիս անել: Այդ կարելի յե անել միայն մի ճանապարհով—հողին, նրա մշակությանը, նրան խնամելու գործին նորանոր միջոցներ հատկացնելով ու այդ հատկացնեմերը գործադրելով: Պետք ե այնպիս անել, վոր գյուղացիությունը կարգանա այնպիսի պայմաններ ստեղծել, վորպեսզի յուրաքանչյուր

դեսյատին հողի արտադրանքն ավելանա և արտադրանքի արժեքը բարձրանա: Այն ժամանակ այլեվս չի լինի այնպիսի յերեվութի, յերբ գյուղի ավելցուկ ձեռքերը քաղաքում գործազրկություն են ստեղծում, յերբ գյուղը ճնշում է քաղաքին և, գործազրություն են ստեղծում նաև քաղաքում ու ջղայնացնում է արդյունաբերության ամբողջ պրոցեսը:

Այս դրությունից միայն մի յելք կա. զարգացնել գյուղացիական տնտեսությունը, ստեղծել այնպիսի պայմաններ, վոր նա, տնտեսարարության նոր ձեվեր գործազրելով, կարողանական նոր ավելցուկ ուժը:

Հենց այդ նկատառումն է, վոր հարկադրում է մեղ իր ամբողջ ծավալով արծարծել գյուղի արտադրական ուժերի զարգացման հարցը գյուղացիության տեսակետից:

### ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀԵՐԸ

Բայց նույն բանն է պահանջում և մեր արդյունաբերությունը: Ցեթեք դուք հարցնեք գիտակից պրոլետարին, թե ինչպիսի գյուղ և պետք մեր արդյունաբերությանը՝ արդյոք հին գյուղը, վոր չուներ հնարավորություն և ցանկություն փոքր ի շատել լայն չափերով ձեռք բերելու պետական արդյունաբերության արտադրանքները. այն գյուղը, վորն աշխատում է կառավարվել առանց մեխի, առանց մեքենայի, առանց յերկաթի, առանց ելեկտրականության, առանց նավթի, վորը վորքան կարելի յեշատ և աշխատում է հարկադրված և վորքան կարելի յեշատ սահմանափակել քաղաքացին արտադրանքի գործածումը.—արդյոք այս գյուղն է մեղ պետք:

Միթե բանվոր դասակարգի տեսակետից, արդյունաբերության զարգացման տեսակետից, մեղ այնպիսի տնտեսատեր և պետք, վորը սերմանափոխության հին պապենական սիստեմով և հերկում իր հողը և մարիս և վառում: Թե՞ պետք և նոր գյուղ, վորն անընդհատ ավելացնելու յե յերկաթի սպառումը, չթի սպառումը, նավթի սպառումը, լրագրերի սպառումը, գրքերի սպառումը: Գետք և արդյոք այնպիսի տնտեսատեր, վորը բարձրացնելու յե իր տնտեսությունը, այդ տնտեսության կատարելաւ գործման նոր միջոցներ և գործադրելու, վորն ավելի յե հոգալու և իր մասին, և իր ընտանիքի մասին, և իր զավակների մասին, վորը կհասկանա ելեկտրավորման շահավետությունը և այնպիսի գրության մեջ կգտնվի, վոր գյուղատնտեսության ելեկտրավո-

րում ու մեքենացումը նրա համար վոչ թե հեքիաթ կինի, այլ ոեալ կերպով իրականանալի գործ:

Այս հարցին յուրաքանչյուր գիտակից պրոլետար կպատասխանի. «Այս, մեղ պետք ե նոր գյուղ, զարգացող գյուղ, հարտացող գյուղ, վորը հնարավորություն ունի միջոցներ կուտակել իր տնտեսությունն ավելացնելու համար. մեղ նոր տնտեսատեր ե պետք»:

Մենք այստեղ տեսնում ենք, վոր ամբողջապես և լիովին համընկնում են գյուղացիության շահերը, վորը ձգտում է նոր տնտեսարարության լայն ճանապարհ յելնել և սոցիալիստական արդյունաբերության շահերը, վորը պետք ե հիմնվի վոչ թե մուրացիկացող գյուղացիության, այլ հարստացող գյուղացիության վրա, վորը չիկարող թույլատրել, վոր յերբ կա արդյունաբերության զարգացման այն տեմպը, վոր մենք յուրացրել ենք, մենք անսպասելի կերպով դեմ առնենք գյուղացիական շոկայի նեղ սահմաններին, մի շուկայի, վորն անընդունակ է կլանելու այն արտադրանքները, վոր գնալով ավելի ու ավելի մեծ քանակությամբ շուկա յե նետելու մեր սոցիալիստական արդյունաբերությունը: Մենք պետք ե պրոլետարական սոցիալիստական բերդեր կառուցենք հանձինս ֆարբիկաների ու գործարանների, և բարձրացնենք յերկրի տեխնիքական մակարդակը: Մենք մեր արդյունաբերությունը վոչ թե միայն նախապատերազմյանի մակարդակին պետք ե հասցնենք, այլ և ավելի առաջ անցնենք, ծածկենք մեր յերկրը նոր ֆարբիկաների և գործարանների ցանցով, ելեկտրական կառուցումներով և այլն:

Բայց միթե այս բանը կարելի յե անել հենվելով այն գյուղացիության վրա, վորն ինքը չի ավելացնելու իր սպառումը և վորն արդյունաբերությանը չի առաջարի նոր պահանջներ և չի կարողանա վճարել արդյունաբերությանն իր նորանոր պահանջների գինը: Ինարկե, վոչ: Այս իսկ պատճառով լիովին համընկնում են բանվորների և գյուղացիների շահերը գյուղի արտադրական ուժերի ծավալման խնդրում, գյուղացիական տնտեսության և նրա հասութաբերության մակարդակի բարձրացման խնդրում: Այս և մեր զորության պատվանդանը:

Մենք գիտենք, վոր ներկայումս, յերբ գյուղացիության առաջ, նրա տնտեսական ամրացման և խորհուրդների վերընտրությունների հետեւանքով իրենց վողի հասակովը մին կանգնում են մի շարք քաղաքական և տնտեսական կարելորագույն

նշանակություն ունեցող հարցեր,—կան մարդիկ, վորոնք կուզեյին բաժանել իրարից բանվորներին ու գյուղացիներին և վորոնք փափսում են, «Յերբ գյուղացիությունը թվականապետավելի յե, գյուղացիներն ել ինչու պետք ե հանդուրժեն պրոլետարիատի դեկավար դերը»:

Բայց յես միանգամայն համոզված եմ, վոր այժմ այդ հեքիաթներին չի հավատում նույնիսկ ամենահետամնաց, ամենամոլորված գյուղացին, վորովհետեւ այս յերեք հեղափոխությունների ընթացքում մենք սովորեցինք ըմբռնել, վոր յեթե գյուղացիական յերկիրը ծածկված ե առանձին մեկուսացած գյուղացիական տնտեսություններով և չունի ուժեղ խոշոր արգյունաբերություն ու համախմբված պրոլետարիատ—նա անխուսափելորեն դառնում է ստրուկների յերկիր:

Յեթե մի վարկյան յենթադրենք, վոր մեր արդյունաբերության և մեր կազմակերպված պրոլետարիատի սոցիալական կարողությունը վոչ թե սկսեր բարձրանալ, ինչպես ընկ. Զերժինսկին եր զեկուցում, այլ իջնել, պրոլետարիատը փոշիանար, արդյունաբերությունն ընկներ—միթե կարծում եք, վոր զբանից հետո գյուղացիական շահերի լիակատար գերիշխանության շրջան կգար:

Խորապես սխալվում եք: Վաչ. խոշոր գործարանների նվազած արտադրականությունն և փոշիացած պրոլետարիատ ունեցող յերկիրը, վորպես ռասսայա հրամանական կամաց առաջարկ կապիտալի ձեռքը և կիրածվեր գաղութային յերկիր, ինչպես զաղութների յեն վերածված բոլոր այն յերկրները, վորոնք չեն կարողացել ստեղծել խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ և կազմակերպված կիտակից պրոլետարիատ: (Ճափեր):

Յեվ այս իսկ պատճառով յես համոզված եմ, վոր պրոլետարիատի զեկավար գեր ունենալը բանվորների և գյուղացիների դաշինքի մեջ կհասկանա յուրաքանչյուր անգամ ամենանետամնաց գյուղացին, վոր ապրել ե յերեք հեղափոխության շրջան և ցանկանում ե պայքարել կալվածատերերի ու կապիտալիստների լծի վերականգնման գեմ ու կընդունի, վոր այդ զեկավար գեր ունենալու իրավունքը պրոլետարիատին և պատկանում: Անօպասիկ մեր վարած քաղաքականության անհրաժեշտության ապացույցները:

## ՄԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՈՒՄԸ

Այժմ գանք յերկրորդ հարցին. Ի՞նչ կապ կա գյուղի նկատմամբ կուսակցությանն վարած քաղաքականության և այն քաղաքականության միջնվ, վոր վարում ենք այս տարվա աշնանից սկսած: Կա այստեղ քաղաքականության բեկում: Յես կարծում եմ, վոր վոչ: Հիմք չկա ասելու, թե մենք այժմ բեկում ենք քաղաքականությունը: Մենք խորացնում ենք այն: Այն, մենք ավելի առաջ ենք գնում, քան կարող եյինք գնալ 1921, 1922, 1923 թ. թ.:

Յերբ Վլադիմիր Իլյիչն առաջին անգամ եր դնում այն խնդիրը, վորն իր արտահայտությունը գտավ տնտեսական նոր քաղաքականության մեջ, այդ քաղաքականությունը հիմնավորող ճառերում նա ասում եր. «Մենք պետք ե տնտեսական նոր քաղաքականության անցնենք. արձակենք ապրանքապատույտի աղատությունը կաշկանդող կապանքները, վերացնենք ուղղվորստկան և, անցնենք հարկային սիստեմի, վորովհետեւ մեր յերկրում մթերքներ չկան»: Նա հաճուքով հաղորդեց նույն համագումարին, վորը լուծում եր այդ թեքումն անելու հարցը, թե ինքը տեղեկություն ե ստացել, վոր մեր մանածագործական ֆարբիկաների և լենինգրադի գործարանների համար հաջողվել ե Լոնդոնից դուրս գրել 18 միլիոն փութ ածուխ: Դա խոշորագույն անցք եր: Իսկ այժմ մենք ինքներս ենք ածուխ արտահանում արտասահման: Մենք ներկայում 80 միլիոն փութ նավթ ենք արտահանում: Մենք նույնիսկ մոռացել ենք մտածել այն անիծյալ ժամանակների մասին, յերբ Վլադիմիր Իլյիչն անձամբ պետք ե հետեւեր յուրաքանչյուր վագոն պարենի, յուրաքանչյուր գնացք նավթի առաքմանը, վորպեսզի մթան, ցրտի և սովի մեջ չմնան լենինգրադն ու Մոսկվան:

Մեզ մոտ ներկայումս չկա վոչ պարենի, վոչ վառելիքի, վոչ ել արտադրության սով: Իհարկե դա ստեղծում ե այնպիսի պայմաններ, յերբ մեր նախնական քաղաքականությունը կարելի յե նշանակելի չափերով խորացնել, և մենք կարող ենք ավելի մեծ աղատությամբ առաջ շարժվել, քան մեկ կամ յերկու տարի սրանից առաջ:

Յեթե գուք նայեք այն միջոցներին, վոր մենք ներկայումս առաջարկում ենք, այն մանապարհին, վորով մենք ներկայումս կամենում ենք տանել գյուղացիությունը, դուք իսկույն և յեթ կտեսնեք նրանց յերկու հիմնական գծերը:

Առաջին գիծը—գյուղացիական տնտեսության, գյուղի արտադրական ուժերի զարգացումն եւ յերկրորդ գիծը—մանր ապրանքարտադրողի, մանր հողագործի միավորումն ու կոռպերացիայի միջոցով խոշոր միություններ կազմելն եւ,—միություններ, վորոնք կարող կլինելին բռնել այն թերությունների տեղը, վորոնք նրա կոտորակված, մանր, հետամնաց տնտեսությունից են բղխում: Անավասիկ յերկու գծեր—գյուղի արտադրական ուժերի զարգացումը և բոլորի ու մասնավորապես չքավորների ու միջակների կոռպերատիվ միավորումը՝ գյուղատնտեսության եկոնոմիական և տնտեսական զորությունը բարձրացնելու հնարավորություն ստեղծելու համար:

Բայց միթե այս նոր բան եւ Արդյոք սա նշանակում եւ, վոր Խորհրդային իշխանությունն այժմ եւ միայն, վորայս մտքին եւ յեկել Վոչ, ինարկե, վոչ: Դեռևս այն ճառերում, վորոշումներում և հայտարարություններում, վոր ասում և անում եր Վլադիմիր Իլյիչը 1921 թվին, չորս տարի սրանից առաջ, այն մոմենտին, յերբ մենք տնտեսական նոր քաղաքականության եյլինք անցնում, կար այն քաղաքականությունը, վոր մենք այժմ կիրառում ենք, —և գյուղացիական տնտեսության զարգացման քաղաքականությունը, և միևնույն ժամանակ մանր գյուղացիական տնտեսությունների կոռպերատիվ միավորման քաղաքականությունը:

Իլյիչը գեռես այն ժամանակ գրում եր. «Գյուղացիությունից պետք եւ սկսել»: Այս նոր չի անված: Բայց մենք մեզ պետք եւ պարզ հաշիվ տանք այն մասին, թե ինչպես եր գործը գնում:

Միհավատացեք նրանց, ովքեր ասում են, թե գյուղացիության նկատմամբ այս քաղաքականություն վարելը թելաղբանք եւ այն հանգամանքի, վոր բոլշևիկները կամ Խորհրդային իշխանությունն զգացին, վոր գյուղացիության մեջ դժգոհություն եւ առաջանում և այդ պատճառով սկսեցին «փոխել իրենց քաղաքականությունը»:

Այս բանն ասում են բանվոր դասակարգի և գյուղացիության թշնամիները, այն բամբասողները, վորոնք ուղում են կովացնել բանվոր դասակարգն ու գյուղացիությունը:

Նրանց ասածը սխալ ե. 1921 թվին Վլադիմիր Իլյիչն ասել ե. գյուղացիությունից պես եւ սկսել, և մենք հենց այն ժամանականից գյուղացիությունից ենք սկսել:

Պարենավորման ռազմական վերացնելու, պարենավ-

կի անցնելու միջոցով մենք նոր մղում տվինք գյուղացիական տնտեսությանը: Այնուհետեւ վոչ մի բոպե չմոռանալով գյուղացիական տնտեսության շահերը, մենք մեր բոլոր ուժերով սկսեցինք վերականգնել մեր դրամական սիստեմը, վերականգնել մեր բյուջեն, վերականգնել մեր արդյունաբերությունը:

Յեկ մենք այն աստիճան հասանք մեր այդ բոլոր նպատակներին, վոր այժմ կարող ենք նոր մղում տալ գյուղացիական տնտեսությանը, հենվելով այն նվաճումների վրա, վոր արել ենք դրամական սիստեմի ասպարիզում, վարկի ասպարիզում, արդյունաբերության ասպարիզում:

Այժմ, վոչ մի բոպե չմոռանալով արդյունաբերության զարգացման գործը, մենք պետք եւ ոգտագործենք վերջին յերեք տարիների ընթացքում մեր նվաճած բոլոր զիրքերը, վորպեսզի տուաջ շարժենք գյուղացիական տնտեսությունը: Պետք եւ պարզ հաշիվ տանք մեզ, վոր այն քաղաքականությունը, վոր մենք այժմ առաջարկում ենք, վոչ թե այն պատճառով եւ կիրառվում 1925 թվին, վոր մենք առաջ չենք մտածել գյուղացիության մասին կամ մեր խելքը չեր հասնում այս միջոցներին, վոչ թե այն պատճառով, վոր մենք գերազանում կամ ավելի յենք սիրում այս կամ այն խավը, այլ այն պատճառով, վոր այս բանի համար նախնական պայմաններ եյին պետք:

Գյուղացիական տնտեսությանը վարկային ոգնություն ցույց տալու, գյուղացիությանը նորանոր հատկացումներ անելու քաղաքականություն վարելու համար անհրաժեշտ եյին նախնական պայմաններ, անհրաժեշտ եր զրամական ռեֆորմ:

Յեթե մենք դրամական ռեֆորմ մտցրած չլինեյինք, ու յես գայի ձեզ մոտ և ասեյի, թե մենք 100 միլիոն ռուբլի յենք հատկացնում գյուղացիական վարկի կապիտալն ուժեղացնելու գործին, գյուղացիները կծիծաղեյին ու կասեյին. «Յեթե դու 100 միլիոնը հատկացնելու յես լոկ գունավոր թղթերով, գյուղացիական տնտեսությունը վոչնչով չի լավանա»: Ամենից առաջ անհրաժեշտ եյին կայուն գրամներ, անհրաժեշտ եր, վոր ռուբլին զրնդար միայն այդ ժամանակ յես կարող եմ զալ ձեզ մոտ և ասել. «Անավասիկ այս գրնուն ուղղվիները, վոր բանվորներն ու գյուղացիներն են ստեղծել մենք կարող ենք հատկացնել գյուղացիության գործին, գյուղացիական տնտեսության բարձրացման գործին»: Այս ժամանակ այդ կլրնդա (ծափեր):

Իսկ յեթե մենք 1921—22 թ. գայինք ձեզ մոտ և ասեյինք.

«մենք գների իջեցման քաղաքականություն կվարենք», դուք առաջինը կլինելիք, վոր կպատասխանելիք. «բայց չե վոր վաճառելու բան չկա, Փարբիկաներն ու գործարանները չե վոր չեն բանում» (ծիծաղ):

Իսկ այժմ, յերբ ընկ. Զերժինսկին զեկուցելիս ասում եր, վոր մինչպատերազմյան մակարդակը իդեալ չե, այլ այնպիսի մի բան, վորին վաղը կամ վաղը չե մյուս որը մենք կհասնենք, — յերբ մենք մի տարվա ընթացքում 50 տոկոսով բարձրացնում ենք արդյունաբերությունը, յերբ մեր սոցիալիստական արդյունաբերության արտադրությունը սկսում ե կշիռ ունենալ, յերբ յես հիմա յեմ դալիս և ասում, թե մենք գների իջեցման քաղաքականություն պետք ե վարենք, — այդ նշանակում ե, վոր վոչ թե խոսքով, այլ իրոք գյուղացին եժան գնով կստանա չիթը, նավթը, մեխը, ռեալ մեքենան:

Ահավասիկ այն նախնական պայմանները, վորոնք անհրաժեշտ եյին, վորպեսզի գյուղացիական տնտեսությանը նպաստելու մասին արգող խոսակցությունները լինելին վոչ թե դատարկ խոսակցություններ, այլ ռեալ գործ:

Մեզ դեռևս Վլադիմիր Իլյիչն ե սովորացրել և մենք բոլորս, ինարկե, լավ ենք հիշում վոր գյուղացին — ռեալիստ ե, մեր գործերով ե դատում և գնահատում թե՝ բանվոր դասակարգը պետքական ե արդյոք, վորպես նոր պետություն կարուցող ու ղեկավար, և այդ անում ե վոչ թե այս կամ այն զգացմունքով ղեկավարվելով, այլ կշռադատում ե, թե արդյոք լավ տնտես ե նա, լավ կազմակերպիչ ե, լավ ե հասկանում գյուղացիության կարիքները, ժամանակին ե ոգնության գալիս, թե վոչ:

Բայց նա մեզնից անկարելին չի պահանջում. գյուղացին գիտե, վոր մենք աղքատ պետություն ենք, առանց հարկի չենք կարող կառավարվել, փոխառություն չենք ստանում, արդյունաբերությունը պետք ե բարձրացնել բանվորների և գյուղացիների միահամուռ ուժերով:

Նա միայն այն ե ասում, վոր յեթե դու պրոլետարդ, Խորհրդային պետության ղեկավարն ես, ուրեմն բարեհաճիբ ժամանակին նկատել իմ կարիքները և բավարարել նրանց համապետական կարելիությունների չափով:

Ուրեմն, յեթե մենք հարցնենք մեզ, թե այս յերկու հիմնա-

կան մոմենտները — յերկրի արտադրական ուժերի զարգացումը և այնուհետև մանր հողագործների, մանր գյուղացիների մասնաներին խոշոր, զորեղ գյուղացիական միությունների, կոոպերացիայի մեջ միավորելն, — իրոք նոր միտք ե, վորին խորհրդացին կառավարությունը և այն կոմունիստական կուսակցությունը, վոր մեղ վորոշ պոստերի յե նշանակել, միայն 1925 թվին են հասել, թե վոչ, — ամենակարճ պատասխանը տարու համար պետք ե ասեմ, թե ինչ ե ասել Վլադիմիր Իլյիչը 1921 թվին հենց այս յերկու հարցի առթիվ:

«Հիմնականն. — ասել ե Լենինը, — այն ե, վոր մանր գյուղացուն առաջ շարժելու աղդակ դրդիչ մղում լինի. Մեր պետական եկոնոմիկան մենք պետք ե կառուցենք համաձայն միջնակի եկոնոմիկայի, վորը մենք 3 տարվա ընթացքում չկարողացանք փոխել ու գեռ ևս 10 տարվա ընթացքում չպիտի կարողանանք փոխել»:

Յեզ այդ պատճառով, յերբ կուլակային տարրերը համայնքան ժողովների գան և ասեն, «բոլշևիկներն ուժեղ են հետին խելքով, — յերբ մենք նրանց անհանգույնացրինք, նրանք սկսեցին կուհել, վոր պետք ե ճանապարհ տալ գյուղացիական տնտեսությանը», գուք նրանց կպատասխանեք. 1921 թվին, յերբ գունույնիսկ բերան չեյիր կարողանում բացել խոսելու համար, ընկ. Լենինն ասել ե, վոր մեր ամբողջ պետական եկոնոմիկան պետք ե կառուցենք համաձայն միջակի տնտեսության: Յեզ հենց նույն այդ ժամանակ լենինն ասել ե, վոր «Ճանասեր գյուղացին մեր տնտեսական բարձրացման կենտրոնական գեմքն ե». այսինքն տնտեսապես բարձրանալ, ավելացնել մեր յերկրի գորությունը մենք կարող ենք միայն ջանասեր գյուղացու հետ միասին, — վոչ թե նրա դես, նրանից անջատ գործելով, այլ նրա հետ միասին: Նա — կենտրոնական գեմքն ե: Յեզ ընդհակառակը, այդ ջանասեր գյուղացին յերբեք չի բարձրացնի իր տնտեսությունը. վոչ մի ղեպքում կենտրոնական դեմք չի դառնա, յեթե փորձի իր եկոնոմիկան պետական եկոնոմիկայից դուրս կառուցել:

Նա պետք ե իր եկոնոմիկան բանվոր դասակարգի հետ միասին կառուցի:

Յեզ միավորելով ջանասեր գյուղացու, այդ կենտրոնական դեմքի, տնտեսական ջանքերը մեր բանվոր դասակարգի ջանքերի հետ, վորը լարում ե իր ամբողջ ուժը և բարձրացնում գործարանային տնտեսությունը, կարող ենք հասնել այն բանին, ինչի մասին յերազում եր ընկ. լենինը:

Ընկ. Լենինը նույն այդ ժամանակ, 1921 թվին, ասում էր միայն այն, վոր պետք ե ընդառաջել միջակին, բարձրացնել նրան, կարուցել նրա հետ միասին և վոչ թե նրա դեմ, այլև վորոշ բան պահենջում եր այդ միջակից—և նա, ի հարկե, ուղիղ եր գարվում:

Վլադիմիր Իլյիչը գրում եր.

«Բոլոր ուժերը տնտեսական ճակատին. պետք ե բարձրացնել աշխատանքի արտադրականությունը և ավելացնել արտադրանքի քանակը. Առանց այս խնդիրներն իրականացնելու, — վոչ մի շարժում դեպի առաջ հնարավոր չի Շեքե մենք այս բաններ ասում բանգորեի նկատմամբ, նույնը պետք ե ասենք նայել զյուղացիուրյան նկատմամբ. պետությունը զյուղացուց վորոշ հարկ կվեցնի, բայց դրա փոխարեն կպահանջի, վոր հարկեր վճարելուց հետո նա իր տնտեսությունն ընդարձակի, զիտենալով, վոր նրանից այլիս վոչինչ չեն վեցնի, և վոր նրա մոտ կմնա ամբողջ ավելցուկն՝ իր տնտեսությունը զարգացնելու համար»:

Այն, մենք վոչ թե միայն ասում ենք զյուղացուն, վոր մենք պատրաստ ենք իրեն ոգնել, այլև դրա հետ միասին այդ միջնակ գյուղացուն ասում ենք ընկ. Լենինի խոսքերով. «Ընդդրձակիր քո տնտեսությունն, այսինքն ավելացրու այն մթերքների քանակը, վոր դու արտազրում ես, և քո տնտեսությունն այնպես վարիր, վոր այդ մթերքները հետզիտե ավելի ու ավելի արժեքավոր դառնան-բարելավիր և բարձրացրու քո տնտեսության տեխնիքական մակարդակը»:

## ԿՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՍՃՈՒՄԸ ՅԵՎ ՍՊՑԱԼԻՉՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Մեզ կարող են ասել,—կացեք, յեթե ջանասեր միջակ գյուղացին սկսի լավացնել իր տնտեսությունը, ընդարձակել այն, բարձրացնել նրա տեխնիքական մակարդակը, արդյոք նա ժամանակ կուլակ չի դառնա: Այն ժամանակ տնտեսության այդ ընդարձակումից արդյոք կապիտալիզմ, նոր կապիտալիստական հարաբերություններ չեն ծագի: Իսկ կապալը և վարձու աշխատանքը թույլատրելով Խորհրդային իշխանությունն արդյոք հնարավորություն չի տալիս, վոր այդ սարգակը աճի իր տնտեսության ընդարձակման հողի վրա, ուժեղանա հողոդագործման և բարակային աշխատանք զործադրելու սպարելում:

Սա—որինական հարց եւ չուզիչ, բայց որինական հարց: Ցեվ վորպեսզի կարելի լինի ուղղակի և բացահայտ կերպով զընալ այն ճանապարհով, վոր մենք այժմ ցույց ենք տալիս, մենք պետք ե պատասխանենք այս հարցին: Իմ առջեք դրված ե սպիտակ գվարդիական «Ռուլ» («Ղեկ») լրագիրը, վորը քննության ե առնում վարձու աշխատանքի որենքը: Նա ուղղակի ասում ե.

«Գյուղական կյանքի անսահման ու դժվար վերահսկելի տարերքի պայմաններում Խորհրդային իշխանության այս ձեռնարկումները նշան են վոչ թե զիջման, այլ բուրժուազիային անձնատուր լինելու...»

Գյուղի և քաղաքի կարգերի միջև գոյություն ունեցող նեղ ճեղքածքը լայնանում եւ:

Պարոն սպիտակ-գվարդիականները համույքից շփում են իրենց ձեռքերը, կամ ձեղացնում են, թե շփում են իրենց ձեռքերը և ասում են. սոցիալիզմը քաղաքում—անկասկածելի յե, իսկ գյուղում ավելի ուժեղ ե կապիտալիստական հոսանքը, այս պատճառով քաղաքի գյուղի միջև «ճեղքվածք» ե գոյանում: Ի հարկե, կարելի յե սպիտակ-գվարդիականի վրա ուշք չդարձնել և, կասկած չկա, վոր նրա վրա ուշաղրություն չպետք ե գարձնենք: Բայց այն հուզիչ հարցը, վոր կարող ե տալ պրոլետարը, բատրակը, որամշակը (ուղարկու), չքավոր, սակավունակ գյուղացին—այդ հարցին անհրաժեշտ ե պատասխանել:

Միթե իրոք մենք այնպիսի դրության մէջ երինք ընկել, վոր աշխատում եյլնք ստեղծել բանվորների և գյուղացիների գաշինք, քաղաքի և գյուղի գաշինք, մեր բոլոր ձեռնարկումներն անում եյինք այն նպատակով, վորպեսզի զործարանային պրոլետարիատի ղեկավարությամբ կատարվող սոցիալիստական շինարարության գործին լծենք գյուղացիներին ու հանկարծ դուրս յեկավ, վոր մենք նրանց չենք համախմբում և ճեղքածքն, ընդհակառակը, մեծանում եւ:

Քաղաքում սոցիալիստական կարգեր են, իսկ գյուղում ինչ վոր այլ բան: Այս հարցին մենք պետք ե ուղղակի պատասխանենք, վոր վարձակալության ընդարձակման և տնայնագործներին վերաբերյալ որենքը և վարձու աշխատանքի ընդարձակման որենքը հնարավորություն կտան կուլակին ոգտվելու այդ որենքներից և ավելացնելու իր բարեկեցությունը, ամրացնելու իր դիրքերը, բայց դա վոչ մի զեղքում չի վնասի սոցիալիզմի զարգացմանը, —յեթե գոյություն ունենան յերկու պայմաններ, վո-

բոնցից մեկն արդեն կա և այն մենք պետք ե միայն զարգացնենք, իսկ մյուսը գոյություն ունի փոքր չափերով և նրա ուժեղացման համար մենք պետք ե թափենք ամեն ջանք:

Առաջինն այն ե, վոր մանր հողագործին, ապրանքներ արտադրողին, վորոշ չափի ազատություն տալով, մենք յերեք չենք ասել և յերեք չենք ասի, թե մենք նրան մանր ապրանք, արտադրողի լիակատար ազատություն ենք տալիս: Մի ժողովում յես առիթ ունեցա վիճելու այդ ֆորմուլայի դեմ և ասելու ովքեր այդպես են ասում (իսկ այդպիս եսերներն ու մենշեկներն են ասում)՝ նրանք կապիտալիստների իսկական պաշտպաններ են: Մեր յերկրի վորոշ շրջաններում վերընտրությունների ժամանակ նրանք ապացուցեցին, վոր իրենք ել են կարողանում քաղաքականություն բանեցնել: Մենք պետք ե այդ լավ իմանանք:

Նրանք ասում են. Խորհրդային իշխանությունը կաշկանդում ե մանր ապրանքարտադրողի լիակատար ազատությունը, այսինքն գյուղացուն պետք ե լիակատար ազատություն տալ: Միլյուկովը, կարդալով այդ ֆորմուլայի դեմ իս արած առարկությունը, նկատել ե. այն, Կամենեն ուղիղ ե ասում, վոր հենց այդ մանր արտադրողին լիակատար ազատություն տալը — կապիտալիստական զարգացման ֆորմուլայով դեկավարվել ե նշանակում: Այդ ճիշտ ե:

Պարոն Միլյուկովը գիտի, թե վորտեղ ե թաղված շան գըլուխը: (ծիծաղ, ծափեր):

Բայց նրա դժբախտությունն այն ե, վոր մենք ևս շատ լավ գիտենք, թե բուրժուական շան գլուխը վորտեղ ե թաղված և կարողանում ենք այդ բուրժուական շան գլուխը հեղափոխության խիստ աղի և յեռման ջրի մեջ զցել: (ծիծաղ, ծափեր):

Այսպես ուրեմն մենք և Միլյուկովը համակարծիք ենք այն բանում, վոր մանր ապրանքարտադրողի լիակատար ազատությունը կապիտալիստական զարգացման ֆորմուլա յե: Միայն թե մենք մի բան ենք պնդում. այդ լիակատար ազատությունը յերկրագնդի վրա վոչ մի տեղ չկա, գուցե միայն տեսականում կա, վորովհետեւ, ինչպես ինքներդ ևս զիտեք, գյուղացիների իրավունքներն ամենուրեք սահմանափակված են: Նրանց լիակատար ազատությունը — բուրժուական ստախոսություն, շաղփաղփանք ե (брехնя), վոր ասվում ե, գյուղացիներին խաբելու համար:

Վերցրեք ամենաղեմոկրատիկ և ըստ յերեվույթին գյուղացիական յերկրները: Այդ յերկրներում գյուղացու իրավունքները սահմանափակված են արեստների, բանկերի, յերկաթուղային ընկերությունների կողմից, այսինքն նրան տրվում ե այն ազատությունը, վորը ձեռնառու յե ֆինանսական կապիտալին, գըները թելադրումն ֆինանսական կապիտալը, վարկը կանոնավորում ե ֆինանսական կապիտալը և տարիքները սահմանում ֆինանսական կապիտալը: Այդ մանր գյուղացին, վորն, իրը թե, լիակատար ազատություն ե վայելում, փաստորեն ֆինանսական կապիտալի հարկատուն ե: Այստեղ սահմանափակումներ են սահմանվում մանր ապրանքարտադրողի ազատության համար, միայն այդ սահմանափակումները բուրժուական են և նպատակ ունեն հնարավորություն տալու կապիտալին, վոր շահագործի այդ, իրը թե ազատ, գյուղացուն:

Մեզ մոտ ել կան սահմանափակումներ, միայն թե դրանք սոցիալիստական սահմանափակումներ են և նպատակ ունեն բարոցիալիստական սահմանափակումներ: Այդ մանր գյուղացու առաջ սոցիալիզմի ճանապարհը: Վորձնեք են այդ սահմանափակումները: Այդ սահմանափակումները կաղացապանի վոչ թե միայն բանվոր դասակարգն, այլ և գյուղացիությունը, վորովհետև այդ սահմանափակումները միաժամանակ ապահովության յերաշխիք են՝ ընդդեմ կապիտալի:

Մանր ապրանքարտադրողի ազատության այդ սահմանափակումներից առաջնը հողի ազգայնացումն ե:

Մենք Հոկտեմբերյան հեղափոխություն արեցինք, և գյուղացին նպաստեց այդ հեղափոխությանը՝ հողն ազգայնացնելու համար: Սա — ապրանքարտադրողի ազատության սահմանափակումն ե և միաժամանակ սա — մեծագույն յերաշխիքն ե ընդդեմ կապիտալիստական հարաբերությունների վերականգնման:

Իսկ արտաքին առեստի մենաշնորհը, միթե այդ սահմանափակում չե: Այն, սահմանափակումն ե: Սակայն, դա — այնպիսի սահմանափակումն ե, վորն անհրաժեշտ ե վողջ տնտեսությունը սոցիալիստորեն կանոնավորելու: համար: Նա պաշտպանում է գյուղացիությունը ոտարքերկրացի միջնորդի, ոտարքերկրյա կապիտալի կողմից ստրկացվելուց:

Յես հարցնում եմ ինքս ինձ, ուրեմն ինչ, բանվոր դասակարգն ու գյուղացիությունը պիտի պաշտպանեն հողի ազգայնացումն ու արտաքին առեստի մենաշնորհը, չնայած այն բանին (կամ գուցե հենց այն պատճառով), վոր դա սահմանափա-

կումն և մանր ապրանքարժադրողի ազատության, — ճիշտ ե, այնպիսի սահմանափակումն. վորը գյուղացիական տնտեսության վողջ ընթացքը մղում ե դեպի սոցիալիզմն, առանց հնարավորություն տալու, վոր վերականգնվեն կապիտալիստական կարգերը:

Բայց միթե գների կարգավորման քաղաքականությունն, ինչպես և այն, վոր մեղ մոտ վարկը վոչ թե մասնավոր վարկ ե, վոր տնորինում ե կապիտալիստաց հանուն իր շահերի, այլ պետական վարկ, այսինքն այնպիսի վարկ, վոր կարգավորվում ե բանվորների և գյուղացիների իշխանության կողմից և վորի նպատակը վոչ թե այն ե, վոր յեկամուտ ստացվի, այլ այն, վոր վողջ յերկրի տնտեսությունը բարձրացվի ե, մասնավորապես, գյուղացու տնտեսությունը. — միթե սա սահմանափակումն չե, սահմանափակումն կապիտալիզմի աճման: Միթե, վերջապես, Խորհրդային իշխանության սիստեմը, գյուղացիության պրոետարական ղեկավարության այդ սարմանցումը, վորի նպատակն ե միացյալ ուժերով իրականացնել սոցիալիզմն ընդդեմ կապիտալի. — միթե սա սահմանափակումն չե:

Այս սահմանափակումները Հոկտեմբերյան հեղափոխության կարեվորագույն վաճառմներն են, Խորհրդային Միության հիմունքները և միաժամանակ ճշտակառուց սոցիալիստական պատմեները, պողպատե պատեր, վորոնք քաշված են մեր սոցիալիստական տնտեսության տարրերի շուրջը, վորպազի պահպանեն նրանց վողողումներից և մանր-բուրժուական ու բուրժուական տարեքից: (Ճափեր:

Այս սահմանափակումների, ինչպես սրանց անվանում են, պաշտպանությունը իրոք պաշտպանությունն ե մեր տնտեսության սոցիալիստական տարրերի՝ ընդդեմ կապիտալիստական տարրերի, Քանի այս պատմեները կան, գյուղի բուրժուական վերնախավերի կապիտալիստական հակոմները մեղ համար սարսափելի չեն: Միայն թե պիտք ե կարողանանք մանյովրներ անել. պետք ե գիտենանք, թե ինչպես անենք, վոր այս պողպատե ամրոցներին հենվիլով, ոգտագործենք բնակչության բոլոր խմբերը, բոլոր միջնախավերը՝ ապրանքապտույտի զարգացման, տնտեսության բարելավման և նրա բարձրացօսն համար, — հավատացած լինելով. վոր մենք ամուր ենք, կանգնած ենք ուղիղ ճանապարհի վրա և գնում ենք ուղիղ ճանապարհով, քանի մեր ձեռքին են հիմնական, իշխող բարձունքները:

ԿՈՂԳԵՐԱՑԻԱՆ, ԽՈՐՀՐԴԱՅԻՆ, ԽՇԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԵԼԵՔ-  
ՏՐԱՎՈՐՈՒՄԸ

Եերկրորդ խնդիրը վերաբերվում ե մի բանի, այն ե, վոր գեաապային վիճակում ե, վորը գեուս անհրաժեշտ ե զարգացնել խոսքս կոռպերացիայի մասին ե: Յեթե ճիշտ ե, վոր մեր նոր ձեռնարկումներից կառող են ոգտվել բուրժուական վերնախավերը, վոր այդ ձեռնարկումներն իրենց վորոշ կետերում նահանջման տարրեր են պարունակում, վորոնց կարող ե ոգտագործել կուլակը, վորպեսզի աճի և կապիտալիստական ձեռնարկու դառնապետական հողի վրա (չե վոր կա այդպիսի տիպ և այդ տիպը կապիտալիստական ե), — ճիշտ ե և այն, վոր դրա գեմ զենք ել կա, բերդ ել կա և այդ — կոռպերացիան ե:

Զուր չե, վոր Վլադիմիր Խլիչը հանձարեղ կանխատեսությունը հարկադրեց նրան իր վերջին հոդվածները կոռպերացիային նվիրել:

Հեռանալով մեզնից, Վլադիմիր Խլիչը մտածում եր այն մասին, թե ինչպես ապահովի այդ 130 միլիոնանոց բնակչությունը, վորը չլսված գժվարությամբ պաշտպանեց հեղափոխության նվաճումներն ամբողջ աշխարհից, ինչպես ապահովի նրան կապիտալիստական տարրերի վերածնումից, ի՞նչպես անենք, վոր այն հարցում, թե ի վերջո ինչպիսին ե լինելու Ռուսաստանը — նեպական, թե սոցիալիստական — ավելացնենք սոցիալիստական տարրերի ուժը վոչ թե միայն ի հաշվի քաղաքի, այլև ի հաշվի գյուղացիության: Ի՞նչպես անենք, վորպեսզի սոցիալիստական Ռուսաստանը, ինչպես Վլադիմիր Խլիչն ե արտահայտվում, հենվի վոչ թե միայն խոշոր քաղաքների ազգայնացրած արդյունաբերության և բանվորների շահերի վրա, այլև մանր գյուղացիների շահերի ու գիտակցության վրա:

Պատասխանելով այս հարցին, լենինը գրում է իր վերջին հոդվածները կոռպերացիայի մասին: Դեռևս պարենհարկին վերաբերվող հոդվածներում լենինը խորհրդածում եր, ագրարային յերկիրն ինչպես գեպի սոցիալիզմ գնա: Գյուղացուն իր փոքրիկ հողաշերտով, ցանքսի իր յեռամյա սիստեմով, իր արորով, իր անգրագիտությամբ ի՞նչպես բարձրացնել մինչ սոցիալիստական շինարարությունը: Ի՞նչպես անենք, վորպեսզի նա զգա, վոր իր հողաշերտում նա վոչ թե միայն իր անձնական գործն ե կատարում, այլ և մասնակցում ե սոցիալիզմի ընդհանուր շինարա-

բությանը, հանում վորի շոգեմուրճն և իջեցնում իր հարվածները մի ինչ վոր Պուտիլովյան գործարանում:

Պատասխանելով այս հարցին պարենհարկի մասին գրած իր հոդվածներում, լենինը նկատում եր, վոր կոռպերացիան ամենակարեվոր և ամենազորեղ գենքն և, վորով գյուղացիությանը կարելի յե քաշել գեպի այդ սոցիալիստական շինարարությունը:

Յես մի քանի խոսք կվարդամ վլադիմիր իլյիչի հոդվածներից, վորպեսզի դուք հասկանաք, թե ինչու յե իլյիչն իր վերջին հոդվածները գրել վոչթե վորու ուրիշ բանի, այլ կոռպերացիայի մասին, ինչո՞ւ յե մեր կառավարությունն ամենուրեք իր լուզունգը գարձրել գյուղի կոռպերացման հարցը, ինչո՞ւ յե պետությունը կոռպերացիային հսկայական գումարներ տալիս, վորոնք յերբեմն նույնիսկ վեր են լինում մեր կարելիություններից, վերջապես ամբողջ խորհրդային հասարակայնությունն ինչո՞ւ պետք ե աշխատի նպաստել կոռպերացիայի և առաջին հերթին գյուղի միջակ ու չքավոր խավերի կոռպերացման գործին:

«Կոռպերատիվ կապիտալիզմը, — գրում ե վլադիմիր իլյիչը — նման է պետականին այն տեսակետից, վոր դյուրացնում ե հաշվառումը, վերահսկողությունը, կոնտրոլը և պայմանագիր հարաբերությունները — Խորհրդային պետության և կապիտալիստի միջել: Կոռպերացիան, վորպես առևտորի ձեվ, ավելի ձեռնուու և ոգտավետ ե մասնավոր առևտորից վոչ թե միայն նշված պատճառներով, այլեվ այն պատճառով, վոր նա դյուրացմում ե միւլիոններ կազմող բնակչության, ապա նաև բացարձակապես ամբողջ բնակչության միավորումն ու կազմակերպումը. այս հանգամանքն, իր հերթին, մի հսկայական պլյուս և պետական կապիտալիզմից գեպի սոցիալիզմ հետագա անցումը կատարելու տեսակետից»:

Իսկ յեթե դուք մտաբերեք նրա վերջին հոդվածները, կտեսնեք, թե կոռպերացիայի մեջ ամենից շատ ինչնե գնահատել վլադիմիր իլյիչը և ինչը պետք ե մենք ամենից ավելի պարզենք: Նա ասում ե.

«Բացառիկ նշանակություն ունի կոռպերացիան (սա գրված ե նրա վերջին տպագրված հոդվածում) նոր, այսինքն սոցիալիստական կարգերին անցնելու տեսակետից, վոր կատարվելու յե կարելույն չափ պարզ, թերեվ յեվ գյուղացու համար մատչելի

հանապարհով: Իսկ այս չե վոր դարձյալ ամենազլիսավորն ե: Այլք բան ե — սոցիալիզմը կառուցելու համար ցնորաբանել զանազան բանվորական միավորումների մասին և այլ բան — սովորել գործնականապես կառուցել այդ սոցիալիզմն այնպես, վոր յուրաքանչյուր մաեր գյուղացի կարողաբա մասնակցել այդ կառուցման աշխատանքին»:

Այս յեթե մենք փոքր ինչ արձակինք գյուղի վերնախավի կաշկանդանքները, վորպեսզի նա ոգտագործի գյուղացիական տնտեսության զարգացումը իր խմբական զասակարգային նպատակներով և միենույն ժամանակ, ինչպես իլյիչն եր ասում, գյուղում այնպիսի կազմակերպություններ ստեղծենք և այնպիս վարենք մեր քաղաքականությունը, վորպեսզի յուրաքանչյուր աղքատ և միջակ գյուղացի ակտիվ, ուեալ կերպով, կոռպերացիայի միջոցով, պետական վարկի միջոցով մասնակցեն սոցիալիզմի կառուցման գործին, — այն ժամանակ նոր կապիտալիստական բողոքնումների վոչ մի տարր մեղ համար սարսափելի չլինի:

Այս պատճառով կոռպերացիան ամենից առաջ մեղ համար կարեվոր ե, վորպես կուտակման կանոնավորման յեղանակ:

Այս, մենք ասում ենք. չի կարելի բարձրացնել գյուղացիական տնտեսությունն, յեթե թեթելացնենք կուտակման հնարավորությունը՝ գյուղացու համար:

Եյականն այն չի, վոր գյուղացիությունը կսկսի կուտակել: Առանց զըանց՝ գյուղի զրության բարեկավումն անկարելի յե չարցն այն ե, թե ուր են գնալու այդ կուտակումները. արդյօք նրանք մասնավոր կապիտալի ջրաղացին են ջուր լցնելու, ավելացնելով նրա միջոցներն ու նրա գերը մեր յերկրի ընդհանուր եկոնոմիկայի մեջ, թե գյուղացիության այդ կուտակումները կոռպերացիայի միջոցով կհոսեն դեպի այն կապիտալը, վոր գտնվում ե պրոլետարիատի և գյուղացիության ձեռքին, Խորհրդային իշխանության — ձեռքին, և կավելացնեն պրոլետարական հեղափոխության կապիտալները:

Այս հարցը պետք ե լուծել: Նա լուծվում ե մանր, ասորյա աշխատանքով, «առեսուր անելու շնորհքով», ինչպես ասում եր վլադիմիր իլյիչը, տնտեսաբարելու շնորհքով, կոռպերացիան գյուղում վարելու շնորհքով, դեպի կոռպերացիան գյուղացիներ և գյուղացիության փայեր զբաղելու շնորհքով:

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵԿ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԸ  
ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՄԱՐ ՄԴՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Շրջանառության կենդանացման հետևանքով մեր յերկրում աեղի յեռնենալու կուտակում, զորին կոռպերացիայի, պետական վարչի և Խորհրդային խշանության վողջ պետական սիստեմի ոգնությամբ պետք եւ այնպիսի ընթացք տանք, զոր նա վոչ թե ջուր լցնի մասնավոր կապիտալի ջրաղացին, այլ պետական կապիտալի ջրաղացին, զորպիսի կապիտալը գտնվում է պրոլետարիատի և գյուղացիության ձեռքին, Խորհրդային խշանության ձեռքին:

Սա—առաջին խնդիրն եւ Յեկ մենք առանց կոռպերացիայի լուծել այս խնդիրը չենք կարող:

Մեր առաջ կա 20 միլիոն իրարից անջատ տնտեսություն: Ի՞նչպես հաշվի առնել, ի՞նչպես վերահսկել, ի՞նչպես շաղկապել զրանց:

Դա—այնպիսի ծանծաղուտ եւ, զորի մեջ, ինչպես առաջին հայացքից եւ թվում, կարող եւ խեղդվել մեր պրոլետարական դիկտատուրայի պողպատե բերդը: Ի՞նչպես կատարել այդ կոտորակիած տնտեսության հաշվառումը, կոնսորչը, վերահսկությունը, կանոնավորումը, ի՞նչպես կապել այն Խորհրդային շինարարության ընդհանուր գործի հետ: Միայն կոռպերացիայի, այսինքն մասն գյուղացիների մասսայական, իսկ հետագայում նաև գլխովին միավորման ձեր միջոցով, այն գյուղացիների, վորոնք այդ ձեռվ իրենք ել կմիանան ընդհանուր սոցիալիստական շինարարության գործին: Դա թեթևացնում եւ մեզ համար այդ ամբողջ կոտորակիած տնտեսության հաշվառումը, կոնսորչն ու կարգավորումը:

Մենք այս համագումարում սիալ կոռրծեյինք, յեթե լոելինք այն մասին, զոր կոռպերացիայի միջոցով մեր տնտեսության սոցիալիստական տարրերի զարգացմանը և նոր կոռպերացիան բուրժուական տարրերին հակադրելուն զուզընթաց պետք եւ կատարվի այն պրոցեսը, զորին կենինը «գյուղացիության կուլտուրական հեղափոխություն» անունն եր տալիս, այսինքն այդ ամենին զուզընթաց պետք եւ բարձրացնել վողջ գյուղացի բնակչության կուլտուրական մակարդակը: Դա պետք եւ ընտելացնի գյուղացիությանը, զոր նա հասարակովի վարի իր գործը վոչ թե միայն քաղաքականի ասպարիզում, զորի համար Խորհուրդների աշխուժացումն եւ պետք, այլև տնտեսության ասպարիզում:

Ի՞նչպես բանվոր գյուղակարգի համար կոմունիզմի շկոլա յեն հանդիսանում արհմիություններն, այնպես ել գյուղացիության համար կոռպերատիվ միավորումներն են սոցիալիզմի շկոլա հանդիսանում այն ժամանակ, յերբ գյուղություն ունի Խորհրդային իշխանության սիստեմ և յերբ մեր ձեռքին են արտադրության միջոցները:

Այս թե ինչպիսի կուլտուրական հեղափոխություն եւ պետք: Մի անգամ ընդմիշտ կարելով իրենց կապը գյուղական կյանքի և գյուղացիական տնտեսության հին պատճենական ձեր հետ, գյուղացիները կոգտվեն այն փաստից, զոր բոլոր քարբիկաները ու գործարանները և իշխանությունն ինքը գտնվում են իշխանությունների, բանվորների ձեռքին, և իրենց գյուղում շուտով տնտեսական բարելավումներ կը մտցնեն:

Իսկ յեթե մենք կուլտուրական հեղափոխությունը միացնենք գյուղացիության մանր տնտեսության հարցերի տնտեսական լուծմանը, մենք կատանանք մի այնպիսի ուժ, զորը երբ վոչ մի բուրժուական տարրից չվախենալու հնարավորություն կտա մեզ: Մրանց վրա աչք չպետք եւ փակել: Մրանք կան ու զարգանալու յեն, բայց մեր աղղայնացրած արդյունաբերության կողքին, կոռպերացված միջակ գյուղացու և չքավորի կողքին սրանք չեն կարող վոչ մի փոքր իշատեն նշանակելի գեր խաղալ:—վահ մեր քաղաքականության մեջ, վոչ իլ մեր եկոնոմիկայի մեջ:

Միայն պետք եւ ինքնախարենության չղիմել և յուրաքանչյաւր ավագալ մոմենտին զործ ածել այն զենքը, զորն անհրաժեշտ եւ:

Էնկ. Անինը միանգամայն իրավացի յեր, յերբ ասում եր՝ վոչ Խորհրդային իշխանությունը պլյուս ելեքտրավորումը—զանցիալիզմն եւ Յես կարծում եմ, զոր այժմ, վաղիմիր իլլիչի վերջին հոգվածները նկատի ունենալով, մենք կարող ենք ընդունակել այս ֆորմուլան, յերեան բերելով այն տարրերը, զորն ու մտնում եյին այդ ֆորմուլայի մեջ, բայց առաջ այնքան պարզ կերպով մեր աշքին չեյին ընկնում:

Յեթե ընդարձակներ այդ ֆորմուլան և պարզաբանենք նրա ընդարձակությունը, այսպես պետք եւ ասենք. մեր պայմաններում Խորհրդային իշխանությունը պլյուս ելեքտրավորումը, պլյուս կոռպերացիան—այս և սոցիալիզմը, այսինքն՝ Խորհրդային իշխանությունը, աշխատավորների իշխանությունը, գյուղա-

ցիության ղեկավարությունը պրոլետարիատի կողմից, — պլյուտո-  
ելեքտրավորումն, այսինքն պլյուս խոշոր մեքենական ինդուստ-  
րիան, վորը թույլ ե տալիս կանոնավորելու յերկրի ամբողջ  
անտեսությունը, պլյուս — կոռպերացիան, այսինքն մանր արագա-  
րող գյուղացիների գլխովին միավորումը, — այս ե սոցիալիզմի  
իսկական իրականացումը:

Այս — սոցիալիզմի այն ձեզն ե, վոր մենք սկսեցինք կառու-  
ցել, վորը մենք կառուցում եյինք, վորը մենք անշուշտ կը կառու-  
ցենք: Դեռ յեվս 1921 թվին վլադիմիր Իլյիչն ասում եր, վոր  
հիմնական խնդիրը հետեւալն ե. «միանալ գյուղացիական մաս-  
սային, շարքային աշխատավոր գյուղացիությանը, և սկսել  
առաջ շարժվել անչափելիորեն, անսահմանորեն ավելի դանդաղ,  
քան մենք յերազում եյինք, բայց շարժվել այնպես, վոր  
մեզ հետ իրոք ամրող մասսան շարժվի: Այդ գեղագում հիշյալ  
շարժումը ժամանակին այնպիսի արագության կը հասնի, վորի  
մասին մենք այժմ յերազել անդամ չենք կարող»:

Եես կարծում եմ, վոր մենք կարող ենք ասել հետվեյալը.  
մենք այժմ ականատես ենք գեղի սոցիալիզմ տանող շարժման  
ձիշտ այնպիսի արագացման, վորի մասին յերազել, վորի գա-  
լուստը գուշակել եր վլադիմիր Իլյիչն իր այդ խոսքերով:

Այդ արագացումն սկսվեց արդյունաբերությունից, նա-  
տվեց մեզ սեկորդային տարի՝ արդյունաբերության հաջողու-  
թյունների տեսակետից: Այդ արագացումը կը փոխանցվի նայել  
գյուղացիությանը:

Յեկ վլադիմիր Իլյիչի այն միտքը, թե գյուղացիների հետ-  
միանալով, մենք այնպիսի արագությամբ կը ընթանանք դեպի  
սոցիալիզմ, վորի մասին յերազել անդամ չեյինք կարող, կի-  
րականանա լիովին և ամբողջությամբ:

Այս, ինչպես և այն միտքը, վոր վլադիմիր Իլյիչն  
այսպիսի խոսքերով. և արտահայտել՝ «տաս, քան տարիա ու-  
ղիղ փոխարարերություններ գյուղացիության հետ — յեկ մեր  
հաղթանակը համաշխարհային մասշտաբով ապահոված ե», —  
հիմքն են կազմում այն բոլոր ձեռնարկումների, վոր յես պա-  
տիվ ունեցա առաջարկելու ձեզ, վորոնք և հուսով եմ, վոր ձեր  
հավանությանը կարժանանան:

Այս յերկու հարցագրումները (положения) գյուղացիության  
հետ կապվելու, նրա հետ ուղիղ փոխարարերություններ հաս-  
տատելու, կոռպերացիայի միջոցով գյուղացիությանը դեպի

խորհրդային սոցիալիստական տնտեսական շինարարություն  
քաշելու անհրաժեշտության մասին — ուղղություն են տալու  
էառավարության քաղաքականությանը նայել հետագայում:

Վլադիմիր Իլյիչի այս հիմնական հարցագրումից յենելով,  
մենք կամրացնենք բանվոր դասակարգը, վորպես Խորհրդային  
լշանության ղեկավար, վորպես գյուղացիության ղեկավար  
դասակարգ, մենք կամրացնենք գյուղացիությունը, կը բարձրաց-  
նենք նրա տնտեսարարության ձևերը, իր հին պապինական  
մեթոդներից կտանենք գեպի գոյության նոր, կուտարական,  
քավագույն պայմաններ, կամրացնենք բանվորների և գյուղացի-  
ների գաշինքը, — մենք կը հաղթենք: (Ցերկարանել ծափեր)

### ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔ

Ընկերներ, յես կարձ կը կապեմ: Ընկերների յելույթներից,  
լինչուս և ինձ ուղղված գրություններից կարելի յե տեսնել, վոր  
ընդհանրապես և հիմնականում Համագումարում լիակատար հա-  
մերաշխություն և տիրում իմ առաջարկած միջոցների ընդուն-  
ման նկատմամբ:

Այս հանգամանքն անհրաժեշտ ե արձանագրել մանավանդ  
այն պատճառով, վոր այսպիսի միջոցները, ինչպես յես արդեն  
առել եմ, վորոշ քաղաքական ակտեր են: Յեկ այս պատճառով,  
յեթե այն գյուղացիները, վոր այստեղ հանդես յեկան, նկատում  
եյին, վոր այս միջոցների մեջ իրոք գիտված են գյուղացիա-  
կան տնտեսության տվյալ մումբնակի հիմնական կարիքները, վոր  
այն ամենը, վոր գյուղացիության հոգացողության առարկան ե,  
այդ ձեռնարկումների մեջ իրական և ուղղի լուծումն ե ստանում —  
արդին այս փաստն ինքնին մի յերաշխիք ե, վոր այդ ձեռնարկում-  
ները գոշթե միայն թղթի վրա կմնան, այլ իրոք կը կենսագործ-  
վեն:

Յեթե յես փորձեյի պատասխանել առանձին հարցերին  
կամ ամբոխից արված առանձին հայտարարություններին, յես  
պետք ե հողբաժնի հրահանգիչ գառնայի:

Այդ բանն յես դժբախտաբար անել չեմ կարող և հուսով  
եմ. վոր գուք յեկս չեք պահանջի, վոր յես այժմ քննության  
առնեմ այն առանձին հարցերը, վոր ծագում են գործնական  
կյանքում այդ ձեռնարկումների հետեւանքով: Այդ հարցերի  
պատասխանները գուք կը գտնեաք և հողագործության ժողովրդա-  
կան կոմիսարների և տեղական հողային մարմինների մոտ: Այս

պատճառով յես կողմանիմ իմ յեզրափակման խոսքից, վորպես—  
զի կանգ առնեմ մի քանի խոշորագույն հարցերի վրա:

Առաջինը, վորի վրա արդեն ուշադրություն դարձրվեց ընկ-  
թիկովի զեկուցման մեջ, այն հսկայական ջանքերն են, վոր-  
պետք ե թափեր կառավարությունն այս տարի անբերրիության-  
դեմ մղվող պայքարի համար: Չի կարելի վոչ մի բոպե ժո-  
ռանաւը վոր բոլոր այն հաջողությունները, վոր գուք այս Հա-  
մագումարում արձանագրեցիք և արդյունաբերության ասպարի-  
զում, և պետական բյուջեի ասպարիզում, և գյուղատնտեսու-  
թյան ասպարիզում, ձեռք են բերվել, չնայած այն բանին, վոր-  
մեր յերկում բավական զգալի անբերրիություն կար, վորի հե-  
տեւկանքները մինչ այժմ դեռ վերացված չեն, և մենք մեր սուր-  
միջոցներից ստիպված եյինք այս տարի 70 միլիոն ոռոքի հատ-  
կացնել այնպիսի տարերային աղետների դեմ պայքարելու հա-  
մար, վորպիսին անբերրիությունն ե:

Մեր հաջողությունները և գյուղատնտեսության բարձրա-  
ցումն այս տարի ավելի մեծ չափերի կհասնեյին, յեթե չկի՞-  
այդ հանգամանքը:

Տամրովի նահանգի ներկայացուցիչ ընկերոջը, վորն այս-  
տեղ ուշադրություն հրավիրեց Տամրովի նահանգի վորոշ շրջան-  
ների գյուղացիության ծանր դրության վրա, վորն առաջացել-  
ե անբերրիության հետեւանքով, յես պետք ե ասեմ, վոր հենց  
վոր կառավարությունը տեղեկություն ստացավ այդ շրջանների-  
իրոք ծանր դրության մասին, այդ շրջաններն ուղարկեց նախ-  
գարնացանի սերմացու 1.800.000 ֆութ և աշնացանի սեր-  
մացու կես միլիոն ֆութ, ինչպես և ձրի պարեն սովորա-  
բնակչությանը տալու համար 180 հազար ֆութ և այժմ ել-  
պատրաստված ե ուղարկելու դաշտյալ 300 հազար ֆութ:

Բացի այդ, ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը կազմել-  
ե մի հատուկ հանձնաժողով սեփական շրջանի Տամրովի, Ռյոյլի,  
Կուրսկի, Տուլայի և Վորոնեժի նահանգների անբերրի շրջաննե-  
րը հետազոտելու և նրանց ոգնություն ցույց տալու համար:  
Աւելին թող ընկեր տամբովցիներն իմանան, վոր նրանց դժ-  
բախտությունները հայտնի յեն մեզ և այն ամենը, վոր կարելի-  
յե անել, մենք կանենք և նրանց կողնենք մինչ զալիք բերքը:  
(Ծափեր):

Յես արդեն նշել եմ իմ զեկուցման մեջ, վոր անտանելի յե-  
այն դրությունը, յերբ մեր յերկրի բախտը, մեր տնտեսության-

պարգացման թափն ու արագությունը մեծ չափերով կախված են  
այնպիսի տարերային յերեվություներից, վորպիսին յեղանակն ե,  
վորը, շնորիվ մեր գյուղացիության կուլտուրականության ցածր  
մակարդակի, կարողանում ե մի քանի շաբաթվա ընթացքում  
փոխել այս կամ այն շրջանի բոլոր հեռանկարներն, ամբողջ  
ապագան:

Յես ասացի, վոր մենք զրա գեմ կովելու միջոցներ ունենք,  
վոր այդ միջոցները հողի մշակության գիտական մեթոդների  
գործադրություն ե այն շրջաններում, վորոնք յինթակա յեն ան-  
բերրիության: Այդ անբերրիությունը կանխելու համար մղվող  
պայքարը մի պայքար ե, վոր հենված ե այդ շրջաններում գյու-  
ղացիական տնտեսության բարձրացման և հողի մշակության  
հատուկ մեթոդների գործադրման, հատուկ մշակույթներ մացնե-  
լու վրա և այլն: Նա բաղկացուցիչ մասը, գյուղացիական տնտեսության  
բարձրացման ընդհանուր պլանի:

Յես համոզված եմ, վոր Խորհրդային իշխանությունը, հեն-  
վելով գյուղացի բնակչության իսկ ինքնագործունեության վրա,  
մեր յերկիրն այնպիսի վիճակի կհասցնի, վոր մենք այլևս կախ-  
ված չենք լինի անձրեկ գալուց կամ չգալուց, և չենք թույլ  
տա, վոր գյուղացիական տնտեսության բախտին, հետեւվա-  
պես նաև՝ արդյունաբերության բախտին, ուղղություն տանք  
վոչ թե մենք և գուք, այլ այնտեղից վերից: Այս մեկ:

Յերկրորդ հարցը, վորի վրա յես կուգելի ձեր ուշադրու-  
թյունը գարձնել և վորի վրա, գուցե, բավարար չափով ուշադ-  
րություն չեմ դարձրել իմ զեկուցման մեջ, այն ե, վոր մեր յեր-  
կրը մեծ ե թե իր տարածությամբ և թե նրա սահմաններում  
բնակչող առանձին ազգությունների քանակով, այնպես ել այն  
կենցաղային պայմանների բազմազանությամբ, վորոնցում ազ-  
րում են բնակչության տարբեր խմբերը, և խորապես սխալված  
կլինելինք, յեթե տնտեսության միենույն մեթոդները, միենույն  
միջոցները գործադրելինք և Մոսկվայի նահանգում, և Ռուսիա-  
տանում, և Ղրղզայիում և Անդրկովկասում: Քաղաքականու-  
թյան ընդհանուր գիծը մեր յերկրում մեկ ե, դա գյուղացիական  
տնտեսության բարձրացման գործնական աշխատանքն ե: Բայց  
տվյալ մոմենտում այս կամ այն միջոցն զործադրելը պիտք է  
կախված լինի տնտեսության դրության հաշվառումից, կենցա-  
ղային պայմաններից, բնակչության տրամիցիաներից և մեր մեծ

յերկրի գանազան մասերի, զանազան բաղկացուցիչ տարրերի բնակչության զարգացման մակարդակից:

Յեվ այդ պատճառով ընկ. Խոջանովն իրավացի յեր, յերք այսուղի, վորպես մեր Միության բաղկացուցիչ խոշոր մասերից մեկի ներկայացուցիչ, Համագումարի ուշադրությունն եր հրավիրում մի քանի միլիոն զրդական տնտեսությունների կենցաղի հատուկ պայմանների վրա: Հարցը պարզ ե. այսուղի բնակչությունն անասնապահությամբ և զրաղվում, նա դեռևս նոր և անցնում հողագործության, և վորպես միենույն քաղաքականությունը կիրառենք նաև նրանց նկատմամբ, պետք է ունենանք այլ մոտեցում, քան այն մոտեցումը, վորն անհրաժեշտ և յերեվան ըերել վորոնեժի և Տամբովի նահանգների գյուղացիության նկատմամբ, վորովհետև Ուղրեքստանի գյուղացիական տնտեսության բարձրացման համար պահանջվում են այլ գործնական միջոցներ, քան Գոմելի կամ Մինսկի նահանգներում: Մենք պետք ե այս բանը նկատի ունենանք և շարլոնից խոռոշակենք:

Բոլոր ազգերի աշխատավորների համար միևնույն նպատակն ունենալով, ունենալով միենույն քաղաքական գիծը և գիտակցելով, վոր ինչպես զրպը, այնպես ել բելառուս, ինչպես Ուզբեկստանի այնպես ել Արֆանգելսկի նահանգի գյուղացու փրկությունը միենույն ճանապարհով և ձեռք բերվելու՝ այն և պրոլետարիատի հետ դաշնակցելու և Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումները պաշտպանելու միջոցով, — մենք ամեն կերպ պետք ե հարմարվենք առանձին հանրապետությունների հատուկ պայմաններին: Ի միջի այլոց այս և պատճառը, վոր հողագործության ժողովրդական կոմիսարիատներ կան Միության բոլոր բաղկացուցիչ մասերում: այս և պատճառը, վոր հողագործության ժողովրդական կոմիսարիատները մեզ մոտ կապված են մեր յերկրի մասերը կազմով ինքնավար հանրապետությունների, ինքնավար նահանգների և դաշնակից հանրապետությունների կառավարությունների հետ:

Մենք այսաեղ ձեզ հետ միասին, վորպես մերյերկի բոլոր բաղկացուցիչ մասերի միավորված աշխատավորների ներկայացուցիչներ, ընդհանուր քաղաքական գիծ ենք մշակում: Մեր խնդիրն ե, ինչպես ձեզ կերպով նկատեցն ընկ. ընկ. Խոջանովն ու Մաքսումովը, — ընդհանուր քաղաքական գիծը հարմարեցնել տարբեր պայմաններին, մայրենի լեզվով բացատրել գյուղացիներին, վոր վողջ գյուղացիական Միության ընդհանուր

մասսան ուզում ե բարձրացնել գյուղացիական տնտեսությունը, ինչպես և այն, թե նա ինչպես ե բարձրացնելու այդ տնտեսությունը: Յեվ յես համոզված եմ, վոր այն ձեռնարկումները, վորոնց մենք ձեզ հետ միասին հավանություն տվինք, ընդհանրապես հարմար են լինելու վոչ թե միայն վելիկուուսական նահանգների, վոչ թե միայն Ուղրայնայի բնակչության համար, վորի տնտեսությունը փոքր իշատե նման ե կենտրոնի տնտեսությանը, այլև այնպիսի հանրապետությունների տնտեսությունների համար, վորպիսիք են Ուզբեկստանը, զրդըների հանրապետությունը, Բելոռուսիան և այլն:

Յերրորդ կետը, վորի վրա յես կուզեյի կանգ առնել, այն մի քանի տեսնեցներն են, վոր Նկատվեցին այստեղ մի քանի ընկերների ձառնում, չնայած մեր ընդհանուր համաձայնության, անավանդ մի ընկերով ձառնում, վորն ընդհանրապես ձիշտ և լավ եր խոսում, բայց իր խոսքը վերջացրեց այնպիսի ցանկությամբ, վոր լավ կլիներ, վոր անտառները մի անգան տակ լինելին: Նախ և առաջ յես պետք ե ասեմ այդ ընկերովը, վոր այնքան ել շատ ժամանակ չի անցել այն որից, յերբ այդ անտառները մի անվան տակ ելին: Բոլոր անտառները մեզ մոտ պետական անտառներ ելին համարվում, բայց մենք հսկացանք, վոր յերբ անտառներն այդպիսի դրության մեջ են և «մի անուն են կրում», գյուղացիությունը չի կարող ստանալ այն փայտեղենը, վոր նրան անհրաժեշտ ե, և վորոշեցինք այդ մի անունը վերացնել, անտառների ընդհանուր տարածությունից անջատել տեղական նշանակություն ունեցող անտառները և այդպիսիները գյուղացիությանը հանձնել:

Այս բանը մենք մի քիչ վատ արեցինք, ձգձգեցինք, չավարտեցինք, բայց այժմ մենք առաջարկում ենք Համագումարին վորոշել, վոր տեղական նշանակություն ունեցող անտառների հանձնումը ավարտվի մինչև ոգոստոսի 1-ը:

Գուցե մենք սխալներ ենք գործել, գուցե բավականաշափացրիտ չենք վորոշել տեղերում ոգտագործելիք անտառների տառածությունը: այս հենց գրահամար ե, վոր բանաձեկվում ասված ե. բածությունը, և այն վայրերում, վորտեղ գյուղացիների «վերաբննել հարցը», և այն վայրերում, վորտեղ գյուղացիների պայմանը բաղարար չափով բավարարված չե, ավելի պայմանը պահանջը բավարար չափով բավարարված չե, ավելացնել տեղական նշանակություն ունեցող անտառների կառելացնել տեղական նշանակություն ունեցող անտառների տարածությունը:

Այս բոլորն, ինչպես և այլ գործեր անելիս, մենք սխալներ

ենք գործում, մեր ուզածի չափ արագ չենք անում այդ գործերը, բայց մեծ գործ շինելիս, մենք սովորում ենք:

Այս բոլորն այսպիս ե, բայց յերբ վոր վորոշ ընկերներ, թերեւս առանց իրենց հաշիվ տալու, փորձում եյին այսպիսի յեղակացություններ հանել թե՝ արդյոք լավ չի լինի այնպես անենք, վոր անտառներն ամբողջապես գյուղացիությանը հանձնենք, —մենք պետք են ասենք. դա անթույլատրելի յեւ: Դուք բավարար չափով չեք խորհրդածել այդ հարցի մասին, վորով հետեւ ամենքին հայտնի յեւ, վոր յիթե մենք Վոլոգդայի նահանգի անտառային մասսի վները հանձնենք վոլոգդացիներին, Արխանգելսկի նահանգինն—արխանգելցիներին, Վյատկայի նահանգինը—վյատկացիներին, ինչ կասեն Կուրսկի և Վարոնեմի նահանգների հարավային մասերում: Ի՞նչ դրության մեջ կը լինեն խարկովցիները, յեկատերինուլավցիները, դոնսավազանցիները, վորոնց սահմաններում անտառներ չկան: Միթե մեր պետությունը պետք ե մոռանա զրանց: Միթե պետությունը մենք նրա համար չենք կառուցել, վորպեսզի հավասար կերպով բաժանենք համաժողովրդական ստացվածքը բոլոր աշխատավորների միջեվ, անկախ նրանից, թե ինչ նահանգում են նրանք ապրում:

Միթե մենք կարող ենք այնպիսի քաղաքականություն վարել, վոր հյուսիսային նահանգների ամբողջ անտառները գտնը վեն հյուսիցիների ձեռքին, իսկ հարավցիներն առանց անտառնոտեն: Յեկ միթե այդ ճանապարհին վորք դնող ընկերները չեն հասկանում, վոր փայտեղնը մեր արտահանության գլխավոր տուրքաներից մեկն ե, մեր և արտասահմանի հարաբերության միջոցներից մեկը:

Յես հարց եմ տալիս. միվ պետք ե փայտեղնը արտասահման-արտահանի—վորպեսզի վյատիները (վյատկացիք), արխանգելցիք, թե վողջ գյուղացիությունն ու բանվոր դասակարգը, վորոնք բանվորական պետություն են կազմել: Յեկ ամեն վոք կպատասխանի, վոր պետությունը պետք ե ժողովրդական այս ստացվածքի, այս փայտեղնի միջոցով մանյովըներ անի արտասահմանի շուկայում, վորպեսզի դրա վաճառքից ստացած դրամով գնի մեր յերկրում չեղած կատարելագործված գյուղատնտեսական մեքենաներ, աղնավացած սերմեր և մեր յերկիր ներմուծի: Այս բանը վոչ թե մի առանձին նահանգ կամ շրջան (օբլաստ), այլ ամբողջ բանվորա-գյուղացիական պետությունը պետք ե անի:

Ահա թե ինչու, յերբ Ս. Խ. Հ. Միության Համագործարում; Հանրապետական, նահանգական, գավառական համագործարում քննադատում են Խորհրդային իշխանության առանձին-ձեռնարկումները և ուղղում են նրա սխալները, վորովհետեւ սխալ-ներ կան—և ծիծառելի կլիներ, յեթե մենք ու դուք, վոր ութ տա-րի յեւ միայն, ինչ պետության ղեկը մեր ձեռքն ենք առել, սխալներ չունենայինք, — նրանք ողիղ են վարդում, բայց յերբ վոր, մասամբ չխորհրդածելու պատճառով, մասամբ ել քաղաքա-կանության կամ զասակարգերի փոխարարերության մասին կանության կամ զասակարգերի փոխարարերության մասին, սխալ պատկերացում ունենալու հետեւանքով, անձիւտ յեղ-սխալ պատկերացում ունենալու են արգում, մենք պետք ե ասենք—վո՞չ, ըն-քերներ, այդ յեղարակացությունը սխալ ե:

Գուցե գյուղացիներին պետք ե ալելի շատ անտառ տալ: Յեկեք գործնականապես քննենք այս հարցը: Գուցե անտառը պետք ե շուտով տալ նրանց: Յեկեք այս հարցն ել քննենք: Բայց վոչնչացնել պետական անտառային ֆոնդը— այդ արդեն սխալ քաղաքականություն ե, և մենք այդ պետք ե բացատրենք գյուղացիությանը ու պնդենք այդ քաղաքականության անհրաժեշտությունը, վորովհետև Խորհրդային իշխանությունը նրա համար ե, վորպեսզի պահպանի առաջին բանվորա-գյուղացիական պետությունը և նրա ամրող քաղաքականությունը, մզի գետի սոցիալիստական տնտեսության կառուցմանը: Գործը: (Փափեր):

Հետեւվյալ հարցը, վորի վրա յես նույնպես կուզեյի փոքր ինչ կանգ առնել, հողաշնարարության հարցն ե: Յեկ մեղ հա-մար, վոր այստեղ լսում ենք հողից յեկող հայնը, և ձեզ բոլո-վար, վոր լսեցինք այստեղ հանդես յեկող ընկերներին, ըիդ համար, վոր հողաշնարարության հար-ամենքիս համար այժմ պարզ ե, վոր հողաշնարարության հար-իրոք ներկա մոմենտի կենարոնական հարց ե, գյուղացիական ցը կարող ներկա մոմենտի կենարոնական հարց: Այդ հարցին ե վերաբեր-անտեսության կարգավորման հարց: Այդ մասին հարցին ե նակայական մեծամասու-վում ինձ ուղղված գյուղացիունների հակայական պահանջանությունը, այդ մասին ելին խոսում համարյա այստեղ արտահայտող բոլոր հաետրոները: Յեկ մեր բանաձեկը ուղիղ ե վարդում, յերբ բոլոր հաետրոները: Յեկ մեղ բանաձեկը ուղիղ ե վարդում, յերբ դաշինարարության հարցին:

Յեկ ի՞նչպիս ենք լուծում մենք այդ հարցն այն բանաձե-ռիք վում, վոր յես առաջարկում եմ ձեզ: Մենք ընդունում ենք, վոր վում, վոր յես առաջարկում եմ ձեզ: Միությանը միանալու հողային ուղիղ հողաշնարարությունը հիմական նախադրյալն ե հողային ուղիղ

տնաեսության, վոր այդ պատճառով հողաշինարարության կենսագործումը գյուղացիության, գյուղատնտեսության, հետեւվապես նաև մեր ամբողջ պետական, և ժողովրդական տնտեսության համար, հիմնական հարվածային խնդիր եւ հայց վորովհետեւ մենք վոչ վոքի խարելու սովոր չենք, ուստի և ասում ենք, վոր այդ հարցը մենք չենք կարող լուծել վոչ մեկ տարվա, վոչ ել յերկու տարվա ընթացքում, այլ մեզ այսպիսի ժամկետ ենք նշանակում. հիմնական շրջանների համար, ուակավանող շրջաններում, վորոնց համար հողաշինարարության հարցն իրոք հիմնական հարց և այդ շրջանների ամբողջ տարածության վրա հողաշինարարական աշխատանքները պետք ե ավարտվեն տաս տարվա ընթացքում. Առանձին գյուղերի և առանձին հողային տարածությունների հողաշինարարությունը պետք ե տեսլի միայն մեկ տարի՝ միայն մեզն մեկ տարի՝ միայն մեզն. Յեթե այդ բանը ձգձգվում է, դա նշան և տեղական հողբաժինների կամ հողաչափների սխալ գործողությունների, և դրանց պետք ե քաշ տալ դեպի այն վայրերը, դեպի ուր պետք ե քաշ տրվեն վատ աշխատողները:

Մենք զիտակում ենք, վոր գյուղացիությունն իր սեփական միջոցներով չե կարողանա կատարել հսկայական հողաշինարարական աշխատանքները և յեթե գյուղի հարուստ վերնախավը կարող ե անել այդ և անել իր միջոցներով, — կասկածելի յե, վոր նույն բանը կարողանա իր հաշվին անել գյուղի միջակ մասը և կարելի յե ասել, վոր գյուղի չքավոր մասն այդ աշխատանքն իր հաշվին անել չե կարող:

Իրավացի յեր այն ընկերը, վորն ասում եր, թե չնորհիվ այն հանգամանքի, վոր հարուստները հողաչափ են վարձում, իսկ աղքատները չեն կարողանում վարձել, անթույատրելի հարաբերություններ են ստեղծվում, ինչպես մի գյուղացի ասեց, չքավորները փորձեր են անում իրենց հողերը տալու այն ունելիքը գյուղացիներին, վորոնք կարող են ծածկել հողաչափության ծախսները. Այդպիսի այլանդակ յերեվույթն անհանդուրժելի յե Խորհրդային պետության մեջ, Այդ պատճառով մենք ընդունում ե զրում ենք մեր բանաձևում, վոր հողաշինարարական աշխատանքները, մանավանդ և մասնավորապես գյուղի չքավոր ժամանակաշինարարական աշխատանքները, պետք ե կատարել պետության հաշվին և այդ գործին 1924—25 տնտեսական տարում, վորը վերջանում է 1925 թվի հոկտեմբերին, մենք պետք ե հատկացնենք 3 միլիոն ոռություց վոչ պակաս և, բացի այդ, եժանաց-

նենք ու մեծացնենք գյուղացիներին հատուկ նպատակով, այն ե հողաշինարարական աշխատանքների համար արվող վարկը. Այս վորաշումը, վորն արդեն ընդունված ե կառավարության կողմից և վորն, անշուշտ, կհաստատվի Համագումարի կողմեց, առաջ կշարժի հողաշինարարական աշխատանքները. իսկ մենք կարգի կը բերենք այն հողը, վոր հեղափոխությունը տվել և գյուղացիներին, և գյուղացիությանը հնարավորություն կըտանք, վոր այն հողում նապատակահարմար, այսինքն գիտական տվյալների և հիմքերի վրա դրված տնտեսություն վարի: Դրանով առաջ կշարժի գյուղի բոլոր արտադրական ուժերի զարգացումը:

Յես կուղելի մատնանել այն, վոր, իհարկե, իշխանության ուժը միայն այն չե, վոր այս կամ այն որենքը հրատարակի: Լավ որենք գրելը վերջիվերջո դժվար գործ չի, բայց իրականացնել այդ որենքը, հարմարեցնել այն վոչ միայն գյուղացիական մասսայի պահանջներին ու կյանքի պայմաններին, վորոնց համար նա հրատարակված ե, այլև հարկադրել, վոր այդ որենքն իրականացվի այն պետական ապարատի միջոցով, վոր մենք ունենք կորն առաջմ դեռ շատ վատ ե թե վերում և թե վարում — սա շատ ու շատ ավելի գժվար խնդիր ե:

Յեկ այս պատճառով յես լիովին արգարացի յեմ համարում այն բազմաթիվ բողոքները, վոր հնչվեցին այս ամբիոնից այն մասին, թե որենքը վատ ե զործալրվում, թե հաճախ լավ որենքն այնպիսի ապարատի ձեռք ե ընկնում, վորը փչացնում և այն, և այդ լավ որենքը վոչ թե իր յերեսն ե դեպի գյուղ, զարձնում, այլ իր մարմնի բոլորովին այլ մասը: (Ճիծաղ):

Այս բոլորը պետք ե տեսնենք, վորովհետեւ մենք — պետության տերն ենք, մենք ենք կառուցում այն, և մեր մեջ չկա վոչ մի խելագար, վոր ասի, թե մենք մեր պետությունն արդեն կառուցել ենք, թե այն կարգերը, վոր կան մեզ մոտ այսոր, 1925 թվի մայիսի 18-ին, հենց այն ե, ինչին ձգտում ենք մենք:

Վհչ, սա դեռևս բոլորովին այն չե, ինչին մենք ձգտում ենք: Սա — գեռես մի աստիճանաբարն ե, սկիզբը, առաջին քարը, վորի վրայից դեռևս անցյալի փոշին չի վերացել:

Հետագա կառուցումները մենք հաճախ ստիպված ենք լինում անել այնպիսի ապարատի ձեռքով, վորն ամենենքին չի ուղարկում կառուցել, վորը բանվորների և գյուղացիների համար ստիպողաբար և աշխատում, վորը բանվորների և գյուղացիների հետ աշխատելուն ընտելացած չի:

Յես նկատի ունեմ նրանց, ովքեր ամենից մոտ են կանգնած գյուղում կատարվող աշխատանքին, բայց սա վերաբերվում է նաև քաղաքի աշխատողներին, վորոնց սովորեցրել են աշխատել կալվածատերերի, խոշոր տնտեսատերերի, բայց վոչ միջակ գյուղացու, սակավազոր տնտեսատիրոջ, չքափորի հետ:

Յես միանգամայն հավատացած նմ, վոր այն պերսոնալի խոշորագույն մասը, վոր ժառանգություն և մնացել մեզ հին կարգերից.—աղնիվ մարդիկ են, վորոնք, համոզվելով, վոր Խորհրդային իշխանությունը կայուն են, վոր նա մի քանի մարդկանց հերյուրանք չեն, այլ իսկական արտահայտությունը բանվորների և գյուղացիների միլիոնավոր մասսաների կամքի,—աղնվաբար և անկեղծորեն ուղում են աշխատել, բայց չեն կարողանում, վորովհետեւ նրանց այդ բանը չեն սովորեցրել:

Նրանք հաճախ չեն կարողանում հասկանալ, թե ինչ ենք ուղում մենք և դուք, վորովհետեւ մենք ձեղ հետ միասին ուղում ենք բանվորների ղեկավարությամբ սոցիալիզմ կառուցել վողջ գյուղացիական մասսայով, իսկ յերբ նրանք սովորում ենին ցարկան դպրոցներում, այս մասին առգելված եր խոսել, Մենք նրանց պիտք ե այլափոխենք նույն ժամանակամիջոցում, յերբ մեր կառուցումն ենք անում: Դա—դժվարին խնդիր ե, և այդ խնդիրը մենք կկարողանանք լուծել միայն այն ժամանակ, յերբ մեր ձեռնարկումները կիրականացվեն վոչ թե միայն չինովակիների ձեռքերով, վոչ թե բյուրոկրատիկ ապարատի միջոցով, այլ գյուղացիական մասսաների իսկ ինքնագործունեությամբ, նրանց կանորովի տակ, նրանց անդուր վերահսկողությամբ, այդ մասսաների ցանկությունները միշտ հաշվի առնելով:

Այս նպատակով մենք առաջարեցինք խորհուրդների աշխատացման լոգունքը, այն նպատակով եր կենիքն ասում, վոր կոռպերացիան պիտք ե մեր շենքի անկյունաքարը լինի, վորպես միլիոնավոր կոտորակված գյուղացիական տնտեսությունների սոցիալիստական շինարարության շկոլա:

Մանը և կոտորակված տնտեսության տեր գյուղացին սոցիալիզմ, նոր տնտեսարարություն, առաջընթացություն և կապիտալի ղեմ կովել սովորելու համար խորհրդային և կոռպերատիվ կազմակերպությունից զատ ուրիշ տեղ չունի: Յեթե այն միջոցները, վոր մենք այստեղ ընդունելու յենք, հանձնենք շինովնիկական ապարատի ձեռքը, վոր մենք այստեղ ընդունելու յենք, հանձնենք շինովնիկական

ցուց անկախ՝ դա գործի կործանումն կլինի: Բայց յերբ վոր մենք այդ գործը կազմակերպված գյուղացիությանը, նրա հասարակական և խորհրդային կազմակերպություններին ենք հանձննում, դրանով իսկ մենք այդ գործը ամուր ձեռքերի, բանվորական ձեռքերի յենք հանձննում, վորոնք գուցե վորեվե բանում սիալվեն, բայց ընդհանրապես գործը կշինեն և իսկական նշանակեալ կգտնեն:

Յեթե այս դեպքում պարզվի, վոր այդ կետը խիստ տհաճելի կլինի վոմանց, որինակ, բուրժուազիայի, հարուստների, սպեկուլյանտների, վաշխառուների համար—մենք կասենք. Ի՞նչ արած, զուր մի դժոնիք, չե վոր մենք մեծամասնություն ենք և պարտավոր չենք հաճոյանալ շահագործող փոքրածանությանը: Թող նա ինքը մեր շահերին ծառայի: (Փափեր):

Ահավասիկ, բնկերներ, այն, վոր յես կուզեյի ավելացնել այն գործնական ձեռնարկումներին, վոր յես առաջարկեցի ձեզ: Տաճբովից յեկած մի ընկեր ասաց, վոր իմ զեկուցումը լսելով, նա մտածում եր. Կան քաղաքագետներ բարձրում, իսկ ինչները գյուղական քաղաքագետներ ե: Մեր ամբողջ համագումարի, ինչպես և հարցը մեր կողմից քննելու նպատակն ել հենց այն ե, վոր այն քաղաքագետները, վորոնց հանձնված և յերկրի կյանքի և պետության սոցիալիստական շինարարության ընդհանուր ղեկավարությունը, խորհրդացեն և կերպարունակության գյուղական քաղաքագետների հետ: Այլ կերպ, յեթե մեր, քաղաքագետ—բանվորներին, և այն ընկերների միջև, վորոնք քաղաքականությունն կինսագործում են գյուղում, փոխադարձ անհասկացողություն տիրեր, կամ իրար հետ համաձայնության—չգայինք—մեր գործն առաջ չեր գնա:

Մեր ուժն այն ե, վոր մեր յերկրում ծնվել ու հասակ են առել քաղաքագետ—բանվորներ, քաղաքագետ—գյուղացիներ, և վոր բոլոր այդ քաղաքագետները, վորոնցից ամեն մեկն իր անկյունում, իրենց համագումարներում և աշխատում, հնարավորություն ունենալու մեջ կուտակում կատարելու մեջ կուտակում անել, մշակել ընդհանուր քաղաքականություն, վորն ամբողջ գյուղացիական մասայով ու պրոլետարիատի ղեկավարությամբ կատարվող սոցիալիզմի շինարարության քաղաքականություն ե, սոցիալիզմի իրականացման նպատակին և ծառայում: (Յերկարագել ծափեր):

ԱԽՀՄ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ Յ-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ  
ՎՈՐՈՇՈՒՄԸ

ԸՆԿ. Լ. Բ. ԿԱԾԵՆԵՎՎԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԸՐԹԻՎ

Լսելով ընկ. Լ. Բ. Կամենեվի զեկուցումը «Գյուղացիական տնտեսության բարձրացման և ամրացման միջոցների մասին», ՍԽՀ Միության Խորհուրդների Յ-ՐԴ համագումարը վորոշում ե.

1. Միության ամբողջ ժողովրդական տնտեսության շահերը պահանջում են, արդյունաբերության հետագա զարգացմանը զուգընթաց, ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները, գյուղացիական տնտեսությունների վողջ մասսան ամրացնելու և բարձրացնելու համար, վորի նպատակը պետք և լինի բարձրացնել այդ տնտեսությունների յեկամուտը:

Գյուղացիությունը պետք ե հնարավորություն ստանա, վորպեսզի իր տնտեսության մեջ լրացուցիչ մեծ միջոցներ գնի, բարձրացնի նրա տեխնիքական մակարդակը և ավելացնի շուկա հանվող մթերքների քանակը։ Այս նպատակով համագումարն անհրաժեշտ է համարում մեկ կողմից վերացնել մի շարք սահմանափակումներ, վորոնք կասեցնում են գյուղատնտեսության զարգացումը և, մյուս կողմից, գործող որենսդրությունը լրացնել մի շարք ձեռնարկություններով, վորոնք կարող կը լինեն թեթևացնել գյուղացու համար իր տնտեսության բարձրացման և ամրապնդման գործը։

Ազատ առեւտրի հողի վրա աճող գյուղի բուրժուական (կուլակային) վերնախավի դեմ վորեն վարչական միջոց գործադրելն աննպատական արմար համարելով, անհրաժեշտ համարելով գյուղացիական աշխատավորական տնտեսության նպաստելը, ինչ չափով վոր դա տնտեսության կատարելագործված յեղանակների հաղորդիչն ե, — Համագումարը միենույն ժամանակ հայտարարում է, վոր Խորհրդային իշխանության քաղաքականությունը պետք ե այնպիսի ուղղություն բռնի, վոր կարողանա իրական ոգնություն ցույց տալ գյուղացիության չքավոր և միջակ տարբերին։ Նրանց տնտեսության ու նյութական բարեկեցության բարձրացման և նրանց քաղաքական ու կուտուրական աճման գործում։ Գյուղացիության այդ խավերի միավորումը կոռպերացիայի միջոցով և առաջին հերթին գյուղատնտեսական ու վարկային կոռպերացիայի միջոցով—միակ ուղիղ ճանապարհն ե, վորով կարելի յե բարձրացնել նրանց տնտեսական կարողու-

թյունը՝ պայքարել հարուստների, վաշխառուների և միջնորդների շահագործման դեմ և գյուղացիությանը հաղորդակից անել սոցիալիստական տնտեսության շինարարությանը։

Ամենամոտիկ ժամանակում Խորհրդային իշխանության առաջին և հիմնական անելիքն ե լինելու ոգնել կոռպերացիայի մեջ միավորված գյուղացիությանը, վորպեսզի նա աշխատավորական հողոգուազործման պահանջների սահմաններում լրացնի իր կենդանի և մեռյալ ինվենտարը։

11. Իր առաջ դնելով վերոհիշյալ խնդիրները և աշխատելով վողջ գյուղացիությանն ավելի մեծ ազատություն տալ պորձադրման ու նրա արդյունքների ոգտագործման խնդրում, Համագումարը վորոշում է.

1. Հավանություն հայտնել կենագործկոմի և Ժողկոմխորհի ընդունած գյուղատնտեսական հարկի նոր կանոնագրությանը, վորով 100 միլիոն ոռուբրով նվազեցվում են գյուղացիության վճարումները, անասունները վարելահողի հաշվարկելու ավելի ուղիղ միջոց և սահմանվում է գյուղացիությանը արվում և հարկի վաղորոք հայտնի հաստատուն չափ։ Միենույն ժամանակ Համագումարն անհրաժեշտ է համարում ավելի ևս բարելավել միասնական գյուղատնտեսական հարկը, նրա ծանրությունը գյուղացիական տնտեսության համար թեթևացնելու և առանձին շրջանների ու առանձին տնտեսությունների համար այդ հարկը, համաձայն նրանց տնտեսական ուժի ավելի արդարացի կերպով բաշխելու համար։

2. Հավանություն հայտնել միասնական գյուղատնտեսական հարկից 100 միլիոն ոռուբրի վոլոստների (շրջանների) տնտեսությանը հանձնելու մասին արված գորոշմանը, պարտավորացնելով վոլոստներին, վոր այդ գումարները ծախսեն տեղակացյուղացիության պահանջների հետ անմիջականորեն կապված գրիքների վրա (գլուցներ, հիվանդանոցներ, տեղական ճակարիքներ և այլն)։

3. Կարականապես արգելել գյուղացիությանը վորեկ տեղական լրացուցիչ ապրուի տուրքադական յենթարկելը։

4. Քանի վոր ուղիղ հողագործական տնտեսության անցնելն առաջին հերթին կապված է հողաշինարարության իրուկանացման հետ, ուստի անհրաժեշտ է,

ա). Հիմնական շրջաններում հողաշինարարական աշխատանքները կատարել և ավարտել տաս տարվա ժամանակամիջոցում։

թ). Պետության հաշվին ընդունել գյուղացիության չքավոր մասի համար կատարվող հողաշինարարական աշխատանքների վարձատրությունը, դեռևս ընթացիկ տարում այդ նպատակին հատկացնելով 3 միլիոն ռուբլի.

Դ). Հավանություն հայտնելով հողաշինարարական աշխատանքների համար գյուղացիությանը վարկ տալու նպատակով 6 միլիոն ռուբլի հատկացնելուն, հետագայում այդ նպատակով տրվող վարկի գումարը մեծացնել, վարկն եժանացնել և վարկավորման ժամանակամիջոցն յերկարացնել.

5. Անհրաժեշտ ե սակավահող նահանգներում պետական ֆոնդի (դրանց թվում նաև պետարքինների կողմէց կապալով վերցնվող) հողերի մի մասը գյուղացիներին հանձնել, յեթե այդ հողերը չեն ոգտագործվում այն նպատակով, վորով պետք ե ոգտագործվելին, կամ աննպատակահարմար ձեզով են ոգտագործվում. բացի այդ, անհրաժեշտ համարելով խորհրդային տընտեսություններին ամեն կերպ ոժանդակելը, վորպեսզի կարողանանք այդպիսիններն ազըիկուլառուրային, ցուցադրական տնտեսությունների վերածել, պետք ե միջոցներ ձեռք առնել վերանայելու սակավահող շրջանների խորհրդային տնտեսությունների ցուցակը, նրանց թիվը կը ճանաչելու և այդպիսով ազատվող հողերը գյուղացիներին ի ոգտագործում հանձնելու համար.

6. Անհրաժեշտ ե տեղական նշանակություն ունեցող անտառների գյուղացիներին հանձնելն ավարտել մինչեվ ընթացիկ տարվա ոգոստոսի 1 ը, պարտավորեցնելով տեղական գործկոմներին, վոր, կենտրոնից հանրավոր ֆինանսական ոժակություն ստանալով, ապահովին նյութական միջոցներով այս վորոշման կենսագործումը. այն շրջաններում, վորտեղ տեղական նշանակություն ունեցող անտառների գյուղացիներին հանձնելը չի բավարարել նրանց փայտեղենի տարանջը, միջոցներ ձեռք առնել լրացնուցիչ կերպով նրանց անտառներ հատկացնելու համար բոլոր այն վայրերում, վորտեղ այդ հանրավոր կը լինի. իսկ անտառազուրկ շրջաններում կազմակերպել պետական պահեստներ՝ գյուղացիությանը մատչելի գնով փայտեղին մատակարարելու համար:

7. Խստիվ կիրառել հողային կողեքսի հիման վրա հողոգտագործման ձեվերի աղատ ընտրության իրավունքը, վարչական արգելքներ չհարուցելով հատվածական և ազարակային տնտեսություններ ստեղծելու դեմ. միաժամանակ միջոցներ ձեռք առնել

զարգացնելու համար հողոգտագործման այնպիսի ձեվեր, վրունք ավելի նպաստավոր են գյուղատնտեսության սեքենայացման և կոռպերացման համար (շենք, գաղութաստաններ (վայելք) և այլն):

8. Հողի մշակության և պարարտացման վրա ծախսվող գումարներն ավելացնելու և հողի յեկամուտը բարձրացնելու նպատակով, վճռական կերպով պայքարել հողային կողեքսին հակասող համարակալի հողաբաժանությունների դեմ:

9. Հողը լավագործ կերպով ոգտագործելու և միջոցների ու ինվենտարի պակասության պատճառով իր հողը մշակելու հնարավորություն չունեցող չքավորներին ոգնելու նպատակով, վերացնել արգելքները և գյուղացիներին հնարավորություն տալ, վոր ավելի լայն չափերով ոգտագործեն իրենց իրավունքն ու հողը կապալով տան՝ սերմափոխության բազմամյա սիստեմի ու զորագրության դեպքում մինչև 2 ցանքսաշրջան և յերեք ու զորագրության դեպքում այդպիսի համապատասխան կերպով համարակալով գյուղի կամ 12 տարի ժամանակով:

Վերացնել նաև այն արգելքները, վորոնք խանգարում են գյուղական համայնքների չոգտագործված հողային ֆոնդն անհատ հողոգտագործողներին կապալով տալու գործը, այդ կապալավարձը համապատասխան կերպով համարակալով գյուղի կամ վոլոստի բյուջեյի կարիքներին:

Թույլատրել պետական ֆոնդային հողերի հողամասերն անհատ հողոգտագործողներին 12 տարուց ավելի ժամանակով կապալով տալը՝ համաձայն համապատասխան պայմանագրի: Կապալով տալը՝ համաձայն համապատասխան պայմանագրի: Կատրականապես արգելել և վճռական պայքար մղել փոխանցական վարձակալության (ցիբ-արենդա), այսինքն վարձակալության իրավունքները յերրորդ անձի հանձնելու բոլոր տեսակների թեմ, այդպիսին աղքայնացրած հողի հանցավոր չարաշահություն համարելով:

10. Հավանություն հայտնել 1925 թվի ապրիլի 18-ի «ժամանակավոր կանոններին» գյուղացիական տնտեսությունների մեջ օժանդակ վարձու աշխատանք գործադրելու և աշխատողներ վարձելու պայմանների մասին, վորոնք գյուրացնում են բանվորական ուժի գործադրությունը գյուղատնտեսության մեջ գյուղի այժմյան տնտեսական պայմանների համաձայն. այդ որենքը տարածել վարձու աշխատանքի գործադրության վրա նաև վարձակալված հողերում:

11. Նկատի ունենալով, վոր գյուղատնտեսության հետագա աճումը դանդաղեցնող հիմնական հակասությունն այն անհամաշաբությունն է, վոր գյուղատյուն ունի հեղափոխության կողմից գյուղացուն հանձնված հողի քանակի և այդ հողի մըշակման համար անհրաժեշտ կիսդանի ու մեռյալ ինվենտարի քանակի ու վորակի միջեվ, անհրաժեշտ և ձեռք առնել կարուկ միջոցներ գյուղատնտեսության համար կործանիչ այդ անհամաշաբությունը վերացնելու համար. այդ բանի համար անհրաժեշտ ե՝ ա). Պետության և կոռպերացված բնակչության ուժերով հինգ տարվա ընթացքում վերականգնել ձիակազմը (կոնեկտ ստուգության գարգացումը).

բ). Վերանորոգել և լրացնել մեռյալ ինվենտարը, պետական գործարաններում համապատասխան արտադրությունն ընդարձակելով ու բարեկավելով, ինչպես և տնայնադրծական յեղանակով այդպիսի ինվենտար պատրաստելով ու մատչելի գներով գյուղացիությանը հասցնելով.

գ). Մեծ թափով գյուղացիական տնտեսության մեջ մտցնել ըարդ մեքենաներ, մասնավորապես տրակտորներ. Յերկրագործական մեքենաների և գործիքների նկատմամբ գյուղացիության պահանջը լիովին բավարարելու նպատակով ՍևՀ Միության սահմաններում յերկրագործական մեքենաներ շինելու գործն առավելագույն չափերով ընդարձակելուն զուգընթաց, յերկրագործական գործիքների ու մեքենաների համապատասխան ներուժում կատարել արաւասահմանից:

12. Գյուղացիության վարելանողերի քաղակալած լինելու դեմ պայքարելու և այդ հողերի յեկամուտն ընդհանրապես բարձրացնելու նպատակով, անհրաժեշտ և միջոցներ ձեռք առնել ազնվացրած սերմերի արտադրությանն ու բազմացնելուն զարկ տալու համար. Զատկմանափակվելով արդեն իսկ տվյալ նպատակին հատկացրած միջոցներով (2,170,000 ռ.), անհրաժեշտ ե, վոր այսունետե ևս այս ասպարիզում ուժեղացրած աշխատանք կատարեն թե պետությունը, թե կոռպերացիան:

13. Շարունակել պետական արդյունաբերության կողմից արտադրվող և գյուղացիության սպառման յենթակա ապրանքների իջեցման քաղաքանությունը. Իրական հնարավորություն ստեղծել գյուղացիաթյան համար, վոր նա իր տընտեսության արտադրանքները վաճառի այնպիսի գներով, վո-

րոնք, ծածկելով նրա ծախսերը, հնարավորություն կտան նըան զարգացնելու և ամրացնելու իր տնտեսությունը. Պետության կողմից գործադրվող գների անխուսափելի և անհրաժեշտ կանուալորում վոչ մի զեպքում չպետք և հասցնել վաճառորդ գյուղացիների համար քայլքայիչ ու պարտադիր գներ սահմանելու դաշիների համար քայլքայիչ ու պարտադիր գներ յերկարական միջրության. Առավել ևս անթույլատրելի յերկադրական միջրության: Առավել ևս անթույլատրելի յերկադրական միջրության:

14. Նկատի ունենալով, վոր գյուղացիական տնտեսության յեկամուտը կախված և գյուղատնտեսության արտադրանքն արյական շուկայում վաճառելու հնարավորությունից, անհրատաքին շուկայում վաճառելու հնարավորության մարմինների առաջ զնել ժեշտ և համապատասխան պետական մարմինների առաջ զնել անդիրը, վոր ապահովեն զյուղացիական տնտեսության այն ինպիրը, վոր ապահովեն զյուղացիական տնտեսության ապահովեն ապահովեն արտասահմանյան շուկաներում արտադրանքների սպառումն արտասահմանյան ապահովերի մեջորդացիին իշխանության սահմանած արտաքին տուփտրի մեջ նարնըն այս զեպքում Միության գյուղատնտեսության արտադրանքներին ամենածենուու պայմաններ ապահովելու հնարավորություն և տալիս: Խոկ գյուղանտեսության արտադրանքը բարձրություն և տալիս: Խոկ գյուղանտեսության արտադրանքը բարձրություն և տալիս: Խոկ գյուղացիությանը հետզենետե ավելի ու ավելի մեծ գնել վոր գյուղատնտեսական կոռպերացիան:

15. Նկատի ունենալով, վոր գյուղացիական տնտեսության յեկամուտը նշանակելի չափերով բարձրանում ե, յեթե վաճառքի յեն հանվում գյուղական արդյունագործության արդեն իսկ յեն համար պահանձման և ներմուծման գործին մասնակից զարձնելով պես արտածման և ներմուծման գործին մասնակից զարձնելով գյուղատնտեսական կոռպերացիան:

գործին, մանավանդ, վոր գյուղացիության արտադրությունը այդ մշակումից արտասահման արտահանելը գյուղացիությանն ավելի ձեռնոտու յի, քան հուժ նյութ արտահանելը:

16. Առանձնապես անհետաձգելի համարել յերաշտոտ շըրջաններում գյուղատնտեսությունը վերականգնելու և զարգացնելու համար պլանաշափ ձեռնարկումներ կիրառելու գործը:

Հիշյալ ձեռնարկումների համար միջոցներ պետք է հատկացվեն այնպիսի քանակությամբ, վոր ճնարավորություն արվի ավարտել անհրաժեշտ աշխատանքները 5-6 տարվա ժամանակամիջոցում և այնպիսի ճշագրով, վորն իրոք կարող ե ապահովել համապատասխան շրջանների գյուղացիությունն անբերը թյան աղետների կրկնությունից բացի այդ, այդ պլանը պետք է յելակետ ընդունի 77 միլիոն ռուբլու սահմաններում հաշված արտադրական պլանը:

17. Պետք է թեթեվացնել անայնագործության և արհեստների ասպարիգում գյուղացիության բանվորական ուժերի գործադրության պայմանները, Այս նպատակով հավանություն հայտնել ապրիլի 10-ի որենքին՝ արհեստավորներին ու տնայնագործներին արտօնություններ տալու մասին, վորպիսի որենքը թեթեվացնում և նրանց տուրքազրումը և թույլ և տալիս տնայնագործական արդյունաբերության մեջ բանվորական ուժը գործադրել ավելի մեծ չափերով, քան մինչ այժմ և յեղել, Բացի այդ, անհրաժեշտ և մշակել նոր միջոցներ՝ տնայնագործական և արհեստավորական արդյունաբերության վիճակը թեթեվացնելու համար, տնայնագործներին արտօնյալ վարկ տալու, ինչպես և անհրաժեշտ նյութեղեն հայթայթելու միջոցով: Պետք է մշակել աշկերտությունը խրախուսող միջոցներ այն նկատառումով, վոր գյուղացիական յերիտասարդությունն իր ուժերի գործադրության ավելի լայն ասպարեզ ունենա, քան մինչ այժմ և ունեցել, և արհեստանոցների, դպրոցների ու այլ հաստատությունների ցանցը խտացնելու միջոցով՝ նպաստել գյուղացիական յերիտասարդության տեխնիքական պատրաստության գործին:

18. Անհրաժեշտ և վերացնել վարչական այն արգելքները, վորոնք խանգարում են գյուղացիական մանր առեվտուրը շուկաներում, նավահանգիստներում, յերկաթուղակալայաններում և այլն:

19. Սակավահող շրջանների գյուղացիությանը դեպի ազատ հողեր գաղթելու հնարավորություն տալու նպատակով՝ ուժեղացնել այդ հողերի հարմարեցման, ինչպես և գաղթողներին անհրաժեշտ ինվենտար մատակարարելու աշխատանքը, ավելացնելով պետության կողմից այդ նպատակին հատկացվող գումարները:

20. Ընդունելով, վոր արտադրող գյուղացիների կամագոր կոռպերատիվ միավորությերը գյուղացիական տնտեսության բարձրացման ամենազորեղ և ամենաուղիղ միջոցն են, ընդունելով նաև այն, վոր միայն նման կոռպերատիվ միավորման միջոցով ե, վոր գյուղացիական մանր տնտեսությունը կարող և խուսափել կապիտալի ստրուկտուրայի կառավագությունը, Զամագումարը Խորհրդային իշխանության վերից-վար բոլոր մարմինների ուշադրությունն և հրավիրում այն բանի վրա, վոր անհրաժեշտ և ամեն կերպ նպաստել գյուղացիական տնտեսության կոռպերատիվ միավորման գործին: Համագումարը պահանջում և խստացույնս կիրառել բոլոր այն որենքները, վորոնք ապահովում են կոռպերացիայի իրոք կամագոր բնույթը, նրա մարմինների իրական ընտրովիտյունը, նրա կապիտալների անձեռնմխելիտյունը և նրա անգամների ինքնագործունեությունը: Գյուղատնտեսական կոռպերացիան իր ամբողջ ուշադրությունը պետք է կենտրոնացնի մի հիմնական խնդրի վրա—իրոք միավորի գյուղացիների բազմամիջիուն մասսաները, մանավանդ միջակներին և չքավորներին՝ նրանց տնտեսությունն ամրացնելու նպատակով, բարձրացնի նրա տեխնիքական մակարդակը. և այնպես անի, վոր նըրոնք կոտորակված ու հետախուց արտադրության ձեվից, վորից կապիտալիզմն և ծնվում, աստիճանաբար անցնեն խոշոր կոլեկտիվ տնտեսության, վորը խորհրդային կարգերում անխուսափելիորեն սոցիալիզմի հիմքն և դառնալու: Գյուղացիական տընտեսության համակողմանի (ԵՎԵՍՏՈՐՈՒՆԻ) միավորումը (սպառան, մշակման, հայթայթման և վարկավորման ասպարիգում) նպատակ գարձնելով և, մասսավորապես, նպաստելով գյուղատնտեսության կոլեկտիվացմանը՝ կոլեկտիվ տնտեսությունների ձեփով, գյուղացիական և վարկացիին կոռպերացիան, գյուղացիության լայն մասսաների տնտեսության արդի դրությունը նկատի առնելով, պետք է հատուկ ուշադրություն դարձնի գյուղացիական միավորուների ամենամատչելի, հասկանալի և ուղղակի

չքավորների ու միջակների գրությունը բարելավող ամենապարզ ձեվերի վրա (մեքենա հայթայթող, սերժազտիչ, աղնվացեղ ցուլեր ձեռք բերող և այլ սերմարուծական, մելիորատիվ, ընկերություններ):

Գորպեսզի կոռպերացիան կարողանա իրագործել իր հիմնական նպատակը, գյուղացիության միջակ և չքավոր խավերի կոռպերատիվ միավորումներին Խորհրդային պետությունն այսուհետեւ պետք են նպաստի և նյութական ոգնություն ցույց տա: Կոռպերացիայի վրա դրված պետական խնդիրները պետք են իրագործել վոչ թե վարչական կարգով, այլ այդ բանը պետության կողմից ցույց տրվող ֆինանսական-տնտեսական ոժանդակությանը համաձայնեցնելու կարգով: Միևնույն ժամանակ Համագումարը պահանջում է կոռպերատիվ միավորումների բոլոր տեսակներից և նրանց ղեկավարներից, վոր աշխատանքը դնեն իրոք տնտեսարար խստագույն և ճիշտ հաշվետվության ու չարարակումների դեմ անխնա պայքար մղելու հիմքերի վրա:

21. Նկատի ունենալով, վոր գյուղացիական տնտեսության ների վող մասսայի հետագա բարձրացումը հնարավոր ե միայն այն դեպքում, յեթե կա լայն, եժանազին և գյուղատնտեսության պայմաններին համապատասխանող վարկ,—գյուղացիներին վարկ տալու գործում տվյալ մրժենում հիֆական խնդիր համարել վարկի ժամանակամիջոցի յիրկարացնելը և նրա եժանացնելը: Այս նպատակին հասնելու համար, անհրաժեշտ ե սեկ կողմից ավելացնել կենտրոնական և հանրապետական գյուղատնտեսական բանկերի միջոցները, վորի համար նրանց կապիտալները գալիք բյուջետային տարվա ընթացքում պետական միջոցներից պետք ե ավելացվեն վոչ-պակաս, քան 100 միլիոն ռուբլիով, և մյուս կողմից ամեն կերպ պետք ե աշխատել բնակչության տնտեսումները գրավելու դեպի ստորին գյուղատնտեսական վարկային կոռպերատիվներն ու գյուղատնտեսական բանկերը. ընդ ամին, ավանդատունների համար պետք ե ստեղծել իրենց տնտեսումները նման ձեվով պահ տալու ամենաձեռնության պայմանները: Պետք ե նկատի ունենալ, վոր գյուղատնտեսական վարկային հաստատությունների արամադրության տակ գտնվող գործարները գյուղացիական տնտեսության վարկավորումից զատ այլ նպատակների չեն կարող հատկացվել: Վարկային միջոցների հատկացումը պետք ե սերտորեն կապել հողային մարմինների արտադրական պլաների հետ և պետք ե ձգել բավա-

րաբելու գլխավորապես գյուղի միջակ և չքավոր խավերի ու նըրանց միավորությունների տնտեսական կարիքները:

22. Պետք ե ընդունել վոր գյուղացիական տնտեսության փոշիացած լինելու շնորհիվ, նրան բարձրացնելու և տնտեսավարության լավագույն յեղանակը նրանում արմատավորելու ամենաըպատակահարմար միջոցը՝ մասսայական ձեռնարկումներն են, այն ձեռնարկումները, վորոնց նպատակն ե ազգել գյուղացիական տնտեսության ամրող մասսայի վրա և վորոնք իրականացվում են կոռպերացված գյուղացիության միջոցով: այս պատճառով անհրաժեշտ ե հավանություն տալ մասսայական ձեռնարկումներին և ՌՍՖՌ հողագործության ժողովրդական կոմիսարիատի գործունեության հիմքում դրված աշխատանքերին, ցանկալի համարելով, վոր դրանք գործադրվեն Միության ամբողջ տերիտորիայում, ուստի պետք ե նպաստել այդ ձեռնարկումների հաջողությանը, համապատասխան ֆինանսական և կազմակերպչական ոգնություն ցույց տալու միջոցով:

23. Նկատի ունենալով, վոր գյուղատնտեսության մակարդակն առանձնապես զածը և ՍԽՀ Միության մի քանի շրջաններում, անհրաժեշտ ե հատուկ ուշադրություն դարձնել այդ շրջանների արտադրական ուժերի զարգացման և գյուղատնտեսության բարձրացման վրա: բացի այդ, այդ շրջանների բնակչության կուլտուրական մակարդակի բարձրացման համար անհրաժեշտ ե ցույց տալ հատուկ նյութական ոգնություն, առանձնապես նպաստելով գյուղատնտեսական արտադրության այն ճյուղերի զարգացմանը, վորոնք ամենից ավելի յեն համապատասխանում այդ շրջանների կիմայական, տնտեսական և կենցաղային պայմաններին: պետք ե նպաստել այդ շրջաններն արդյունաբերական կենտրոնների հետ կապող հաղորդակցության ճանապարհների ցանցի զարգացմանը, միաժամանակ հատուկ ոժանդակիչ նյութական միջոցներ հատկացնելով այդ շրջանների բնակչության կուլտուրական կարիքներին:

24. Վերոհիշյալ միջոցների կիրառման հսկողությունը և համապատասխան որենքների ու ձեռնարկումների մշակումը հանձնել դաշնակից և ինքնավար հանրապետությունների հողագործության ժողովրդական կոմիսարիատներին: իսկ հողային մարմինների ուժեղացման և նրանց ու գյուղացիության միջեվ ավելի սերտ կապ հաստատելու համար՝ անհրաժեշտ ե:

ա) Պետական և տեղային բյուջեներում ավելացնել հողագործության ժողովրդական կոմիսարիատների և հողային մար-

մինների նախահաշվով արվող բյուջետային հատկացումները:

բ) Ուժեղացնել հողագործական մարմինների պատասխանատու աշխատողների կազմը և համապատասխան գործկոմինների ուշադրությունը հրավիրել հողմարմինների ղեկավարների հաճախակի փոփոխման անթույլատրելիության վրա:


գ) Մշակել միջոցներ, ուժեղացնելու համար համապատասխան կրթական հաստատությունների կողմից գյուղատնտեսության մասնագետների հիմնական կատեգորիային պատկանող արձանագրաներ, մանավանդ գյուղատնտեսներ, հողադինարարներ, անասնաբուժներ և անտառաբույժներ տալու գործը, ուշադրություն դարձնելով այն բանին, վոր նրանք ծանոթանան գյուղացու կյանքի իրական պայմաններին:

դ) Մեծ ուշադրություն դարձնել ղեպի հողային մարմինների կազմն այնպիսի գյուղացիներ զրավելու վրա, վորոնք անմիջականորեն կապված են հողի հետ:

յի) Առաջնահերթ խնդիր համարել ագրոնոմիական, անասնաբուժական և հողաշնարարական շրջանների քանակը խոշորացրած վոլոստների քանակին հավասարեցնելու գործը:

զ) Հողմարմինների կապը գյուղացիության հետ իրական հողի վրա գնելու համար անհրաժեշտ և ուժեղացնել հողմարմինների աշխատողների մասնակցությունը գյուղացիական կոնֆերենցիաներին, հարկադրել, վոր նրանք պարբերաբար զեկուցումներ անեն վոլոստային (շրջանային) գործադիր կոմիտեներին ու գյուղական խորհուրդներին, փոխադարձ սերտ կապ հաստատել զավառամասային ազգոնոմիական կազմակերպության և գյուղատնտեսական կոռպերացիայի միջնվ և այլն:

25. Բոլոր այս ձեռնարկումներին զուրկնթաց, վորոնց նըստակին և բարձրացնել ու ամրացնել գյուղացիական տնտեսությունը, ավելացնել նրա յեկամուտը և բարելավել լայն գյուղացիական մասսաների նյութական զրությունը, պետք և սահմանել խիստ որինապահություն և ուժեղացնել բնակչության ընդհանուր կուլտուրական մակարդակը բարձրացնելու աշխատանքը: Անգրագիտության վերացումը, ինքնազործումներության բարձրացումը, աշխատանքի ասպարիզում կոլլեկտիվ սովորությունների ուժեղացումը, վորոն ամենից առաջ խորհրդային և կոոպերատիվ կազմակերպությունների առաջնահանագույն արագահամ հաջողության:



1. Գյուղացիական տնտեսության ամրացումը . . . . .	3
2. Հարկային բեռի թեթևվացումը . . . . .	4
3. Հողաշնարարության հարցեր . . . . .	6
4. Կոլլեկտիվ տնտեսություն . . . . .	8
5. Ինվենտարի լրացումն ու նորոգումը . . . . .	12
6. Գների կանոնավորումը . . . . .	14
7. Գյուղատնտեսության արտագրանքների արտահանությունը . . . . .	15
8. Պայքար անբերիության դեմ . . . . .	17
9. Արտոնություններ տնայնազործներին ու արհեստագործներին . . . . .	18
10. Գյուղացիության կոոպերացումը . . . . .	19
11. Կոոպերացիան և սոցիալիզմի կառուցումը . . . . .	22
12. Գյուղացիական վարկի կազմակերպումը . . . . .	23
13. Գյուղացիության կուլտուրական սակարգակի բարձրացումը . . . . .	26
14. Արտագրական ուժերի զարգացումը գյուղում . . . . .	27
15. Գյուղի նկատմամբ մեր վարելիք քաղաքականության հիմնական հարցերը . . . . .	30
16. Մեր քաղաքականության անհրաժեշտությունը գյուղացիության համար . . . . .	32
17. Արգյունաբերության շահերը . . . . .	34
18. Մեր քաղաքականության խորացումը . . . . .	37
19. Կուլակության աճումը և սոցիալիզմի զարկացումը . . . . .	42
20. Կոոպերացիան, Խորհրդային իշխանությունն ու ելեքտրականությունը . . . . .	47
21. Բանվորների և գյուղացիների զարինքը սոցիալիզմի համար մզկող պայքարում . . . . .	50
Տեղագրական խոռը . . . . .	53

Սեղմանական առողջապահության մասին օրենքը . . . . .



ԳԻՆՆ Ե 30 ԿՐՈ.